



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 123 2021

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրբեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 14.05.2021թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մուշեղ Արամյան, Անի Մեծումյան Կաշառքի՝ որպես կոռուպցիայի դրսևորման քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագիրը	3
Սևակ Պողոսյան Հանցագործության դրդիչի օրենսդրական բնորոշման կատարելագործման հարցեր	9

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Դավթյան Սեփականության ինստիտուտը իրավունքի փիլիսոփայության տեսանկյունից	13
--	----

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դավիթ Օհանյան Պայմանագրի տառացի մեկնաբանումը	17
--	----

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Վիրաբյան Իրավական կանխավարկածների հետազոտության իրականացման մեթոդաբանության ընտրության հարցի շուրջ	24
Հայկ Շահբազյան Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների հարաբերակցության մի քանի տեսանկյունները ժամանակակից հայեցակարգերի համատեքստում	31
Անահիտ Այվազյան Իրավասուբյեկտությունը՝ որպես իրավունքի սուբյեկտի անքակտելի որակական հատկանիշ	35
Լևոն Հարությունյան Իրավունքի աղբյուրների աստիճանակարգության խնդիրները	40

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գոռ Հովհաննիսյան Խնդիր՝ «Մարեք լույսերը»	44
Գևորգ Իսրայելյան Պոռնկությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվության և պատասխանատվությունից ազատելու որոշ հարցեր	52

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նազելի Սուքիասյան Հարկային պարտավորության իրավական առանձնահատկություններ	58
--	----

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լեոնիդ Նահապետյան Զինվորական հանցագործությունների ընդհանուր կանխարգելման հիմնախնդիրները	64
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts	69
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	80
--	----

ՄՈՒՇԵՂ ԱՐԱՄՅԱՆ

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ

ԱՆԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ

ԿԱՇԱՌՔԻ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գրականության մեջ տարածված է կարծիք, որ Եվրոպայում կոռուպցիան սկսվել է վաղ միջնադարում, որն իր հերթին կապվում էր ապրանքադրամական հարաբերությունների զարգացման, պետական ապարատում աշխատողների քանակի ավելացման հետ: Այս սոցիալական նեգատիվ երևույթի զարգացման նոր էտապը և դրա հասկացության ձևավորման փուլը համընկնում է Եվրոպայի տարածքում կենտրոնացված պետությունների և ներկայումս գոյություն ունեցող իրավական համակարգերի ծագելու պատմական ժամանակաշրջանի հետ:

Ժամանակակից իրավագիտության մեջ կոռուպցիոն գործողությունների շարքին կրիմինալիստները դասում են. ձեռնարկատիրական գործունեության մեջ ապօրինի մասնակցությունը, պաշտոնական լիազորությունների չարաշահումը, յուրացումը կամ վատնումը, խարդախությունը, շորթումը, հարկային հանցագործությունները և այլն: Սակայն կոռուպցիոն հանցագործությունների համակարգում ամենից հաճախ հանդիպում է կաշառքը՝ իրենից ներկայացնելով առավել ակնհայտ օրինակը կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների շարքում [1]:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ կոռուպցիան համալիր հասարակական երևույթ է, որի հիմքում ընկած են խորը սոցիալ-տնտեսական, քաղաքական, ինստիտուցիոնալ և բարոյա-էթիկական պատճառներ: Ներկայիս պայմաններում այս երևույթը դարձել է հասարակական զարգացման համակարգային սպառնալիքներից մեկը:

Կաշառակերությունը պետական ծառայության դեմ ուղղված առավել բարձր հանրային վտանգավորությամբ օժտված հանցագործություն է: Այն հեղինակագրվում է պետական իշխանությունը, ձևավորում նիհիլիստական (ժխտողական) վերաբերմունք պետական իշ-

խանության, օրենքի նկատմամբ: Կաշառակերությունը այնպիսի վտանգավոր կրիմինալ երևույթի միջուկն է, ինչպիսին է կոռուպցիան:

Կաշառքի՝ որպես կոռուպցիայի դրսևորման ձևի կրիմինալիստիկական բնութագիրը մեր կողմից ներկայացվում է որպես տվյալ հանցագործության կամ հանցագործություն կատարած անձի վերաբերյալ օրինաչափորեն փոխկապակցված, փոխկախված և կրիմինալիստիկական տեսանկյունից էական հատկանիշների վերաբերյալ տվյալների համակարգված համակցություն: Այդպիսի տվյալները ունեն գիտական մեթոդական նշանակություն կաշառքի քննության ու բացահայտման ժամանակակից մեթոդիկայում՝ դրսևորվելով որպես հանցագործության դիտարկվող կատեգորիայի, կոնկրետ դեպքի քննության փաստական տվյալների գնահատման մատրիցա:

Դատական և քննչական պրակտիկայում հանդիպող կաշառքի կատարման և հանցագործության հետքերը վերացնելու ձևերը, դրանց կատարման առավել հանդիպող տեղերը, կաշառք տալու կամ ստանալու հակվածություն ունեցող անձանց բնութագրող հատկանիշները և հանցագործության բացահայտման առումով էական այլ հատկանիշները հետազոտողները՝ քննիչը կարող է կոնկրետ քրեական գործի քննության արդյունքերի ավելի հավաստի և օբյեկտիվ գնահատական տալ, որոշել գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտման համար անհրաժեշտ հետագա քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական գործողությունների կատարման ուղղությունների, միջոցառումների բնույթը:

«Հանցագործության կրիմինալիստիկական բնութագիր» հասկացության բովանդակությունը ընդգրկում է ինչպես հանգամանքներ, որոնք կոնկրետ քրեական գործով ապացուցման առարկան են կազմում, այնպես էլ հանգամանքներ, որոնք դուրս են գալիս ապացուց-

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ, № 123 2021

ման առարկայի շրջանակներից, սակայն ունեն էական նշանակություն կաշառքի քննության համար, այսինքն՝ այնպիսի հանգամանքներ, որոնք ենթակա են հաստատման:

Կրիմինալիստիկական բնութագիր հասկացության տարրերի և ապացուցման առարկայի հանգամանքների միջև արտաքին տերմինաբանական նմանությունը չի վկայում այն մասին, որ վերջիններս որոշում են կրիմինալիստիկական բնութագրի բովանդակությունը, հանդիսանում են դրա կառուցվածքային տարրը: Քննվող հանցագործության կատարման տեղը, ժամանակը, կատարման եղանակը և այլ կողմերը բնութագրող և կոնկրետ քրեական գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները ենթակա են ապացուցման դրա քննության ընթացքում: Նույն հանգամանքները, որոնք կրիմինալիստիկական բնութագրի տարրեր են, քննության սկզբում արդեն իսկ պարզ են և ենթակա են օգտագործման հանգամանքները ապացուցելու շահին ծառայեցնելու համար: Նման տեսակետի են հետևում ռուս կրիմինալիստ գիտնականներից շատերը:

Ունենալով կաշառքի՝ որպես կոռուպցիայի դրսևորման ձևի ապացուցման առարկան կազմող հանգամանքների վերաբերյալ նախնական կրիմինալիստիկական տեղեկատվություն, նախաքննություն իրականացնող մարմինը կարող է որոշել քննության ուղղությունը և ծավալը, կրիմինալիստիկական բնութագիրը կազմող տարրերի իմացությունը նպաստում է կաշառքի քննության ու բացահայտման միջոցների և մեթոդների ճիշտ որոշմանը:

Այս առումով մենք համամիտ ենք Ա.Ն. Խալիկովայի «հանցագործության կրիմինալիստիկական բնութագիր» և «ապացուցման ենթական հանգամանքների շրջանակ» հասկացությունների հստակ տարանջատման անհրաժեշտությանը: Համեմատելով այդ կատեգորիաները՝ չպետք է մոռանալ, որ քննարկվող «բնութագրիչները» փոխառնված են գիտելիքների տարբեր ճյուղերից, իսկ ավելի կոնկրետ՝ քրեական դատավարությունից և կրիմինալիստիկայից, հետևաբար դրանցից յուրաքանչյուրը համապատասխանաբար ունի հետազոտման իր առարկան և իր յուրահատուկ խնդիրների հավակարգը: Մասնավորապես, ինչպես նշում է

Ի.Ա. Վոզգրինը, ապացուցման ենթակա հանգամանքները կրիմինալիստիկական բնութագրի տեսանկյունից հետազոտվում են դրանց դետալիզացիայի ճանապարհով, որը արտացոլում է ապացուցման առարկայի առանձնահատկությունները, իր հերթին նմանակերպ կոնկրետացում քրեադատավարական գիտությունը չի նախատեսում [2]:

Կաշառքը քննության բարդության տեսակետից ամենաբարդ հանցագործություններից մեկն է: Նախևառաջ այն հիմնականում կատարվում է առանց ականատեսների: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հանցագործության բոլոր մասնակիցները՝ կաշառք տվողը, կաշառք ստացողը և որոշ դեպքերում միջնորդը շահագրգռված են հանցագործության կատարման մեջ ու ձեռնարկում են բոլոր միջոցները սեփական հանցավոր վարքագիծը ու հանցադեպը թաքցնելու ուղղությամբ: Երկրորդ՝ քանի որ հանցագործության բոլոր մասնակիցները կրում են քրեական պատասխանատվություն, վերջիններս հիմնականում հրաժարվում են ճշմարտացի ցուցմունք տալուց՝ ստեղծելով նման դեպքերում յուրօրինակ փոխադարձ երաշխիքների համակարգ:

Կաշառքի՝ որպես կոռուպցիայի դրսևորման ձևի վտանգավորությունը հանգում է նրան, որ այն ուղղված է պաշտոնատար անձի նախապես կանխամտածած ոչ օրինաչափ վարձատրմանը, որը օբյեկտիվորեն հանգեցնում է պետական ամբողջ ապարատի տարրալուծմանը, նպաստում է ամբողջ պետական հավակարգի կոռումպացվածությանը, խարխուլում և վարկաբեկում է պետական իշխանության առանց այն էլ ոչ բարձր հեղինակությունը հասարակության մեջ: Կաշառակերությունը իր մեջ ներառում է կաշառքի ստացումը պաշտոնատար անձի կողմից, կաշառք տալը և որոշ դեպքերում միջնորդությունը, որը իր սեփական իմաստով չի համարվում պաշտոնեական հանցագործություն, քանի որ կարող է կատարվել նաև ոչ պաշտոնատար անձի կողմից: Ելնելով վերոնշարադրյալից՝ կարելի է ենթադրել, որ կաշառքի ստացման հետ միաժամանակ կաշառք տալը և միջնորդությունը կազմում են անհրաժեշտ «համակատարում»՝ կրիմինալիստիկական իմաստով: Վերոնշյալ սուբյեկտներից յուրաքանչյուրի հանցավոր ոտնձգությունը

նը չի կարող կատարվել ինքնըստինքյան մյուսներից անկախ, այլ կապակցված են միմյանց հետ: Հետևաբար դրանցից յուրաքանչյուրի հարաբերակցությունը մեկը մյուսի հանդեպ պայմանականորեն կազմում են «անհրաժեշտ համակցություն» եզրույթը, որի դեպքում կաշառքը տալու փաստի բացակայությունը ենթադրում է նաև վերջինիս ստացման փաստի բացառում:

Խոսելով կաշառակերության՝ որպես կոռուպցիայի ամենալուրջ դրսևորումներից մեկի մասին, որը պաշտոնատար անձանց կողմից շահադիտական նատակներով կատարվող հանցագործության առավել վտանգավոր տարատեսակ է, անհրաժեշտ է մանրամասն դիտարկել այս երևույթը կազմող առավել բուխագրիչ և սպեցիֆիկան արտացոլող տարրերը՝

- հանցագործության կատարման տիպային իրավիճակները,
- հանցագործի անձը,
- հանցավոր ոտնձգության առարկան,
- հանցագործության հետքերը,
- հանցագործության կատարման եղանակը:

Նշված տարրերի շարքին են դասվում նաև կաշառքի մասին ելակետային տվյալները և ելակետային քննչական իրավիճակները:

Կաշառքի վերաբերյալ քրեական գործի հարուցման հարցը լուծելու կապակցությամբ էական կրիմինալիստիկական նշանակություն ունի կաշառքի վերաբերյալ ելակետային տեղեկատվության ուսումնասիրությունը, համակարգումը: Ելակետային տեղեկատվությունը իրենից ներկայացնում է հանցագործության կատարմանը և հանցավոր արարքի հետքերը թաքցնելուն ուղղված, հավանական հանցագործի անձը և արարքի հավանական դրդապատճառները բնութագրող, տուժողի անձին վերաբերող, հանցանքի կատարման որոշ այլ հանգամանքների (հանցագործության կատարման տեղ, ժամանակ, կատարման եղանակ և այլն) վերաբերյալ տվյալների համակարգ:

Որպես կանոն, քրեական գործի հարուցման հարցի լուծումը ուղղակիորեն կախված է կաշառքի վերաբերյալ ստացված կամ համակարգված տեղեկատվության որակից և ամբողջականությունից, որի ապահովումը նման տեղեկատվության ստուգման սկզբնական փու-

լում իրավապահ մարմինների աշխատակիցների հիմնական խնդիրներից է [3]:

Կաշառքի բացահայտման համար մեծ նշանակություն կարող են ունենալ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացրած մարմնի կողմից նկարահանված լուսանկարները, որոնցով ընդգծվում է կաշառք տվողի և կաշառք վերցնողի կամ միջնորդի հանդիպումը, կաշառքի առարկայի փոխանցման պահ և այլն:

Կաշառքի գործերով ապացուցման առարկայի առանձնահատկությունը, ինչպես նաև քննության ու բացահայտման մեթոդաբանական դժվարությունները պայմանավորված են հանցագործության այս տեսակի առանձնահատկություններով:

Եթե կաշառքը կրում է բազմաէպիզոդ բնույթ, ապա առանձին էպիզոդների քննությունը նույնպես լրացուցիչ բարդություն է ներկայացնում իրենից: Խնդրահարույց իրավիճակը բարդացնում է նաև այն, որ այս հակաիրավական արարքը հաճախ ուղեկցվում է կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների կատարմամբ: Վերոնշյալ ու այլ հանգամանքների առկայությունը նշանակալի չափով դժվարացնում է քննության և ապացուցման գործընթացը ամբողջության մեջ և առանձին քննչական գործողությունների կատարումը մասնավորապես:

«Քրեական դատավարության օրենսգրքում առանձնացված է քննչական գործողությունների համակարգը և հանցագործությունների քննության ժամանակ դրանց կիրառման դատավարական կարգն ու պայմանները: Կրիմինալիստիկական գրականության մեջ դրանք դասակարգվում են տարբեր հիմքերով, մասնավորապես՝ հաշվի առնելով քննության փուլերը, դրանց միջոցով ապացուցողական ինֆորմացիայի ստացման մեթոդների, միջոցների և եղանակների առանձնահատկությունների հաշվառումը: Ինչպես հայտնի է, որոշ քննչական գործողություններ ուղղված են նյութապես արտացոլվող տեղեկությունների ստացմանը (դեպքի վայրի զննություն, խուզարկություն, ձերբակալում, ազգրավում և այլն), մյուսները բնութագրվում են կրիմինալիստիկայի տեսանկյունից նշանակալի վերբալ տեղեկատվության ստացմամբ (հարցաքննություն, առերեսում,

ցուցմունքների ստուգումը դեպքի վայրում և այլն):

Իրավաբանական գրականության մեջ հաճախ վերոնշյալ գործողության պրակտիկայում կատարման տիպային տակտիկական թերություններ են մատնանշվում, մասնավորապես՝

1. որոշ դեպքերում ընդհանրապես դեպքի վայրի զննություն չի իրականացվում, չնայած վերջինիս իրականացման տակտիկական հնարավորությունների ու հավանական դրական արդյունքի մասին արդեն իսկ խոսվել է:

2. Որոշ դեպքերում դեպքի վայրի զննության կատարման և կաշառք տալու կամ ստանալու վերաբերյալ հաղորդման մեջ առկա է ժամանակային խզում, ընդ որում, նման փաստերը երբեմն հիմնավորվում են իբր տակտիկական նկատառումներից ելնելով (նախապատրաստման ուղղված անհրաժեշտ գործողությունների կատարմամբ): Այս պարագայում տակտիկապես գրագետ է ժամանակային խզում չթույլատրելը, քանզի դանդաղումը կարող է հանգեցնել հանցագործության հետքերի ձևփոխմանը, թաքցնելուն և, ի վերջո, բացառմանը:

3. Որոշ դեպքերում արձանագրության մեջ բացակայում են կիրառված կրիմինալիստիկական տեխնիկական միջոցների (տեսաձայնագրառման սարքեր, հետքերի հայտնաբերման և ֆիքսման սարքեր) իդենտիֆիկացնող տվյալների վերաբերյալ նշումները [4]:

Կաշառքի գործերով հետագա քննչական գործողություններն են վկաների հարցաքննությունը, փորձաքննությունների նշանակումը, մեղադրյալների հարցաքննությունը և այլն: Քննության որոշակիացման տեսանկյունից կարող են իրականացվել փաստաթղթերի, տարբեր տեսակի պաշտոնական գրությունների զննումը, որոնք ինչ-որ ձևով արտացոլում են կաշառք վերցնողի ծառայողական գործունեությունը, կոնկրետ իրավիճակների ուսումնասիրում, որոնց պարագայում տեղի է ունեցել հանցագործության մասնակիցների հանդիպումը, կաշառքի առարկայի փոխանցումը և այլն, հանցագործության մասնակիցների պայմանավորվածության ուսումնասիրումը, վկաների և մեղադրյալների հարցաքննությունը:

Պրակտիկայում նախնական քննության փուլում առավել բարդ իրավիճակ է ստեղծվում այն ժամանակ, երբ օպերատիվ հետախուզա-

կան միջոցառման կիրառման փաստացի կամ իրավական հիմքը բացակայում է: Կաշառք ստացողները քաջ գիտակցում են իրենց գործողությունների (անգործության) հանրային վտանգավորության աստիճանը և ձեռնարկում են բոլոր միջոցառումները, որպեսզի խուսափեն քրեական պատասխանատվությունից: Նման պարագայում հաճախ կասկածյալի հարցաքննությունը իրականացվում է հանցագործության վերաբերյալ տեղեկությունների ոչ բավարար հիմքի վրա, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս կասկածյալին հրաժարվելու իրեն մեղսագրվող արարքի կատարման վերաբերյալ ցուցմունքներ տալուց:

Կաշառքի քննության բարդ խնդիրներից մեկը հանցագործության դրվագների և անդամների բացահայտումն է նաև: Դրա համար խորհուրդ է տրվում ուսումնասիրել կասկածյալների (մեղադրյալներ) կենսագործունեությունը, որպեսզի բացահայտվի այն ժամանակաշրջանը, որում վերջինի նյութական ապահովության մակարդակը գերազանցում է նրա օրինական եկամուտները: Այդ նպատակով իրականացվում են նրա բանկային հաշիվների որոնումներ, մեղադրյալի և նրա ընտանիքի անդամների ունեցվածքի գնահատում, նրա ընտանիքի սովորական ծախսերի պարզում և այն ժամանակահատվածի որոշում, երբ եկամուտների և ծախսերի մակարդակը բարձրանում է: Մի շարք սուբյեկտներ թաքցնում են իրենց ծախսերը՝ իրենց գումարները ներդնելով գաղտնի գործարքների մեջ, այլ անձանց անունով գույք կամ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելով:

Ամփոփելով վերաշարադրյալը՝ անհրաժեշտ է ևս մեկ անգամ նշել, որ կաշառակերությունն իրենից ներկայացնում է կոռուպցիայի «միջուկը»՝ լինելով վերջինիս ծայրահեղ բացասական և տարածված դրսևորման ձևը: Կոռուպցիան նպաստում է պետական իշխանության քայքայմանը, հասարակակության մեջ վերջինիս հեղինակության նվազմանը և, ի վերջո, նիհիլիստական վերաբերմունքի ամրապնդմանը, հասցնում է նյութական ահռելի վնասներ: Պետական իշխանության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մշակման ու կենսագործման պայմաններում կաշառքի բացահայտման ու քննության մեթոդիկայի

և գործնական ցուցումների մշակումը ներկայումս խիստ արդիական է՝ իրավապահ մարմինների առջև դրված խնդիրներին օպտիմալ լուծում տալու նկատառումով:

Ուսումնասիրության արդյունքում կաշառքի քննության մեթոդիկայի վերաբերյալ կարելի է առանձնացնել տեսական եզրակացություններ և գիտագործնական հրահանգներ, մասնավորապես՝

1. *Կոռուպցիա* հասկացությունը ունի ընդգրկուն բնույթ և ավելի լայն իմաստ, քան *կաշառքը* կամ *կաշառակերությունը*: Ներպետական պոզիտիվ իրավունքում չունենալով նորմատիվ ձևակերպում՝ նշված հասկացության իմաստը բացահայտվել է միջազգային իրավական ակտերում: Կոռուպցիան պաշտոնատար անձանց և համանման ազդեցություն ունեցող այլ անձանց կողմից իշխանական լիազորությունների՝ շահադիտական նպատակներով, հակառակ ծառայության, հասարակության և պետության շահերի օգտագործմանն ուղղված գործողությունների բազմաշերտ և բարդ համակարգ է: Դրա դրսևորման ձևերը տարբեր են և իրենցից ներկայացնում են էթիկական, սահմանադրական, վարչաիրավական, ֆինանսական, քրեաիրավական, քրեադատավարական և այլ նորմերի խախտում, որոնք իրականացվում են պետաիշխանական լիազորությամբ օժտված մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Այս երևույթը հաճախ բնութագրվում է նաև իշխանությունների «ծախվածություն» բնորոշմամբ, վերջինիս ամենաակնհայտ դրսևորումներից մեկը հանդիսանում է կաշառակերությունը:

2. Կաշառքի կրիմինալիստիկական բնութագրի համար, որպես վերջինիս առանձնահատկությունը արտացոլող առաջնային տարրեր են՝ հանցավոր ոտնձգության առարկան, հանցագործության կատարման եղանակը, հանցագործության կատարման տիպական իրավիճակները, հանցագործի անձը, հանցագործության հետքերը և այլն:

3. Կաշառքի վերաբերյալ հանցագործությունների բացահայտման վերաբերյալ պրակտիկական վկայում է այն մասին, որ նմանաբնույթ հանցագործությունների քննության ծրագրավորումը տեղի է ունենում ոչ պատշաճ մակարդակով:

4. Կոռուպցիոն հանցագործությունների քննության ժամանակ ինֆորմացիայի պակասի հետևանքով նման տեղեկատվության աղբյուրների բացահայտման ուղղությամբ ամենաարդյունավետ միջոցներից է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ բացահայտումը: Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում կիրառելու և դրա արդյունքների՝ հետազայում արդյունավետ օգտագործման հնարավորությունը ուղղակիորեն կախված են նախաքննության մարմինների և օպերատիվ հետախուզական գործունեության իրավունք ունեցող մարմինների միջև փոխգործակցության պատշաճ մակարդակից:

5. Անհրաժեշտ է փաստել պրակտիկ աշխատողների մոտ տեխնիկակրիմինալիստիկական միջոցների ամբողջությամբ կամ մասամբ բացակայությունը՝ որպես խնդիր: Միաժամանակ հանցագործության այս տեսակի քննության և արդյունքների դատավարական ամրագրման առումով առկա է օբյեկտիվ անհրաժեշտություն քննություն իրականացնող մարմինների կողմից տեխնիկական միջոցների և հատուկ գիտելիքների կիրառումը: Փաստական տվյալները, որոնք կարող են ստացվել գիտատեխնիկական մեթոդների և միջոցների կիրառմամբ, դրանց տակտիկապես գրագետ կազմակերպված առանձնացումը և ֆիքսումը կարող են դառնալ ապացուցողական զանգվածի էական տարրեր: Ապացուցման ենթական հանգամանքների շարքում իրենից առավել բարդություն է ներկայացնում «հանցակցության» և կաշառքի առարկայի փոխանցման փաստը ապացուցելն այն իմաստով, որով հիշատակվել է վերոշարադրյալում: Նշված հանգամանքների ապացուցման բարդությունը հիմնականում արդյունք է քննիչների մոտ նմանաբնույթ գործեր քննելու փորձի պակասի, վկաների կողմից ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու հանգամանքի, կեղծ այլուրեքության կամ սուտ մատնության, կամ հանցավոր դեպքը թաքցնելուն ուղղված տարաբնույթ միջոցների կիրառման:

6. Կաշառքի քննության առանձնահատկությունը կապված է հանցագործության հատուկ սուբյեկտային կազմի հետ, որն էլ նախորոշում է հնարավորությունը վերջիններիս կող-

մից քննության ընթացքը խոչընդոտելու կամ արգելքներ ստեղծելու ուղղությամբ: Ամենատարածված հնարքներից են հանցագործության հետքերի թաքցնումը, դատավարության մասնակիցների վրա ճնշում գործադրելը, կեղծ այլուրեքության ստեղծումը և այլն: Նման հնարավոր հակազդեցությունը ենթադրում է գործողությունների ամբողջական համակարգ, որը ուղղված է հանցանք կատարած անձին բացահայտելուն, նախազգուշացմանը և չեզոքացմանը:

7. Կաշառքի գործերով ապացուցողական

զանգվածի հիմքը կազմում են հանցագործության նյութական ու իդեալական հետքերը: Քննիչի կողմից կրիմինալիստիկական մեթոդների գրագետ օգտագործման պարագայում և տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների օգտագործումը վերջնական արդյունքում նպաստում են ոչ միայն կրիմինալիստիկական նշանակություն ունեցող ինֆորմացիայի համալրմանը և ամրապնդմանը, այլև նման անձանց հնարավոր հակազդեցության և կանխարգելող միջոցառումների մասին ծրագրավորման հիմքում դրվող տեղեկատվության աղբյուր է:



ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դրոյի է համարվում այն անձը, ով մեկ ուրիշ անձի դրդել է հանցանք կատարելու՝ հանդգելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով»:

Դրդչությունն առկա է այն դեպքում, երբ անձը արարք է կատարում՝ այլ անձի մեջ հանցանքի կատարման դիտավորություն, ցանկություն առաջացնելու համար:

Դրդչության համար անհրաժեշտ է, որ անձն իր արարքներով կոնկրետ անձի մեջ կոնկրետ հանցանքը կատարելու դիտավորություն առաջացնի: Ուստի դրդչություն չեն կարող համարվել անորոշ շրջանակի անձանց հանցագործության հակելը, հանցանք կատարելու հրապարակային կոչերը, հանցանքներ կատարելու քարոզչությունը, այս կամ այն հանցագործության նրբությունները, եղանակները սովորեցնելը, անձի անբարենպաստ ազդեցությունն այլ անձի վրա՝ թեկուզև դրա ազդեցությամբ վերջինս հանցանք կատարի և այլն:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում դրդչի արարքը կարող է պարունակել ինքնուրույն հանցակազմ, և այդ դեպքում առկա է իդեալական համակցությունը, ինչը հնարավոր է հետևյալ իրավիճակներում.

1) Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում է այն դեպքը, երբ որպես դրդչության եղանակ՝ օգտագործվում է բռնությունը, սպանությունը կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը: Այս պարագայում հանցավորի արարքը որակվում է որպես մարդու դեմ ուղղված համապատասխան հանցագործություն և որպես մեկ այլ հանցագործության դրդչություն¹, եթե, իհարկե, գործադրված սպառնալիքը չի բացառում դրա ազդեցությամբ կատարված արարքի հանցավորությունը:

Կարծում ենք, որ արարքը համակցությամբ որակելը այս պարագայում ճիշտ չէ: Բանն այն է, որ նշված սպառնալիքները դրդչության միջոց են և ամենակարևորը՝ ընդգրկվում են դրա բովանդակության մեջ. չէ՞ որ սպառնալիքը դրդչության օրենսդրական բնորոշման մեջ արդեն իսկ նշվում է: Ուստի կրկնակի դատապարտման արգելքի վերաբերյալ սկզբունքը չխախտելու համար, այն դեպքերում, երբ դրդչության միջոցը զուտ հանցագործությանը դրդելու միջոց է, և այլ նպատակներ չի հետապնդում, ապա, կարծում ենք, արարքը չպետք է որակել համակցությամբ: Այլ հարց է, երբ սպառնալիքներ ներկայացնողը նպատակ է հետապնդում ոչ միայն հանցագործության դրդել մեկ ուրիշին, այլև իրագործել այլ նպատակներ, օրինակ, նաև ահաբեկել այդ անձին: Նման դեպքերում արարքը պետք է որակել համակցությամբ: Իհարկե, այլ նպատակի առկայությունը պետք է ապացուցվի:

2) Երբ որպես դրդչության եղանակ օգտագործվում է կաշառք տալը, օրինակ՝ երբ անձը կաշառք է տալիս պաշտոնատար անձին իր օգտին որևէ հանցանք կատարելու համար, իսկ վերջինս վերցնում է կաշառքը և կաշառք տվողի օգտին կատարում է այդ հանցանքը: Փաստորեն, կաշառք տվողը, նյութապես շահագրգռելով, դրդում է հանցագործության: Նման դեպքերում կաշառք տվողի արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ կաշառք տալ և կոնկրետ հանցագործության դրդչություն, քանի որ կաշառք տալով անձը պաշտոնատար անձին հանցագործության դրդելուց զատ նաև սեփական շահն է հետապնդում:

3) Երբ դրդիչը հանցագործության կատարման է ներգրավում տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տա-

● ՕՐԵՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, № 123 2021

¹ Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, Եր., 2020, էջ 319:

րիքի հասած անչափահասի: Քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի կողմից հանցանքը կատարելու դեպքում դրդիչի արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 165-րդ հոդվածի համապատասխան մասով և որպես այն հանցագործության դրդչություն, որի կատարմանը դրդել է տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անչափահասին:

Կարծում ենք, որ այս դեպքում էլ խախտվում է կրկնակի դատապարտման արգելքը: Փաստորեն անձը երկու անգամ պատասխանատվության է ենթարկվում դրդչության համար: Մեր կարծիքով, հարցի ճիշտ լուծում կլինի հոդված 165-ով նախատեսված արարքը ապաքրեականացնելը և նման դեպքերը զուտ դրդչություն որակելը:

4) Երբ պաշտոնատար անձի կողմից որպես դրդչության եղանակ է օգտագործվում ակնհայտ ապօրինի հրամանը կամ կարգադրությունը, որը հանցավոր բնույթ ունի: Այն դեպքում, երբ պաշտոնատար անձն իր ենթակայի կողմից հանցանքը կատարելու համար վերջինիս տալիս է ապօրինի հրաման կամ կարգադրություն, ով գործում է՝ գիտակցելով այդ հրամանի (կարգադրություն) ապօրինի և հատկապես հանցավոր լինելը, պաշտոնատար անձի արարքը, բացի համապատասխան հանցագործության դրդչությունից, համակցությամբ պետք է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 308-րդ (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) կամ 309-րդ (պաշտոնեական լիազորություններն անցնելը) հոդվածով:

5) Երբ անձը շորթման ժամանակ պահանջում է գույքը տիրապետողին իրեն հանձնել երրորդ անձին պատկանող գույքը, այսինքն՝ իրականացնել հափշտակություն: Նշված դեպքում, եթե գույքը հանձնվի նրան, ապա նրա արարքը պետք է որակվի որպես շորթում և հափշտակության համապատասխան եղանակի դրդչություն:

Փաստորեն, այն դեպքերում, երբ դրդչությունն իրենից քրեական օրենսգրքով նախա-

տեսված մեկ այլ հանցանք է ներկայացնում, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ, իհարկե, մեր կարծիքով, միայն այն դեպքերում, երբ բացառվում է կրկնակի դատապարտումը:

Դրդչության հետ կապված մեկ այլ վիճելի հարց է ընդհանրապես հանցակցության սուբյեկտիվ հատկանիշներից մեկի, այն է՝ փոխադարձ սուբյեկտիվ կապի հարցը: Քրեական իրավունքի տեսության մեջ սրա վերաբերյալ ձևավորվել է երկու, կարելի է ասել, նույնիսկ երեք կարծիք: Քրեագետների մի մասն այն կարծիքին է, որ հանցակցությանը բնորոշ է միայն երկկողմանի սուբյեկտիվ կապը²: Մյուսները գտնում են, որ այն պարտադիր է միայն համակատարման դեպքում, իսկ մյուս դեպքերում հնարավոր է նաև միակողմանի սուբյեկտիվ կապը³: Վերջապես, կան քրեագետներ, որոնք կարծում են, որ բավարար է միայն միակողմանի սուբյեկտիվ կապը⁴: Պարզ ասած, հնարավոր են արդյոք իրավիճակներ, երբ կատարողը չի գիտակցում, որ իրեն հանցակցում են (հնարավոր չէ, որ կատարողին հանցակցողը չգիտակցի այդ մասին): Կարծում ենք, որ սուբյեկտիվ կապը կարող է լինել նաև միակողմանի, երբ խոսքը կատարողի և օժանդակողի կամ կատարողի և դրդիչի մասին է, օրինակ՝ անձը տեղեկանում է, որ հափշտակություն է նախապատրաստվում պահեստից և կատարողին օգնելու նպատակով, առանց նրա հետ համաձայնեցնելու, նախօրոք անջատում է պահեստի ազդանշանային համակարգը: Կատարողն առանց որևէ խոչընդոտի հանդիպելու կատարում է հափշտակությունը: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակել կատարողին օգնող անձի արարքը. չէ՞ որ փոխադարձ սուբյեկտիվ երկկողմանի կապը բացակայում է: Շատերն առաջարկում են արարքը որակել որպես հանցագործության նախապատրաստություն: Բայց չէ՞ որ նախապատրաստության դեպքում հանցագործությունը չի ավարտվում անձի կամքից անկախ հանգամանքներով, մինչդեռ այս դեպքում հանցագործությունն ավարտվում է հենց

² Տե՛ս, օրինակ, Иванов Н. Г., Понятие и формы соучастие в советском уголовном праве. Саратов, 1991, էջ 89:

³ Տե՛ս, օրինակ, Бурчак Ф. Г., Соучастие в преступлений по советскому уголовному праву. М., 1965, էջ 42-45, Трайнин А. Н., Учение о соучастии. М., 1941, էջ 67:

⁴ Տե՛ս Козлов А. П. Соучастие: Традиции и реальность. СПб., 2001, էջ 31:

կատարողին օգնողի կամային ջանքերի շնորհիվ: Ուստի կարծում ենք, որ որոշ դեպքերում, երբ խոսքը դրդիչի և կատարողի, օժանդակողի և կատարողի մասին է, ապա կարող է նաև բավարար լինել միակողմանի սուբյեկտիվ կապը:

Անդրադառնանք դրդիչին, քանի որ այս դեպքում միակողմանի սուբյեկտիվ կապը նրբություն ունի: Հարց է ծագում. արդյոք կատարողը կարող է հանցանք կատարել՝ չկասկածելով, որ հանցագործությանը մասնակցում է նաև դրդիչը, այնպես, ինչպես դա օժանդակողի պարագայում է: Օրինակ՝ լավ իմանալով անձին, նրա բնավորության գծերը, ագրեսիվությունը, դյուրագրգռությունը, բռնություն գործադրելու հակվածությունը՝ դրդիչը նրան պատմում է ապագա տուժողի՝ այդ անձի մասին արված բացասական արտահայտությունների մասին, կամ կեղծ տեղեկություններ է հաղորդում ապագա կատարողին ինչ-որ վատություն անելու՝ տուժողի նախապատրաստվելու մասին՝ այն հաշվով, որ վերջինս այդ տեղեկությունների ազդեցության ներքո կվնասի ապագա տուժողին: Հաշվի առնելով այն, որ դրդիչի հասկացության մեջ նշվում է նաև «... կամ այլ եղանակով» արտահայտությունը, ինչը վկայում է այն մասին, որ դրդչության եղանակների սպառիչ ցանկ չկա՝ վերը նկարագրված եղանակով դրդչությունը լիովին հնարավոր է: Պետք է նաև նկատի ունենալ, որ Էդ. Ադայանի բացատրական բառարանում *դրդել* նշանակում է նաև *ներշնչել*⁵: Նման տեսակետ է արտահայտվել նաև տեսության մեջ, որտեղ նշվում է, որ դրդչությունը կարող է իրականացվել նաև խանդի, վրեժի զգացում առաջացնելով և այլն⁶: Պարզապես նման դեպքերում դրդչությունն ապացուցելը, այն հանգամանքը ապացուցելը, որ անձը մեկ ուրիշին ուղղակի դիտավորությամբ դրդում էր հանցանք կատարելու, անչափ դժվար է, բայց, իհարկե, անհնար չէ, օրինակ՝ կարելի է հաշվի առնել նախկինում տվյալ անձի, այսինքն՝ ապագա կատարողի դրսևորած վար-

քագիծը՝ նրան որոշակի գործողության կատարմանը հակելը դրդողի կամ այլ անձի ազդեցության ներքո և այլն: Նշենք նաև, որ դրդիչը կարող է գործել նաև անորոշ դիտավորությամբ, օրինակ՝ չկոնկրետացնելով, թե տվյալ դեպքում ինչ տեսակի հանցանքի է դրդում: Վերը նկարագրված դեպքում, եթե ապացուցվի, որ դրդիչը հակում էր ապագա տուժողի նկատմամբ որևէ տեսակի բռնություն գործադրելու, ապա նրա արարքը պետք է որակվի որպես փաստացի կատարված հանցագործության դրդչություն:

Դրդիչի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև, որ դրդչությունն առկա է այն դեպքում, երբ հանցագործության են դրդում քրեական պատասխանատվության ենթակա անձին: Եթե հանրավտանգ արարքի են դրդում այնպիսի անձի, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ արարքը կատարում է՝ դրա սոցիալական նշանակությունը չգիտակցելով, և դրդողը գիտակցում է դա, ապա առկա է հանցագործության միջնորդավորված կատարում: Եթե դրդողը չի գիտակցում, որ հանրավտանգ արարքի է դրդում այնպիսի անձի, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության, ապա, մեր կարծիքով, նա պետք է պատասխանատվության ենթարկվի դրդչության փորձի համար: Դրա համար էլ քրեական իրավունքի տեսության մեջ առաջարկվել է *դրդիչի* հետևյալ բնորոշումը. «դրդիչ է համարվում այն անձը, որը հանցագործության է հակում այնպիսի անձի, որն ակնհայտորեն ենթակա է քրեական պատասխանատվության»⁷: Կարծում ենք, որ նման բնորոշումը ավելի ճիշտ է արտահայտում դրդչության էությունը, սակայն բավարար չէ:

Դրդչության հասկացության մեջ պետք է արտացոլվի նաև միջնորդավորված դրդչության, որն, ի դեպ, արված է քրեական նոր օրենսգրքի նախագծում, և մյուս իրավիճակը:

Իրենից հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյոք հնարավոր է դրդչու-

⁵ Տե՛ս Էդ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրտ., Եր., 1976:
⁶ Տե՛ս Мирзоян Валентина Георгиевна, Понятие подстрекательства к совершению преступления в УК Российской Федерации и зарубежных стран, file://C:/Users/DEll/Downloads/ponyatie-podstrekatelstva-k-soversheniyu-prestupleniya-v-uk-rossiyskoy-federatsii-i-zarubezhnyh-stran.pdf
⁷ Տե՛ս Васюков В. В., Виды соучастников в Уголовном праве России., Автореф., дисс., на соиск. учен., степени канд., юрид., наук., СПб, 2008, էջ 7:

թյունն անգործությամբ: Տարածված կարծիքն այն է, որ դա հնարավոր չէ⁸: Կարծում ենք, սակայն, որ դա հնարավոր է: Ճիշտ է այս դեպքում ապացուցման դժվարություններ կարող են լինել, բայց ոչ անհնարինություն, օրինակ՝ պահեստի մոտ գտնվում է մի անձ, որը հայտնի է որպես փորձված գող: Պահեստի պահակը, որը գիտի դա, ճանաչում է նրան և որոշ պատճառներով ցանկանում է, որ նա պահեստից գողություն կատարի, դիտավորությամբ և ցուցադրաբար հեռանում է՝ այդ մարդու մեջ պահեստից գողություն կատարելու դիտավորություն, ցանկություն առաջացնելով:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք դրդիչի հետևյալ բնորոշումը. «Դրդիչ է համարվում այն անձը, որը համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ ե-

ղանակով հանցագործության է հակում այնպիսի անձի, որն ակնհայտորեն ենթակա է քրեական պատասխանատվության: Դրդիչ է համարվում նաև այն անձը, որը հրահրել է դրդչության քրեական պատասխանատվության ենթակա անձին կամ մեկ ուրիշին հանցանք կատարելու՝ այդ նպատակով գիտակցաբար օգտագործելով այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործել է անզգուշությամբ: Եթե անձը մեկ ուրիշին դրդել է հանցանք կատարելու, սակայն չի գիտակցել, որ դրա համար օգտագործում է այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործում է անզգուշությամբ, ապա պատասխանատվության է ենթարկվում դրդչության փորձի համար»:



⁸ Ст'и Спасович В.Д., Учебник уголовного права: Вып. 1. СПб., 1863, էջ 173, Тельнов П.Ф., Ответственность за соучастие в преступлении., М., 1974, էջ 89, 11. Гаухман Л.Д., Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2001, էջ 216:

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Սեփականության իրավունքը մարդու բնական և անօտարելի իրավունքն է, հետևաբար դրա երաշխավորված պաշտպանությունը պետության և նրա ինստիտուտների կարևոր գործառույթներից է: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ մինչև 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին կայացած խաղաղ, թավշյա հեղափոխությունը, սեփականության պաշտպանության խնդիրը մեր երկրում բավարար չի եղել: Այսպես՝ 2019 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրել է 20 վճիռ ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ, որից 12-ը վերաբերում է Երևանի Բյուզանդի փողոցի քաղաքացիների օրինական իրավունքների մասսայական խախտումներին:

Այս ամենը վկայում են սեփականության և սեփականության իրավունքի գիտական հետազոտությունների անցկացման անհրաժեշտությունը և արդիականությունը, այդ թվում՝ փիլիսոփայության տեսանկյունից:

Ընդհանրապես սեփականությունը կազմում է յուրաքանչյուր հասարակարգի հիմքը, հետևաբար առանց սեփականության որոշակի ձևի ոչ մի մարդկային համայնք գոյություն ունենալ չի կարող:

Ինչպես նշեցինք, սեփականությունը նաև փիլիսոփայության հետազոտության օբյեկտ է, որի ընթացքում հայտնի փիլիսոփաները փորձել են հասկանալ սեփականության էությունը, նրա սոցիալական նշանակությունը, տեղն ու դերը ժամանակակից իրավական համակարգերում:

Ընդհանրապես փիլիսոփայությունը սեփականությունը և սեփականության իրավունքը ուսումնասիրում է ֆիզիկական, սոցիալական և հոգևոր աշխարհի կեցության և մտածողության և այլնի համընդհանուր օրինաչափությունների հետազոտման համատեքստում:

Այսպես՝ Հին Հունաստանի փիլիսոփա Պլատոնը (427-347 մ.թ.ա.) ընդհանրապես մերժում էր մասնավոր սեփականությունը, սակայն արդարության տեսանկյունից գտնում էր, որ «Արդարությունը նրանում է, որպեսզի յուրաքանչյուրն ունենա իրենը և կատարի նույնպես իրենը», ինչպես նաև «ոչ ոք չզավթի ուրիշինը և չզրկվի իր ունեցվածքից»¹:

Ի տարբերություն Պլուտոնի՝ Արիստոտելը (384-322 մ.թ.ա.) կողմնակից էր մասնավոր սեփականությանը և գտնում էր, որ սեփականությունը բնական է ցանկացած հասարակությունում: Ըստ Արիստոտելի՝ պետության հիմնական գործառույթներից են Պոլիսի (քաղաք-պետություն) քաղաքացիների անվտանգության և սեփականության (գույքի) ապահովումը, քաղաքացիների գերհարստացման և քաղաքական իշխանության ուռճացման կանխարգելումը, ստրուկներին հնազանդության մեջ պահելը և այլն²:

Սեփականության, այդ թվում մասնավոր սեփականության իրավունքի վերաբերյալ ամբողջական տեսական ուսմունքը (հայեցակարգ) մշակվել է Հին Հռոմի իրավաբանների կողմից³: Այս տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել, որ հռոմեական իրավաբանական միտքը հենվում էր հին հունական փիլիսոփայության հիմնադրույթների վրա: Հին հռոմեացիների կողմից մշակված մասնավոր իրավունքի, այդ

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

¹ Տես Պլատոն, Երկեր չորս հատորով: Կ. IV, հին հունարենից թարգմ. և ծնթ.: Սերգեյ Ստեփանյանի, Եր., 2017:
² Տես Միլլոմյան Կ. Քաղաքական ուսմունքների պատմություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., 2006, էջ 76:
³ Մանրամասն տե՛ս Римское право.М., 1990.

թվում՝ սեփականության և գույքի տիրապետման մասին ուսմունքը էական նշանակություն ունեցավ իրավունքի (քաղաքացիական իրավունք) հետագա զարգացման վրա, ընդհուպ մինչև ներկա ժամանակաշրջանը:

Հռոմեական իրավաբանների ջանքերով ստեղծված քաղաքացիական, այդ թվում սեփականության իրավունքի ուսմունքը դարձավ ամբողջ իրավաբանական գիտության և քաղաքացիական օրենսդրության հետագա զարգացման հիմքը⁴:

Միջնադարյան և նոր ժամանակաշրջանի Արևմտյան Եվրոպայի իրավաբանական միտքը և իրավունքի փիլիսոփայությունը զարգացել է հռոմեական իրավագիտության նկատելի ազդեցության ներքո: Այս առումով գտնում ենք, որ անհրաժեշտ է հանգամանորեն կանգ առնել Հեգելի (1770-1831թթ.) իրավունքի փիլիսոփայության համակարգում սեփականության և սեփականության իրավունքի հայեցակարգի վրա, քանզի նշված հարցերը առավել խորությամբ ու համակարգված են ներկայանում նրա իրավունքի փիլիսոփայության համակարգում⁵:

Ըստ Հեգելի՝ իրավական հայեցակարգի՝ սեփականության բանական լինելը ոչ թե պահանջմունքների բավարարման մեջ է, այլ այն բանում, որ ներառվում է անձի մերկ սուբյեկտիվությունը: Միայն սեփականության մեջ է անձը հանդես գալիս որպես բանականություն: Եթե նույնիսկ անձի ազատության առաջին իրականությունը արտաքին իրի մեջ է, և այդ ազատության իրականությունը հոռի իրականություն է, այնուամենայնիվ, վերացական անձն իր անմիջականության մեջ չի կարող չունենալ անմիջական առկա կեցություն⁶:

Այն, ինչ անմիջականորեն տարբեր է ազատ ոգուց, նրա համար ու ինքնին **իր է**, որն անդեմ է, անազատ և իրավազուրկ⁷:

Ընդհանրապես, յուրաքանչյուր կենդանի էակ նկատում է Հեգելը, սուբյեկտ է, սակայն անձ, դեմք է դառնում միայն ազատ լինելով:

Վերացական անձնավորության ազատությունն իր իրականացումը գտնում է, ըստ Հեգելի, մասնավոր սեփականության իրավունքում:

Հեգելը հիմնավորում է մարդկանց ձևական, իրավական հավասարությունը, մարդիկ հավասար են հենց որպես ազատ անձնավորություններ, հավասար են մասնավոր սեփականության նկատմամբ միատեսակ իրավունքով, բայց ոչ սեփականությանը տիրելու չափերով: Իսկ փաստական հավասարության պահանջը նա գնահատում է որպես վերացական (դեկրատատիվ) տեսակետ, դատարկ և մակերեսային բանախոհականություն:

Հեգելը նշում է, որ բոլոր իրերը կարող են դառնալ մարդու սեփականությունը, քանի որ մարդն ազատ կամք է և, որպես այդպիսին, ինքնին է և իր համար, մինչդեռ իրերն այդ հատկանիշը չունեն: Դա նշանակում է, որ յուրաքանչյուրն իրավունք ունի իր կամքը դարձնել իր կամ իրը դարձնել իր կամքը, քանի որ իրը որպես արտաքինային, ինքնանպատակ չունի, ինքն իր հետ անվերջ հարաբերություն չէ, այլ ինքն իր նկատմամբ արտաքինային մի ինչ է: Արտաքինային են նաև կենդանիները, դրանով իսկ նրանք իր են: Կամքն է միայն, որ **անվերջ է, բացարձակ է** մնացած ամեն ինչի նկատմամբ, իսկ մնացածը **հարաբերական է**⁸: Իրը սեփականացնելը, ըստ էության, իրի նկատմամբ տիրապետությունն ի ցույց դնելը, տեղի է ունենում իրի մեջ այլ նպատակ դնելու միջոցով:

Այն, որ անձն իր արտաքին իշխանության մեջ տիրում է ինչ-որ բանի, տիրապետություն է: Այդ տիրապետության հատկանշանական կողմն այն է, որ անձը, բնական պահանջմունքներից, ձգտումներից և կամայականությունից մղված, մի ինչը դարձնում է իրենը: Տիրապետությունն ունի նաև մեկ ուրիշ կողմ, այն, որ անձը՝ որպես ազատ կամք, իր համար տիրապետության մեջ առարկայական է, դրանով իսկ իրական կամք է: Տիրապետության այս կողմն էլ նրա ճշմարիտ և իրավական որոշարկուն է:

⁴ Տե՛ս **Ներսեսյանց Վ. Ս.** Իրավագիտություն: Եր., 2002, էջ 153:

⁵ Մանրամասն տե՛ս **Нерсесянц.В.С.** Гегелевская философия права.Изд. «Наука» 1974, նաև՝ **Ստեփանյան Հ.,** Հեգելի իրավունքի փիլիսոփայությունը: Եր., 2020:

⁶ Տե՛ս **Гечель,** Философия права. М, 1990:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս **Ստեփանյան Հ.,** Հեգելի փիլիսոփայությունը, Եր., 2020, էջ 285:

Սեփականություն ունենալը պահանջմունքը բավարարելու միջոց է, սակայն ազատության տեսակետից սեփականության ճշմարտությունն այն է, որ սեփականությունն ազատության առաջին առկա կեցությունն է և իր համար էական նպատակը⁹:

Նկատի ունենալով, որ անձի կամքը, որպես անձնական կամք, դրանով իսկ եզակի կամք, սեփականության մեջ անձի համար դառնում է օբյեկտ, ապա սեփականությունը ձեռք է բերում **մասնավոր սեփականության** բնույթ: Ընդհանուր սեփականությունը, որն իր բնույթով կարող է լինել եզակի տիրապետության տակ, ձեռք է բերում իր մեջ **լուծարվող** ընդհանրության որոշարկում: Ընդհանուր սեփականության մեջ իր բաժնեմասը թողնելու կամ չթողնելու հարցի լուծումը լիովին պայմանավորված է կամայականությամբ: Քանի որ ընդհանուր սեփականությունն իր մեջ կրում է կամայականության տարր, այն հակասում է իրավունքին:

Արտաքին իրերի նկատմամբ անձի համընդհանուր կողմը կամ **բանականն** այն է, որ նա սեփականություն ունենա¹⁰: Անձի **հատկական** կողմն ընդգրկում է նրա սուբյեկտիվ նպատակները, պահանջմունքները, կամայականությունը, տաղանդը, արտաքին հանգամանքները և այլն: Հատկական կողմով է պայմանավորված տիրապետությունն ընդհանրապես, սակայն վերացական անձի ոլորտում նրա հատկական կողմը՝ որպես ազատության հետ նույնական, դեռևս առաջադրված չէ: Հետևաբար **ինչին է** տիրում անձը և **ինչ չափերի** սեփականություն ունի իրավական պատահականություն է: Այս կապակցությամբ Հեգելն անդրադառնում է հավասարության խնդրին: Վերացական անձի ոլորտում անձինք հավասար են, սակայն այդպիսի **հավասարությունը** վերացական, դատողական հավասարություն է: Այստեղ հավասարությունը միայն վերացական անձերի հավասարություն է, որոնց սահմաններից **այն կողմ է** մնում այն ամենը, ինչ վերաբերում է տիրապետությանը: Իսկ վերջինս **անհավասարության հիմքն է**: Այդ պատճառով գույքի հավասարության պահանջը դատարկ և մակերեսային դատողականություն է: Այդ պահանջը **բարի ցանկություն է**, որն, ինչպես բոլոր բարի ցանկությունները, անիրականանալի է, օբյեկտիվ էական ցանկություն չէ¹¹:

Պարզաբանելով իր այս միտքը՝ Հեգելը նշում է հետևյալը. «Գույքի բաշխման հավասարությունը, եթե այն իրականացվի, կարճ ժամանակից հետո կխախտվի, քանի որ ունեցվածքը պայմանավորված է աշխատասիրությամբ: Իսկ այն, ինչ անիրագործելի է, չի կարելի փորձել իրագործել: Մարդիկ իսկապես հավասար են, բայց միայն որպես անձինք, այսինքն՝ նրանց սեփականության աղբյուրի հարցում: Դա նշանակում է, որ հավասարության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ միայն անձանց հավասարությունը: Իսկ եթե անձը **ինչ ունի և որքան ունի**, այդ հարցերը դուրս են գալիս հավասարության սահմաններից»¹²:

Այնուհետև Հեգելն անցնում է սեփականության որոշարկումների քննարկմանը: Նա գտնում է, որ սեփականության՝ որպես անձի **առկա կեցության** համար բավարար չեն անձի կամքը և ներքին պատկերացումն այն մասին, որ մի ինչ պետք է **իրենը** լինի: Անիրաժեշտ է նաև, որ նա **տիրի** այդ գույքին: Առկա կեցությունը, որն ստանում է անձի կամքը, ներառում է նաև ուրիշների կողմից ճանաչվելը: Այն իրը, որ անձը ցանկանում է տիրել, պետք է **տիրագուրկ** անել: Սեփականության հասկացությունն այն է, որ անձն իր կամքը զետեղվում է իրի մեջ, իսկ մնացած որոշարկումները վերաբերում են սեփականության իրացմանը¹³:

Հեգելը գտնում է, որ սեփականության մերձակա որոշարկումները տրվում են իրերի նկատմամբ կամքի հարաբերությամբ: Այդ տեսակետից սեփականությունը ա) իրի անմիջական **տիրապետումն է**, քանի որ կամքն իր առկա կեցությունն է ստանում իրի՝ որպես դրական ինչ-որ բանի մեջ: Սեփականությունը բ) կապ-

⁹ Տե՛ս Հեգել, նշվ. աշխ., էջ 104:

¹⁰ Տե՛ս Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 287:

¹¹ Տե՛ս Հեգել, նշվ. աշխ., էջ 107:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 108:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 108-109:

ված է սպառման հետ: Քանի որ կամքի նկատմամբ իրը բացասական մի բան է, ուրեմն, կամքն իր առկա կեցությունը պետք է ունենա իրի մեջ, մի բանի մեջ, ինչը պետք է բացասվի, այսինքն՝ **սպառվի**, վերջապես գ) կամքը իրից ռեֆլեքսիա է կատարում իր մեջ, ինչը **օտարումն է**, որն արտահայտվում է իրի վերաբերյալ ազատ կամքի տարբեր դրսևորումներով:

Այստեղից հետևում է, որ սեփականության բովանդակության իրավազորությունները թե՛

տեսական-փիլիսոփայական և թե՛ գործնական մակարդակում՝ երեքն են. **տիրապետում**, **օգտագործում** և **տնօրինում**:

Հեգելի սեփականության իրավունքի փիլիսոփայությունն օժանդակել է տվյալ խնդրի հասկացության ավելի խորը իմացության, և հանդես գալով առանձին ինքնուրույն գիտակարգի տեսքով՝ իր հաստատուն տեղն է գտել նրա իրավափիլիսոփայության համակարգում:



ԴԱԿԻԹ ՕՇԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԱՌԱՑԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Ուսումնասիրելով պայմանագրի մեկնաբանման մասին վեճի նախադրյալները՝ կարևոր է ուշադրություն դարձնել այն հարցին, թե արդյոք կարելի է առանձնացնել այն դեպքերը, երբ պայմանագրի մեկնաբանումը համարվում է ավելորդ, այսինքն՝ պայմանագրի պայմանը համարվում է պարզ և որոշակի: Պայմանագրային վեճերի լուծման ժամանակ պայմանի իմաստը, որի մասին կողմերը վիճում են, դատարանին շատ դեպքերում պարզ է արդեն առաջին ընթերցումից հետո: Սակայն կողմերից մեկը կամ երկուսը կարող են պնդել վիճելի պայմանի այլ տառացիից տարբերվող նշանակության մասին: Ընդ որում, կողմի կամ կողմերի նմանատիպ պնդումները միշտ չէ, որ իրենց դատավարական իրավունքների չարաշահման արդյունք են: Նշանակությունը, որը շեղվում է տառացիից, կարող է հիմնված լինել այնպիսի հանգամանքների վրա, որոնք չեն կարող հայտնաբերվել միայն պայմանագրի տեքստի ընթերցումով:

Այսպիսի իրավիճակները առաջացնում են բազմաթիվ հարցեր, որոնց պատասխաններն ստանալն ունի շատ կարևոր նշանակություն. առաջին՝ ինչպե՞ս են հարաբերակցվում պայմանագրում պարունակվող բառերի և բառակապակցությունների տառացի իմաստի հաստատումը և ինքնին մեկնաբանման գործընթացը, որը ենթադրում է հատուկ կանոնների առկայություն, և երկրորդ՝ արդյոք պայմանագրի մեկնաբանումը ավելորդ է, երբ վիճելի պայմանը դատարանին պարզ է տառացի նշանակության հաստատումից հետո:

Ներպետական դատական պրակտիկայում միտումը վիճելի պայմանի բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը պարզելն է, ինչը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կարգավորումներով: Ընդ որում, մեկնաբանման յուրաքանչյուր հաջորդ աստիճան թույլատրվում է միայն նախորդի կիրառությունից հետո, եթե

անորոշությունը շարունակում է մնալ չհաղթահարված: Այսպես հոդվածի առաջին մասում սահմանված է. «Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից (առաջին կանոն): Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով (երկրորդ կանոն)»:

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ եթե այս երկու կանոնները հնարավորություն չեն տալիս որոշելու պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը (երրորդ կանոն): Օրենսդրական այս հիերարխիկ մոտեցումն իր արտացոլումն է գտել նաև ներպետական դատական պրակտիկայում: Մասնավորապես «Կարատ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: **Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար**¹:

Պետք է նշել, որ այս գործը եղավ հիմնաքարային այն առումով, որ ձևավորեց տառացի մեկնաբանման նախապատվության արմատավորված քաղաքականություն: Բավականին երկար ժամանակ ներպետական բոլոր դատական ատյանները հղում էին կատարում բացառապես այս գործին: Եվ դա, մեր կարծիքով, պայմանավորված էր կիրառման հեշտությամբ, քանզի դատարանները ուսումնասիրում էին

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվ-ի մայիսի 27-ի թիվ ՇԴ1/0303/02/10 որոշումը:

միայն պայմանագրի տեքստը և սահմանափակում էին կողմերի ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը: Իրավական վեճը լուծելու համար դատարաններից պահանջվում էր միայն պայմանագրի տեքստը ճանաչել կողմերի իրական կամքին համապատասխանող:

Այնուամենայնիվ պետք է նշել, որ ներպետական դատական պրակտիկան մի քանի տարի հետո փոխեց իր հունը:

Չարգացնելով նախկինում տրված իր իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ առանձին դեպքերում, գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով պայմանավորված, պայմանագրի որևէ պայմանի մեկնաբանությունն իրականացնելիս չի բացառվում նաև քաղ. օր. 447-րդ հոդվածով սահմանված կանոնների **միաժամանակյա** կիրառումը: Մասնավորապես՝ իրավակիրառ պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ պայմանագրի համապատասխան պայմանը թեև դրանում շարադրված **բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ հստակ է, սակայն կողմերի կամ կողմի իրական կամքին չի համապատասխանում**: Նման իրավիճակում միայն, պայմանագրի մեկնաբանման տառացի կանոնը կիրառելով, ոչ միայն կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի՝ գործի լրիվ և բազմակողմանի քննության իրավունքը, այլև պայմանագրի մեկնաբանման նպատակը կարող է ընդհանրապես չիրականացվել: Մինչդեռ պայմանագրի մեկնաբանումն **ինքնանպատակ գործընթաց չէ** և նպատակաուղղված է կողմերի իրական կամքի բացահայտմանը՝ որպես հիմք ունենալով քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ բարեխղճությունը²:

Ինչպես տեսնում ենք, այս գործով ՀՀ Վճռաբեկ դատարանը վերայանեց իր նախկինում տված դիրքորոշումը: Մասնավորապես, դիտարկելով պայմանագրի մեկնաբանման ինստիտուտը ոչ ինքնանպատակ՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ որոշ դեպքերում հնարա-

վոր է նաև պայմանագրի մեկնաբանման կանոնների միաժամանակյա կիրառումը՝ որպես հիմնավորում ունենալով այն հանգամանքը, որ եթե բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը նույնիսկ հստակ է, այնուամենայնիվ այն կարող է չհամապատասխանել կողմերի իրական կամքին:

Այս կերպ Վճռաբեկ դատարանը հետ կանգնեց նախկինում իր արտահայտած մեկնաբանման հիերարխիկ մոտեցումից: Սակայն արդյոք սա նշանակում է, որ Վճռաբեկ դատարանը հետ կանգնեց տառացի մեկնաբանման նախապատվության որդեգրած ընդհանուր քաղաքականությունից: Կարծում ենք՝ ոչ: Բանն այն է, որ Վճռաբեկ դատարանի առաջին դիրքորոշումը որևէ շրջանակ չէր նախատեսում, չունեց որևէ սահմանափակում և կրում էր ընդհանրական բնույթ: Իսկ ահա երկրորդ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումը կապեց **առանձին դեպքերի հետ և այն էլ գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով պայմանավորված**:

Այլ կերպ ասած Վճռաբեկ դատարանը ոչ թե վերափոխեց իր որդեգրած քաղաքականությունը, այլ որոշակի դեպքերում «թուլացրեց» տառացի մեկնաբանության նախապատվության «ուժը» մյուս կանոնների նկատմամբ: Վերոնշյալի ապացույցն է նաև այն, որ «Կարատ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի գործն առ այսօր ուղենիշ է ստորադաս ատյանների համար³:

Ներպետական դատական պրակտիկայում տառացի մեկնաբանության շուրջ ձևավորված իրարամերժ մոտեցումների խնդիրը հասկանալու և առավել օպտիմալ լուծումներ գտնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել տեսական և իրավահամեմատական վերլուծություն:

Ինչպես արդարացիորեն նկատում է պրոֆեսոր Ա. Լյուդերիցը, պայմանագրի մեկնաբանման պատմությունը այժմ է ընկնում ձգտումով՝ խուսափել մեկնաբանումից⁴: Դեռևս հոռ-

² Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվ-ի նոյեմբերի 28-ի թիվ ԵԱՆԴ/0976/02/13 որոշումը:

³ Տե՛ս Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. փետրվարի 7-ի թիվ ԼԴ2/0975/02/19 որոշումը, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. սեպտեմբերի 25-ի թիվ ՍԴ/0563/02/19 որոշումը, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. ապրիլի 19-ի թիվ ԳԴ4/0272/02/19 որոշումը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. հուլիսի 19-ի թիվ ԵԴ/0942/02/19 որոշումը

⁴ Տե՛ս Luderitz A., Auslegung von Rechtsgeschäften, Köln, 1966, էջ 8:

մեկան աղբյուրներում հիշատակվում է մեկնաբանման ավելորդության մասին տառացի նշանակության առկայության դեպքերում: Այսպես՝ հռոմեական հայտնի կանոնը սահմանում է՝ երբ բառերը չեն հարուցում ոչ մի տարակարծություն, չի կարելի թույլ տալ կամքի հաստատման հարցը (*cum in verbis nulla ambiguitas est, non debet admitti voluntatis questio*)⁵:

Հռոմեացի իրավաբան Պավլոսի այս կանոնում արտահայտված կամքի հաստատման անթույլատրելիության հարցը, ըստ էության, մեկնաբանման տառացի նշանակությամբ սահմանափակում է: Միևնույն ժամանակ չի կարելի պնդել, որ այդ կանոնը հռոմեական իրավունքում գործարքների կնքման խստացված ձևի արդյունք է և ժամանակավրեպ: Հետագա զարգացումը ցույց տվեց, որ սահմանափակ մեկնաբանումը տարբեր ձևաչափերով պահանջված էր նաև ժամանակակից իրավական համակարգերում:

Առավել վառ այդ միտումը նկատվում է ընդհանուր իրավունքի երկրներում, որտեղ նախապատվությունը առաջին հերթին տրվում է պայմանագրի տեքստին: Անգլիական դատարանների պրակտիկայում ձևավորվել է այսպես կոչված մեկնաբանման ոսկե կանոնը (*golden rule*), որի համաձայն՝ պայմանագրի բառերը պետք է մեկնաբանվեն նրանց տառացի և սովորական իմաստով, բացառությամբ այն դեպքերի, երբ տառացի մեկնաբանումից հեռացումը անհրաժեշտ է՝ խուսափելու համար արսուրդից, հակասությունից կամ անհետևողականությունից⁶: Կիրառման հեշտությամբ պայմանավորված՝ անգլիական դատարանները մինչ այժմ պահպանում են մեկնաբանման այդ կանոնը, թեև դա ոչ մի անգամ է ենթարկվել քննադատությունների⁷:

Ամերիկյան դատարաններում համանման նշանակություն ունի ակնհայտ, հասարակ նշանակության կանոնը (*plain meaning rule*): Նշված կանոնը կրում է սահմանափակ գործառույթ և ըստ էության արգելք է կողմերի համար՝ հղում կատարելու տառացի նշանակությունից շեղվող

այնպիսի հանգամանքներին, որոնք ուղղակիորեն չեն բխում պայմանագրի տեքստից (*extrinsic evidences*): Ինչպես նշվում է գրականության մեջ, անորոշության բացակայության դեպքերում դատարանը եզրահանգում է, որ փաստաթուղթը պարզ է, և տառացի նշանակությունը դառնում է պայմանագրի նշանակությունը⁸:

Համաձայն պրոֆեսոր Ռ. Ցիմերմանի՝ նշված կանոնները արդեն գերազանցում են Պավլոսի կանոնին⁹: Հաշվի առնելով այն դերը, որ տրված է այդ կանոններին, անգլիական դոկտրինայում ձևավորվել է գիտական մի ամբողջ ուղղություն՝ լիտերալիզմ (անգլերեն՝ *literal*-տառացի): Ինչպես նշում են ամերիկյան իրավաբանները (լիտերալիզմի հետևորդները), երբ պայմանագրի լեզուն պարզ է և միանշանակ, ապա դատարանը պետք է հետևի տառացի նշանակությանը, չնայած կողմի այն փաստարկներին, որ նա պայմանագիրը այլ կերպ է հասկացել¹⁰:

Ի տարբերություն անգլիական և ամերիկյան իրավունքների՝ Գերմանիայում և Ֆրանսիայում պայմանագրերը մեկնաբանելիս դատարանները պետք է հրաժարվեն տառացի նշանակության նախապատվությունից: Ըստ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1156-րդ հոդվածի՝ համաձայնության քննության ժամանակ առաջին հերթին պետք է ուսումնասիրել, թե ինչպիսին է եղել պայմանավորվող կողմերի փոխադարձ մտադրությունը, այլ ոչ թե առաջնորդվել արտահայտությունների տառացի իմաստով: Գերմանական քաղաքացիական կանոնագրի 133-րդ հոդվածի համաձայն՝ կամահայտնությունը մեկնաբանելու ժամանակ պետք է հետևել իրական կամքին՝ չսահմանափակվելով արտահայտությունների տառացի իմաստով:

Այնուամենայնիվ, դատական պրակտիկայում ձևավորվել են մոտեցումներ, որոնք հեռանում են վերը նշված օրենսդրական պահանջներից: Մասնավորապես դա վերաբերում է ֆրանսիական իրավունքին, որտեղ Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը (*Cour de Cassation*) մշակել է պարզ և հստակ պայմանների կանոն-

⁵ Տե՛ս Римское частное право: Учебник. Под. ред. И. Б. Новицкого и И. С. Перетерского М. 2004, էջ 26:

⁶ Տե՛ս Lewison K., The interpretation of contracts, L. 2011, էջ 202:

⁷ Տե՛ս Mitchell C., Interpretation of contracts / Current controversies in law/ NY. 2007. էջ 99:

⁸ Տե՛ս Burton S. j., Elements of contract interpretation, N. Y., 2009, էջ 105:

⁹ Տե՛ս Zimmerman R., The Law of Obligations, Roman Foundations of the Civilian Tradition, NY, 1996, էջ 620:

¹⁰ Տե՛ս Burton S. j., նշվ. աշխ. էջ 123:

նր (clauses claires et précises), որի իմաստը հետևյալն է. պարզ և հստակ կանոնները կարիք չունեն մեկնաբանման, քանզի եթե նրանց իմաստը ակնհայտ է, ապա կողմերի ընդհանուր կամքի հաստատման անհրաժեշտությունը, համաձայն Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1156-րդ հոդվածի, բացակայում է:

Չնայած ֆրանսիական դոկտրինայում առկա հիմնավոր առարկություններին, որ պայմանի պարզության հետևությունը նույնպես մեկնաբանման արդյունք է, նշված կանոնը մինչ այժմ կիրառվում է¹¹: Նման կանոնի առկայությունը պրակտիկայում պայմանավորված է այն բանով, որ Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը հսկողություն իրականացնի ստորադաս դատարանների գործունեության նկատմամբ: Ինչպես նկատում է պրոֆեսոր Ս. Վոզենաուերը, նման պրակտիկայի հիմնական նպատակն է թույլ չտալ պայմանագրի պայմանի խեղաթյուրում (denaturations) պարզ և հստակ պայմանների դեպքում, երբ դատարանը կարող է վերափոխել պայմանագիրը այն մեկնաբանելու ժամանակ՝ խախտելով կողմերի կամքի ինքնավարությունը: Ֆրանսիական իրավաբանները, այսպիսով, **պարզ և հստակ պայմանի** դոկտրինան դիտում են ավելորդ մեկնաբանման զսպման միջոց¹²:

Պայմանագրի մեկնաբանման ավելորդության հարցը քննարկելիս ֆրանսիական դատարանները ելնում են հաղթահարելի կանխավարկածով, այն է՝ պարզ պայմանը ճիշտ և լրիվ արտահայտում է կողմերի մտադրությունը¹³: Այնուամենայնիվ, ինչպես նշում է պրոֆեսոր Ս. Վոզենաուերը, վերջերս այդ կանխավարկածի գործունեությունը զգալիորեն **մեղմացել** է. մասնավորապես՝ տառացի նշանակությունից հեռացում թույլատրվում է այն դեպքում, երբ նման նշանակությունը ճանաչվում է քիչ հիմնավորված¹⁴: Կարելի է ասել, որ ֆրանսիական իրավունքում մասնակի հրաժարվում են պարզ և հստակ պայմանի կանոնից՝ հոգուտ բոլոր հանգամանքների առավել լայն ու-

սումնասիրության, որոնք ազդում են վիճելի պայմանի կոնտեքստի վրա:

Պայմանագրի մեկնաբանման և տառացի նշանակության հաստատման հարաբերակցության մասին նշված մոտեցումներից էականորեն տարբերվում են գերմանական իրավաբանների տեսակետները: Գերմանական դատարաններին ծանոթ է միանշանակության կանոնը (**Eindeutigkeitsregel**), որը ձևավորվել է Գերմանիայի Գերագույն դատարանի կողմից, որպեսզի թույլ չտրվի պայմանագրի իմաստի խեղաթյուրում գործին չվերաբերվող մեկնաբանման բացառման ճանապարհով: Սակայն դա, ի տարբերություն անգլիական և ֆրանսիական մոտեցումների, չի արգելում մեկնաբանումը պայմանի պարզության և հստակության դեպքում, այլ, հակառակը, այն դիտարկում է որպես անհրաժեշտ պայման դատարանի կողմից նման հետևության հանգելու համար¹⁵:

Գերմանիայում միանշանակության կանոնը կարևոր դեր է խաղում նաև վիճելի պայմանի նշանակության ապացուցման ժամանակ: Սակայն ի տարբերություն անգլիական և ֆրանսիական մոտեցումների, որտեղ համապատասխան կանոնները սահմանափակում են ապացույցների շրջանակը պայմանագրի տեքստով՝ գերմանական իրավունքում այդ կանոնը նպատակ ունի կողմերի միջև բաշխել վիճելի պայմանի ապացուցման բեռը: Այսպես՝ Գերմանիայի Գերագույն դատարանի մոտեցման համաձայն՝ այն կողմը, որը շեղվում է տառացի նշանակությունից, կրում է ապացուցման բեռը: Պայմանագրի այն կողմը, որը հենվում է բառի տառացի նշանակության վրա, բավարար է միայն հղում կատարի տեքստին, իսկ մյուս կողմից՝ որը հղում է կատարում հատուկ նշանակության վրա, պահանջվում է լրացուցիչ փաստեր ներկայացնել¹⁶:

Այնուամենայնիվ, գերակշռող է համարվում տառացի նշանակությամբ սահմանափակվելու տեսակետը, ինչը շատ դեպքերում նման է անգլիական և ֆրանսիական մոտեցումներին: Հարցն այն է՝ արդյոք նման մոտեցումը

¹¹ Տե՛ս Цвайгерт К, Кетц Х., Введение в сравнительное правоведение в сфере частного права, Т. 2, М. 1998, էջ 110:

¹² Տե՛ս Vogenauer S., Interpretation of Contracts: Concluding Comparative Observations. էջ 10:

¹³ Տե՛ս Grigoleit H.C., Canaris C.-W. Interpretation of Contracts. 2010. էջ 11:

¹⁴ Տե՛ս Vogenauer S., նշվ. աշխ. էջ 9:

¹⁵ Տե՛ս Luderitz A., նշվ. աշխ. էջ 66:

¹⁶ Տե՛ս Luderitz A., նշվ. աշխ. էջ 329:

արդարացված է: Այս հարցին պատասխանելու համար առաջին հերթին պետք է հասկանալ, թե ինչու են դատարանները հատկապես սահմանափակվում տառացի նշանակությամբ՝ ի վնաս կողմերի իրական կամքի:

Ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ քննարկվող կանոնների հիմնական նպատակն է **թույլ չտալ պայմանագրի իմաստի խեղաթյուրում, որը պարզ է և ակնհայտ**: Մեկնաբանման լրիվ ազատության դեպքում դատավորը, ինչպես նշում է Ժ. Բենտամը, մեկ հետևելով տառացի իմաստին, մեկ տեքստի ոգուն՝ միշտ կարող է որոշում կայացնել մեկ նրա, մեկ մյուսի օգտին, ինչպես իրեն հարմար լինի: Նա միշտ վստահ է, որ կարող է քողարկել իր անձնական կողմնակալությունը կամ տառացի, կամ իրական մեկնաբանման տակ: Այս դեպքում դատավորը վերածվում է աճպարարի, որը, ի զարմանս հանդիսատեսի, միևնույն շփոթ հյուրասիրում է և քաղցր, և դառը ըմպելիք¹⁷:

Այսպիսի մոտեցումը, ինչպես նշվում է ամերիկյան գրականության մեջ, անհրաժեշտ է, քանզի ապահովում է պայմանավորվող կողմերի վստահությունն առ այն, որ նրանց պայմանագիրը հնարավոր դատական վեճի դեպքում կմեկնաբանվի դրանում գրվածի համաձայն, այլ ոչ թե դատարանին կամ ատենակալներին կողմերի ներկայացրածի համաձայն, ինչը շատ հաճախ կարող է լինել շահագրգիռ կողմի՝ ներկայացրած մոլորեցնող ապացույցների հետևանք¹⁸:

Հենվելով պայմանագրի տառացի նշանակության վրա՝ դատարանները պաշտպանում են կողմերի և բոլոր երրորդ անձանց վստահության պաշտպանության սկզբունքը, ինչը շատ կարևոր է պայմանագրի մեկնաբանման տեսության մեջ: Միևնույն ժամանակ տառացի նշանակության վրա հենվող կողմի վստահության պաշտպանությունը կարող է ապահովվել ապացուցման բեռի բաշխումով, որը դրված է գերմանական միանշանակության կանոնի հիմքում (**Eindeutigkeitsregel**):

Անգլիական և ֆրանսիական իրավունքի օրինակներով դժվար չէ նկատել, որ վիճելի պայմանի տառացի նշանակությունը պարզելով՝ դա-

տարանը սահմանափակում է ապացույցները, որոնք կողմերը կարող են ներկայացնել, և հղում է կատարում միայն տեքստին: Այդ մոտեցմանը նման է նաև ներպետական դատական պրակտիկան, որը ենթադրում է կողմերի իրական կամքի բացահայտման սահմանափակման հնարավորությունը տառացի նշանակությամբ, առանց այլ ապացույցներ ուսումնասիրելու, որոնք կարող են ներկայացնել կողմերը:

Մեր կարծիքով՝ կողմերի՝ ապացույցներ ներկայացնելու իրավունքի սահմանափակումը՝ կապված վիճելի պայմանի իմաստի բացահայտման հետ, պետք է ենթարկվի քննադատությունների՝ հետևյալ փաստարկներով՝

1. բառերը նույնպես ապրում են ինչպես օրգանիզմը, նրանք նույնպես ծնվում են, զարգանում են, պայքարում են միմյանց միջև գոյության համար, փոխադարձաբար ազդում են միմյանց վրա և վերջապես, մահանում են՝ տեղը զիջելով նոր բառերին¹⁹: Բացի այդ արտաքին կյանքից, բառերը ունեն նաև ներքին կյանք: Ցանկացած բառ ունի իր պատմությունը, և նրանում շատ հաճախ արտացոլվում է ժողովրդի մշակութային պատմությունը: Բացի այդ, բառօգտագործումը փոփոխվում է ոչ միայն ժամանակի, այլ նաև տարածության մեջ, միևնույն բառը կարող է տարբեր նշանակություն ունենալ տարբեր ազգերի մոտ, միևնույն ազգի տարբեր հատվածներում և տարածքներում:

Հավասարեցնել տեքստը մտքի հետ և տեսնել այդ տեքստում հեղինակի կամքի լրիվ արտահայտումը նշանակում է գերազանահատել բառերի նշանակությունը: Իրականում բառերը ոչ ավելին են, քան միջոցներ, որոնցից օգտվում է հեղինակը իր միտքը և ցանկությունը արտահայտելու համար, և որոնք ունեն նշանակություն այնքանով, որքանով իրականում հասնում են այդ նպատակին:

2. Ուսումնասիրված բոլոր իրավակարգերում, բացառությամբ գերմանականի, նշված կանոնների կիրառման նախադրյալը դատարանի այն հետևությունն է, որ պայմանագրի լեզուն պարզ է, կասկածներ չի հարուցում և այդ իսկ պատճառով մեկնաբանման կարիք չունի, քանզի վիճելի պայմանը կարող է ունենալ միայն

¹⁷ Տե՛ս J. Bentham, E. Dumont, Theory of legislation, Creative Media Partners, LLC, 2014 էջ 207:

¹⁸ Տե՛ս Burton S. j., նշվ. աշխ. էջ 69:

մեկ նշանակություն, որը տառացի է: Միևնույն ժամանակ իրավաբանական գրականության մեջ հաճախ է ուշադրություն դարձվել այն հանգամանքի վրա, որ պայմանագրի պայմանի որոշակի և պարզ լինելու մասին դատարանի հետևությունը նույնպես մեկնաբանման արդյունք է: Ինչպես նշում են Ս. Կանարիսը և Հ. Գրիգորյանը, պայմանագրի ճանաչողության ցանկացած ակտը ստ էության ենթադրում է չնայած դրա մասին հաճախ չի խոսվում, և հիմնվում մեկնաբանման վրա: Փաստացի ինքնին հետևությունը, որ պայմանագիրը չի պահանջում կամ չի թույլատրում մեկնաբանում, մեկնաբանման ակտ է և այդպիսի մեկնաբանման արդյունք²⁰:

Պետք է համաձայնվել պրոֆեսոր Ա. Ֆարնսվորտի հետևյալ տեսակետի հետ. նույնիսկ այն բառերը, որոնք, թվում է, արտաքին ծանոթության արդյունքում ունեն մեկ հնարավոր նշանակություն, իրականում կարող են ստանալ տարբեր իմաստներ այն ժամանակ, երբ հայտնի կդառնան գործի բոլոր հանգամանքները²¹:

Սահմանափակելով կողմերի հնարավորությունը՝ հղում կատարել պայմանագրի տեքստից դուրս արտաքին հանգամանքների վրա՝ մեծ է դառնում հավանականությունը, որ վիճելի պայմանի նշանակությունը, որն արտահայտում է կողմերի իրական կամքը, կմերժվի դատարանի կողմից: Տառացի մեկնաբանման հիմնական քննադատությունը ոչ թե այն է, որ դատարանը մեկնաբանման հիմքում դնում է տառացի նշանակությունը, այլ այն, որ դատարանը հաշվի չի առնում բոլոր էական հանգամանքները, որոնք կարող են օգնել՝ ճիշտ և արդարացի որոշում կայացնելու:

3. Տառացի մեկնաբանման նշանակալի թերություններից է այն, որ պայմանագրի պայմանի պարզություն տերմինի համար պրակտիկ տեսանկյունից հնարավոր չէ սահմանել այնպիսի համակողմանի հասկացություն, որը կդառնա սահմանափակ մեկնաբանման հիմք: Ինչպես արդարացիորեն նշվել է անգլիա-

կան դատական գործերից մեկում (Charter Reinsurance Co Ltd v Fagan, 1996) պատկերացումները առ այն, որ բառերը ունեն սովորական նշանակություն, քիչ օգտակար է: Քանզի բառերի նշանակությունը կախված է սինտակտիկայից (տրամաբանական շարահյուսություն) և կոնտեքստից բառերի սովորական նշանակությունը մի նախադասությունում կարող է լինել ոչ սովորական մեկ այլ նախադասությունում²²:

Ինչպես պատկերավոր գրում է պրոֆեսոր Ա. Լյուդերիցը, իրավաբանական պրակտիկական կարոտում է այն դրախտը, որտեղ յուրաքանչյուր բառ ունի հստակ նշանակություն²³: Ինչպես տեսնում ենք, ինքնին լեզվի բնույթը չի կարողանում ապահովել իրավունքի կարիքները:

4. Իրավաբանական գրականության մեջ կա տեսակետ, որ պայմանագրի կնքման փուլում գերակայում է սուբյեկտիվիզմը: Մասնավորապես, հայտնի ցիվիլիստ Գ. Շերշենևիչը նշում է, որ կոնտրագենտները որքան էլ մանրամասն և ուշադիր մշակեն պայմանագրի պայմանները, այնուամենայնիվ նրանք ի վիճակի չեն անդադառնալ բոլոր հարցերին, որոնք կարող են ծագել հետագայում: Բացի այդ, քիչ պայմանագրեր են մշակվում իրավաբանների կողմից, ինչն իր հերթին առաջացնում է անհրաժեշտություն դրանց իմաստի բացահայտման, այսինքն՝ ինչ են իրականում նկատի ունեցել կողմերը²⁴:

Հաշվի առնելով լեզվի բարձր զգայնության աստիճանը, դրա կիրառման կոնտեքստը՝ տառացի նշանակությունը դժվար թե կարող է լինել այն սահմանը, որ թույլ կտա դատարանին անցում կատարել սեփական մեկնաբանմանը: Այս տեսակետը արտահայտություն է գտել գերմանական դոկտրինայում. պրոֆեսոր Կ. Լարենցը նշում է, որ տառացի իմաստը ոչ միշտ է միանշանակ, ուստի այն չի համարվում մեկնաբանման միակ ելակետը և դրա սահմանը²⁵:

Քանի որ պայմանագրային պայմանի պարզությունը մի կողմից կարող է լինել մեկնաբան-

¹⁹ Տե՛ս A. Darmesteter, La vie des mots, étudiée dans leur significations. Delagrave, 1895 էջ 26.

²⁰ Տե՛ս Grigoleit H. C., Canaris C. W. նշվ. աշխ. էջ 11:

²¹ Տե՛ս Мозолин В.П., Фарнсворт А. Договорное право в США и СССР, История и общие концепции, М, էջ 95:

²² Տե՛ս Mitchell C., նշվ. աշխ. էջ 42:

²³ Տե՛ս Luderitz A., նշվ. աշխ. էջ 65:

²⁴ Տե՛ս Шершеневич Г.Ф., Курс гражданского права. – Тула, 2001. էջ 410:

²⁵ Տե՛ս Larenz K, Wolf M., Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts, München 2004, էջ 388:

ման հետևանք, մյուս կողմից նման հետևությունները կարող է հիմնված լինել միայն պայմանագրի տեքստի վրա՝ առանց մյուս հանգամանքերը հաշվի առնելու, պետք է նշել, որ տառացի նշանակության հաստատումը կրճատված, սահմանափակ մեկնաբանման տեսակ է: Ցանկացած ընթերցանություն, նշանակության ճշգրտման ակտ է, ինչին և հղում է կատարում հայտնի գերմանացի փիլիսոփա Հ. Գադամերը իր «Ճշմարտություն և մեթոդ» աշխատությունում, այն է՝ ցանկացած իմաստով ընթերցանություն միշտ մեկնաբանման տարատեսակ է²⁶:

Գոյություն չունի որևէ ընթերցող, որը, պահելով տեքստը աչքերի առաջ, միայն կարդա այն, ինչ այնտեղ գրված է: Ընդհակառակը, ցանկացած ընթերցանության ժամանակ կատարվում է ապրիկացիա: Ուստի նա, ով կարդում է, արդեն իսկ գտնվում է իր կողմից ընկալվող մտքի ներսում²⁷:

Մյուս կողմից, նույն պատճառներով չի կարելի խոսել տեքստային, տառացի կամ ակնհայտ նշանակության մասին. պայմանագրի նշանակության հաստատման բոլոր մակարդակներում այն այս կամ այն չափով պետք է պարունակի նաև ենթատեքստային մեկնաբանումը²⁸: Քննարկվող իրավիճակներում ակնհայտ է, որ տառացի նշանակությունը հաստատելիս դատարանները հղում են կատարում վիճելի պայմանի կոնտեքստին, անգամ նրա համար, որպեսզի գնահատեն վեճի էությունը, ուստի ինքնին **տառացի մեկնաբանում** տերմինը կարող է կիրառվել որպես սահմանափակ մեկնաբանման տեսակ:

Վերը ներկայացված դատողությունները ցույց են տալիս, որ այն կանոնների կիրառումը, որոնք սահմանափակվում են միայն պայմանագրի տառացի նշանակությամբ, հաշվի չեն առնում, որ առաջին հայացքից ակնհայտ նշանակություն ունեցող փաստաթուղթը չի խոչընդոտում և, իհարկե, չի ազատում դատարանին փաստերի ուսումնասիրության անհրաժեշտությունից²⁹:

Հաշվի առնելով այս հանգամանքները, ինչ-

պես նաև արևմտյան իրավակարգերում լրիվ կամ մասնակի իրաժարումը պայմանագրի տառացի նշանակության նախապատվությունից՝ ներպետական դատական պրակտիկայում նման միտումը չի համապատասխանում պայմանագրի մեկնաբանման ինստիտուտի տրամաբանությանը:

Այս հարցի շուրջ առավել բալանսավորված մոտեցում է առկա գերմանական դոկտրինայում և պրակտիկայում: Մեր կարծիքով՝ միանշանակության կանոնը (**Eindeutigkeitsregel**), որը նախատեսում է ապացուցման բեռի բաշխումը, վիճելի պայմանի տառացի նշանակության կանխավարկած է, որը հնարավոր է հաղթահարել բոլոր թույլատրելի ապացույցներով:

Տառացի նշանակության օգտին նման կանխավարկածի սահմանումը մի կողմից հնարավորություն կտա կողմերին իրենց իրական կամքը բացահայտելու՝ առանց սահմանափակման հղում կատարել ցանկացած ապացույցի, մյուս կողմից՝ կկանխի պայմանագրի իմաստի խեղաթյուրումը, այդ թվում նաև՝ կողմերի դատավարական իրավունքների չարաշահման հնարավորությունը:

Այսպիսով՝ կարելի է տալ հետևյալ սահմանումը. **մեկնաբանում իրականացնելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ պայմանագրում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը ենթադրվում է կողմերի իրական կամքին համապատասխանող, եթե շահագրգիռ կողմը հակառակը չի ապացուցել:**

Այսպիսի կարգավորումը համարվում է տրամաբանական, քանի որ մեկնաբանում կատարելիս տառացի նշանակությունը չի կարող ուշադրության չարժանանալ, քանզի նրա վրա հենվում են ոչ միայն դատարանը, այլ նաև՝ կողմերը: Միևնույն ժամանակ, եթե կողմը, որը պնդում է պայմանի այլ՝ հատուկ նշանակության մասին և ներկայացնում է ապացույցներ, որ մյուս կողմը գիտեր կամ չէր կարող չիմանալ այդ նշանակության մասին, ապա դատարանը ընդունում է դա:

²⁶ Տե՛ս Գադամեր X. Գ., Истина и метод, Основы философской герменевтики, М, 1988, էջ 193:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁸ Տե՛ս Mitchell C., նշվ. աշխ. էջ 42:

²⁹ Տե՛ս նույն տեղը:

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ

**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՋ**

Ինչ է իրենից ներկայացնում իրավունքը հարցադրումն իրավագիտության կարևորագույն և բարդ հիմնախնդիրներից մեկն է, որը մշտապես հարուցել է իրավագետների ուշադրությունը¹: Յուրաքանչյուր տարի համաշխարհային իրավաբանական հանրության կողմից հրատարակվող մի քանի տասնյակ աշխատությունները վկայում են այն մասին, որ իրավաբանական միտքը, փորձելով «հետախուզում» հայտարարել այս հարցադրման նկատմամբ և չկարողանալով գտնել ամբողջական պատասխան, շարունակում է իր գիտական որոնումները: Կարևորությունն այն է, որ վերջինից (հարցադրումից), ըստ էության, կախված են այս կամ այն իրավական երևույթի վերաբերյալ գիտական մեր պատկերացումները:

Ոչ մեկի համար թերևս գաղտնիք չէ, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններում ձևավորվել են իրավունքի ընկալման տարբեր տեսություններ, ինչպիսիք են օրինակ՝ բնաիրավականը, պատմականը, նորմատիվիստականը, սոցիոլոգիականը, ռեալիստականը և այլն²: Բնական է, որ այս տեսություններից *յուրաքանչյուրը*, հետևաբար նաև հետևորդների *խումբը* փորձում են իրավունքը ներկայացնել այնպես, ինչպես իրեն թույլ է տալիս վերջինիս հիմքում դրված մեթոդաբանությունը:

Միանգամայն օրինաչափ է նաև այն երևույթը, որ այդ տեսություններից որևէ մեկին հարող գիտնականը կամ գիտնականների խումբն ունի գործընկերների, ընթերցողների, քննադատների հետ իր գաղափարներով, դատողու-

¹ Տե՛ս, օրինակ, **Վաղարշյան Ա.Գ.**, Իրավահասակացողության տիպերը և դրանց արժեքներն ու թերությունները: ԵՊՀ իրավ. ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նյութերի ժողովածու, ԵՊՀ: Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան, Եր.: ԵՊՀ, 2017, **Քյանոս Ն.Ա.**, Теория государства и права: учеб. пособие. 2-е изд., перераб. и доп. Иркутск: Изд. ИГУ, 2015, **Рассолов М.М.**, Теория государства и права: учебник для академического бакалавриата. М.: Изд. Юрайт, 2014, **Лазарев В.В., Липень С.В.**, Теория государства и права: учебник для бакалавров. 4-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2013, Теория государства и права: учебник для бакалавров: под ред. А.С. Пиголкина, Ю.А. Дмитриева. 3-е изд., перераб. и доп. М.: Изд. Юрайт, 2013, **Нерсисянц В.С.**, Общая теория права и государства: учебник. М.: Норма, 2012, **Рассолов М.М.**, Проблемы теории государства и права: учебное пособие. М.: Изд. ЮНИТИ-ДАНА. Закон и право, 2010, **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դաս., ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատ., 2011, **Аносова М.М.**, Современный системный нормативный подход к правопониманию и правоприменению: проблемы теории и практики: дисс. канд. юрид. наук. Владимир, 2007, **Поляков А.В., Тимошина Е.В.**, Общая теория права: Учеб. для вузов. СПб.: Изд. С.-Петербург. гос. ун-та 2005, **Поляков А.В.**, Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода: Курс лекций. СПб.: Изд. С.-Петербург. Гос. ун-та, 2004, **Байтин М.И.**, Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов: Изд. СГАП: 2001, **Лейст О.Э.**, Сущность права. Проблемы теории и философии права. М.: Изд. ИКД Зерцало-М, 2002, **Честнов И.Л.**, Современные типы правопонимания: Феноменология, герменевтика, антропология и синергетика права. СПб.: Изд. С.-Петербург. гос. юрид. ун-та Генеральной прокуратуры РФ, 2002, **Бержель Ж.-Л.**, Общая теория права / Под. общ. ред. В.И. Даниленко / Пер. с фр. М.: Изд. Издательский дом NOTA BENE, 2000, **Посконина О.В. Парсонс Т., Луман Н.**, Два подхода в правопонимании. Ижевск: Изд. Удмуртского ун-та 1998, **Четвернин В.А.**, Современные концепции естественного права. М.: Изд. Наука, 1988, **Явич Л.С.**, Сущность права. Социально-философское понимание генезиса, развития и функционирования юридической формы общественных отношений Л.: Изд. Ленинградского ун-та, 1985, **Иоффе О.С., Шаргородский М.Д.**, Вопросы теории права. М.: Изд. Госюриздат, 1961, **Александров Н.Г.**, Сущность права. К вопросу о сущности исторических типов права. М.: Изд. Госюриздат, 1950:

² Տե՛ս օրինակ **Лапаева В.В.**, Типы правопонимания: правовая теория и практика: Монография. М.: Изд. Российская академия правосудия, 2012, **Shirley R.L.**, On the History of the Idea of Law. 1st Editio. Cambridge University Press 2005:

թյուններով կիսվելու և հաղորդակցվելու անդիմադրելի ցանկություն: Ընդ որում, ի սկզբանե ամենևին էլ կարևոր չէ՝ այդ գաղափարները կամ դատողությունները որքան կատարյալ են կամ ամբողջական: Ճշմարիտ է, ինչ խոսք, Ա. Սախարովն այն հարցում, որ լավագույն մտքերը ծնվում են բանավեճի ժամանակ³: Դ. Կերիմովն էլ, զարգացնելով այս միտքը, գրում է. «Եվ նա, ով բանավեճի ժամանակ կորսնորի իրավական ձիրք և իրավական կիրք, անկասկած կհասնի ամենամեծ բարձունքների»⁴:

Այս ամենը մեզ համար ևս ընդունելի է. մենք նույնպես ունենք հասարակությանը սեփական գաղափարներին հաղորդակից դարձնելու ներքին ցանկություն: Ընդունելի է նաև, որ իրավաբանական հանրությունը պետք է անընդհատ ստեղծագործի «ինչ է իրավունքը» հարցադրման շուրջ: Անկասկած այդ հետազոտություններն ունեն կարևոր նշանակություն: Սակայն չափազանց կարևոր է այն, թե որն է նպատակը, օրինակ՝ իրավաբանական միտքը շարունակում է դեռևս քննարկել այն հարցը՝ «իրավունք» և «օրենք» կատեգորիաները նույնակամ են, թե՛ ոչ: Փաստն այն է, որ այդպես էլ չի ձևավորվել մեկ միասնական մոտեցում: Իրավագետների մի մասը գտնում է, որ այդ կատեգորիաները նույնական են, մյուսները՝ ոչ⁵, իսկ երրորդներն էլ առաջ են քաշում վերջիններիս ինտեգրման ան-

հրաժեշտությունը⁶: Այլ կերպ ասած՝ առկա են իրավունքի հարյուրավոր բնորոշումներ, սակայն չկա մեկ բնորոշում, որը համընդհանուր ճանաչում ստացած կլինի բոլորի կողմից⁷:

Պարզ է, որ կատարված հետազոտությունը միտված չէ իրավունքի էությունը վերհանելուն: Այդ դեպքում ո՞րն էր այս նախաբանի անհրաժեշտությունը: Պատասխանը մեկն է՝ փաստելու այն իրողությունը, որ իրերի դրությունը ոչնչով չի տարբերվում նաև իրավական կանխավարկածների պարագայում⁸: Այլ խոսքով ասած, «ինչ է իրավունքը» և «ինչ է իրավական կանխավարկածը» հարցադրումները կապված են միմյանց հետ այնքանով, որքանով՝ վերջինիս պատասխանը, ըստ էության, բխելու է այն իրողությունից, թե իրավական կանխավարկածների հետազոտության հիմքում իրավահասկացողության որ տիպաբանությունն ենք դնում որպես մեթոդաբանական հիմք:

Իրավագետները մինչ օրս շարունակում են վիճել իրավական կանխավարկածի հասկացության շուրջ⁹: Շարունակվում է բանավեճը՝ արդյո՞ք իրավական կանխավարկածն իրավանորմ է, թե՛ ոչ¹⁰, կամ ինչպե՞ս են միմյանց հետ հարաբերակցվում իրավական կանխավարկածը և իրավական սկզբունքը¹¹: Այս բանավեճը մենք նույնպես կարող ենք շարունակել: Սակայն նախքան վեճը բորբոքելը, ինչպես որ նա-

³ Տե՛ս **Сахаров А.Д.**, Размышления о прогрессе, мирном сосуществовании и интеллектуальной свободе // Вопросы философии. 1990, № 2, էջ 16:

⁴ Տե՛ս **Керимов Д.А.**, Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. М.: Изд. Аванта, 2001, էջ 6:

⁵ Տե՛ս օրինակ՝ **Жолобов Я.Б., Очерedyкo В.П., Бондарев В.Г., Дорская А.А.**, Соотношение права и закона в России как историко-правовая проблема // Вестник СПбГУ. Право. 2019, Т. 10, Вып. 1, էջ 24-36:

⁶ Տե՛ս օրինակ **Постклассическая онтология права: монография: Под ред. И.Л. Честнова.** СПб.: Изд. Алетея, 2016, էջ 24:

⁷ Տե՛ս **Теория государства и права.** Под ред. Г.Н. Манова. М.: Изд Бек, 1996, էջ 33:

⁸ Տե՛ս **Черниловский З.М.**, Презумпции и фикции в истории права // Советское государство и право. 1984, № 1, էջ 102:

⁹ Իրավիճակը կարող է փոխվել, եթե բոլորս միաձայն էլակետային ընդունենք այն, որ նախ իրավական կանխավարկածներն ունեն այնքան պատմություն, որքան՝ իրավունքը և երկրորդ՝ իրավական կանխավարկածն իրավունքի էությունը վեր հանելու և այն ընկալելու միջոցներից մեկն է, իրավաբանական մտածողության մոդել, որն ուղեկցում է իրավունքին իր ողջ պատմության ընթացքում, այսինքն՝ առաջնորդվել այն գաղափարով, ըստ որի՝ կանխավարկածը՝ որպես հատուկ իրավական կառուցվածք, ծագել է դեռևս Հին աշխարհում և իր տարածումն է գտել Հին Հռոմի իրավաբանների աշխատություններում: Տե՛ս, օրինակ **Угрюнинова Е.А.**, Презумпции в российской государственной-правовой традиции: дисс. канд. юрид. наук. Москва, 2013, էջ 16:

¹⁰ Նույնիսկ **Ջ.Մ. Չերնիլովսկին** իր ժամանակին առաջ է քաշել այն թեզը, որ որոշ իրավական կանխավարկածներ կիրառվել են դեռևս չգրված իրավունքի շրջանում: «Իրենց ծագմամբ», - գրում է հեղինակը, - «իրավաբանական կանխավարկածներն առաջացել են ավելի վաղ ինչպես հռոմեական իրավունքից, այնպես էլ լատիներենից: Տե՛ս **Черниловский З.М.**, նշվ. աշխատությունը, էջ 98:

¹¹ Ս.Վ. Գուսևան այնդում է, որ իրավունքում գործող կանխավարկածներն առաջացել են իրավական համակարգից վաղ. իրավական համակարգը կառուցվում է հասարակական գիտակցության մեջ գործող կանխավարկածների համակարգի վրա: Տե՛ս **Гусева С.В.**, Философское осмысление категории «презумпция» в структуре юриспруденции как гуманитарного научного знания // Вестник ПАГС. Саратов, 2009, № 1 (18), էջ 219:

խորդ հարցադրման դեպքում, ինքներս մեզ պետք է հարց տանք՝ որն է նպատակը: Թող սա չդիտվի որպես կշտամբանք, այնուամենայնիվ իրավական կանխավարկածների հիմնախնդիրներով հետաքրքրվողները շարունակում են խոյս տալ այս հարցադրումից:

Հարկ ենք համարում նշել, որ յուրաքանչյուր ոք, որ բարեխղճորեն ուսումնասիրել է իրավական կանխավարկածների վերաբերյալ առկա մասնագիտական գրականությունը, պետք է համակարծիք լինի այն մտքի հետ, ըստ որի կանխավարկածներին հանդիպում ենք իրավունքի գոյության տարբեր փուլերում: Վերջիններիս մի մասը առաջանալով և զարգանալով ժամանակի ընթացքում անհետանում է, մյուսների շրջանակն էլ՝ ընդլայնվում: Այլ խոսքով ասած, ինչպես իրավունքին, այնպես էլ իրավական կանխավարկածին բնութագրական են հարաշարժ զարգացումն ու պատմական առումով փոփոխականությունը, որոնք պայմանավորված են այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ պատմական որոշակի ժամանակաշրջանում հասարակական պահանջմունքները և իրավագիտակցության մակարդակը¹²:

Հետևաբար, ի՞նչ պետք է անել կամ ինչի՞ց պետք է սկսել. անվերջ վիճել, թե՞ ոչ, եթե այո, ապա հանուն ինչի, թե՞ փորձել գտնել խնդիրների լուծման և հաղթահարման ուղիներ: Մենք ընտրում ենք վերջին տարբերակը՝ հանդես գալով որպես իրավական կանխավարկածների շուրջ առկա իրարամերժ մոտեցումների հաղթահարման գաղափարականի կրող:

Գաղտնիք չէ, որ գիտական ուսումնասիրություն իրականացնելիս հետազոտողին անհրաժեշտ է նախապես հասկանալ և պատկերացնել՝

որոնք են լինելու ցանկալի արդյունքը և այդ արդյունքին հասնելու միջոցները: Եթե այս մոտեցումը վերագրենք իրավական կանխավարկածներին և մեր առջև դրված նպատակին ու խնդիրներին, կարող ենք արձանագրել, որ վերջին հաշվով (որպես վերջնարդյունք) պետք է պատասխանել այն հարցին, թե ինչպես մշակել իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգ: Սույն հոդվածում որպես մասնավոր խնդիր անհրաժեշտ է հիպոթեզի տեսքով առաջ քաշել այն, թե որն է լինելու իրավական կանխավարկածների շուրջ առկա մոտեցումների միասնականացման հիմքում դրվող մեթոդաբանությունը: Մեթոդաբանությունն ընտրելուց հետո պետք է իրականացնել առանձին հետազոտություն, որը թույլ կտա արդեն պատասխանելու այն հարցին՝ արդյոք վերջինս (ընտրված մեթոդաբանությունը) ի վիճակի է լուծելու իրավաբանական դոկտրինում առկա չլուծված հարցերը: Այս հարցադրումները պայմանավորված են այն իրողությամբ, որ ներկայումս տիրում է իրավաբանական դոկտրինում:

Իրավիճակը պատկերացնելու համար խոսենք առարկայական: Այսպես՝ իրավական կանխավարկածների վերաբերյալ տարածաշրջանային մակարդակով կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, օրինակ՝ խորհրդային և հետխորհրդային տարիների ընթացքում ատենախոսությունների մակարդակով կատարվել են մի քանի տասնյակի հասնող հետազոտություններ¹³: Տարածաշրջանից դուրս մեզ նույնպես հաջողվեց գտնել կատարված հետազոտություններ, սակայն հիմնականում գիտական հոդվածների տեսքով¹⁴: Ավելին, նույնիսկ

¹² Տե՛ս **Астемирова Л.А.**, Презумпции в российском праве. дисс. канд. юрид. наук. Москва, 2010, էջ 29:

¹³ Տե՛ս օրինակ <https://www.dissercat.com> (վերջին մուտքը՝ 04.01.2020թ., ժամը՝ 19:55) <http://diss.rsl.ru> (վերջին մուտքը՝ 04.01.2020թ., ժամը՝ 19:56), <http://www.dslib.net> (վերջին մուտքը՝ 04.01.2020թ., ժամը՝ 19:57), <https://www.rsl.ru> (վերջին մուտքը՝ 04.01.2020թ., ժամը՝ 19:57):

¹⁴ Տե՛ս, օրինակ՝ **David M. Godden and Douglas Walton**, A theory of presumption for everyday argumentation. John Benjamins Publishing Company, 2007, էջ 313-346, **Chrls M. Yablon**, A theory of presumption. Law Probability and Risk (2003) 2, էջ 227-236, **Douglas Walton**, Burden of Proof, Presumption and Argumentation. University of Windsor, Ontario, 2014, **Henry Prakken, Giovanni Sartor**, More on Presumptions and Burdens of Proof. (https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=963761, վերջին մուտքը՝ 31.01.2021թ., ժամը՝ 20:56), **Fabrizio Macagno and Douglas Walton**, Presumptions in Legal Argumentation. Ratio Juris. Vol. 25 No. 3 September 2012, էջ 271-300, **Geoffrey J. Orr**, Toward a Workable Civil Presumptions Rule in Louisiana, 53 La. L. Rev. (1993), էջ 1625-1639 **Steven C. Salop**, The Evolution and Vitality of Merger Presumptions: A Decision Theoretic Approach (<https://scholarship.law>, վերջին մուտքը՝ 19.09.2020թ. ժամը՝ 22:11), **David Kaiser**, Presumptions of Law and of Fact, 38 Marq. L. Rev. (1955) (<https://ru.scribd.com/document/163283027/Presumptions-of-Law-and-of-Fact-David-Kaiser>, վերջին մուտքը՝ 31.01.2021թ., ժամը՝ 21:03), 253, **Pierluigi Chiassoni**, Legal interpretation without truth. Revus (2016) 29, էջ 93-118:

կանխավարկածների հիմնախնդիրների թեմայով կազմակերպվել են գիտաժողովներ¹⁵, և եթե նախորդ հարյուրամյակի ընթացքում իրավական կանխավարկածների ուսումնասիրության միասնական տեսություն ստեղծելու հայեցակարգի մասին բարձրաձայնում էր Վ. Օյգենզիխտը¹⁶, ապա ներկայումս բոլորը կարծես համակարծիք են այդ գաղափարի շուրջ:

Այդ դեպքում հրն է խնդիրը: Խնդիրն ըստ էության մեթոդաբանության բացակայությունն է կամ «առկա» մեթոդաբանության «բորիկությունը»: Այլ կերպ ասած, այն լապտերի բացակայությունը, որը մեզ՝ հետազոտողներին, հնարավորություն կտա մշուշի միջով A կետից անցնելու B կետ:

Ներկայացնենք մեր ժամանակակիցների մոտեցումները, օրինակ՝ Բ. Բուլանսկու մենագրությունը: Հեղինակն աշխատանքի առաջին գլխում արդեն իսկ խոսում է իրավական կանխավարկածների ընդհանուր տեսություն ստեղծելու մասին¹⁷: Սակայն ինչպես այդ գլխում, այնպես էլ հետագա շարադրանքում չի խոսում ընդհանուր տեսություն ստեղծելու մեթոդաբանության մասին: Փոխարենը նշում է, որ պետք է մշակել կանխավարկածների ընդհանուր հասկացություն, սակայն առանց «ինչպե՞ս» հարցադրմանը պատասխանելու¹⁸:

Հաջորդը՝ Լ. Աստեմիրովան, բարձրաձայնում է այն մասին, որ իրավունքի տեսությունը մինչ օրս չի մշակել իրավական կանխավարկածների ամբողջական հայեցակարգ, չկա միասնական մոտեցում կանխավարկածի բնույ-

թի, իրավաբանական հատկանիշների և գործառույթային դերի շուրջ¹⁹: Այնուհետև իր առջև խնդիր է դնում մշակել կանխավարկածի տեսական մոդել²⁰: Թվում է՝ ամեն ինչ հրաշալի է: Սակայն աշխատանքի հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակի այս գաղափարը, պատկերավոր ասած, սահմանափակվում է թռչող գորգի մասին պատկերացումներով կամ թռչնի թևերը կրկնօրինակելու անհաջող փորձով, այսինքն՝ մեծ հաշվով վերցրած՝ ասում է այն ամենը, ինչ նախորդները:

Մ. Պրոնինան նշում է մի շարք խնդիրներ, օրինակ՝ բարձրաձայնում է այն մասին, որ բացակայում է *կանխավարկածի* հասկացության վերաբերյալ միասնական հայեցակարգ, վերջինիս էության, տիպաբանության, գործառույթային բնույթի և դերի շուրջ առկա են հակասական մոտեցումներ, լուծված չեն կանխավարկածների ձևական-տրամաբանական կառուցվածքի և վերջիններիս գործողության կառուցակարգերի հետ կապված հարցերը և այլն²¹: Այնուհետև հետագա աշխատանքում խոսելով խնդիրների, օրինակ՝ հասկացության մասին՝ եզրահանգում է, որ որպես վերջնարդյունք ունի կանխավարկածի հեղինակային հասկացությունը, այն է՝ «[...] *իրավական կանխավարկածն իրավանդում ամրագրված հավանական հերքվող ենթադրությունն է* [...]»²²: Իսկ իմ է ասում, որ իրենից առաջ կամ ընթացքում չկան այլ հեղինակներ, ովքեր ևս կանխավարկածը դիտարկել են որպես ենթադրություն²³: Դժվար չէ նկատել, որ Մ. Պրոնինան խնդիրը,

¹⁵ Տե՛ս, օրինակ Юридическая техника. «Правовые презумпции: теория, практика и техника» // Ежегодник № 4. Глав. ред. Баранов В.М. Н.Новгород, 2010;
¹⁶ Տե՛ս **Ойгензихт В.А.**, Презумпции в советском гражданском праве. Душанбе: Изд. ИРФОН, 1976, էջ 6-11:
¹⁷ Տե՛ս **Булаевский Б.А.**, Презумпции как средства правовой охраны интересов участников гражданских правоотношений: монография. М.: Изд. Инфра-М, 2014, էջ 13:
¹⁸ Տե՛ս **Булаевский Б.А.**, նշված աշխատությունը, էջ 15:
¹⁹ Տե՛ս **Астемирова Л.А.**, Презумпции в российском праве: дисс. канд. юрид. наук. Москва, 2010, էջ 3:
²⁰ Տե՛ս **Астемирова Л.А.**, նշված աշխատությունը, էջ 6:
²¹ Տե՛ս **Пронина М.П.**, Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2010, էջ 3:
²² Տե՛ս **Пронина М.П.**, նշված աշխատությունը, էջ 48:
²³ Տե՛ս օրինակ **Викут М.А., Зайцев И.М.**, Гражданский процесс России: Учебник. М.: Изд. Юристъ, 1999, էջ 165, **Зуев Ю.Г.**, Уголовно-правовые презумпции: понятие, признаки и виды // Проблемы юридической техники / Под ред. В.М. Баранова. Н.Новгород, 2000, էջ 335, **Самсонов А.П.**, Презумпции права в современной правовой политике России: теоретико-правовой аспект: автореф. дисс. канд. юрид. наук. Тамбов, 2009, էջ 9, **Тамазян Т.Г.**, Презумпции в страховом праве: дисс. канд. юрид. наук. Москва, 2004, էջ 33, **Зражевская Т.Д.**, Презумпции в конституционном праве России / Первые Бабаевские чтения «Правовые презумпции: теория, практика, техника» / Юридическая техника, № 4, 2010, էջ 36, **Давыдова М.Л.**, Правовые презумпции в системе юридической техники. / Первые Бабаевские чтения «Правовые презумпции: теория, практика, техника» / Юридическая техника, № 4, 2010, էջ 161, **Арзамасов Ю.Г.**, О

ըստ էության, քննարկել է «հեղինակային», այլ ոչ թե՛ միասնական հայեցակարգի ստեղծման գաղափարի տեսանկյունից: Ինչո՞ւ... Այն պարզ պատճառով, որ վերջինիս հաջորդները դեռ շարունակում են վիճել իրավական կանխավարկածի հասկացության շուրջ այնպես, ինչպես ինքը²⁴:

Վերցնենք ճյուղային իրավագիտության շրջանակներում կատարված հետազոտություն, ասենք, օրինակ՝ Մ. Բրոննիկովան, խոսելով քաղաքացիաիրավական կանխավարկածի հատկանիշների մասին, եզրահանգում է, որ վերջինիս տրամաբանական հիմքը ոչ լրիվ ինդուկցիան է²⁵: Ամենևին էլ խնդիր չունենալով միջամտելու քաղաքացիագետների «ներքին խոհանոցային» հարցերին՝ այնուամենայնիվ կցանկանայինք մեկ դիտարկում կատարել:

Ոչ լրիվ ինդուկցիայի էությունը հետևյալն է. պայմանական ընդունենք, եթե չոր փայտն այս պահին այրվում է, ապա կարող ենք կատարել դատողություն առ այն, որը վաղը նույնպես այրվելու է²⁶: Սակայն արդյոք նույնը կարող ենք ասել իրավական կանխավարկածների մասին, օրինակ՝ անդել, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճության կամ ողջամտության կանխավարկածնե-

րը ձևավորվել են հեղինակի կողմից նշված ոչ լրիվ ինդուկցիոն մեթոդի օգնությամբ: Այս երկու կանխավարկածները, ըստ էության, իրավունքի հիմքում ընկած գաղափարները կենսագործողներն են: Ինչևէ... Մենք ոչ թե քննադատում ենք Մ. Բրոննիկովային այն հարցում, թե ինչու է համարձակվել ասել, որ քաղաքացիաիրավական կանխավարկածների հիմքը ոչ լրիվ ինդուկցիան է, այլ նրա համար, որ չի պատասխանել այն հարցին, թե որն է այդպիսի եզրահանգման հիմքում ընկած մեթոդաբանությունը:

Իրավիճակը նույնն է նաև մյուս հեղինակների մոտ²⁷: Խնդիրը, ըստ էության, նաև այն է, որ հետազոտողները ձևական-իրավաբանական մեթոդը և ձևական տրամաբանությունը համարում են որպես իրավական կանխավարկածների էության վերհանման միջոց: Մինչդեռ ինչպես առաջինը, այնպես էլ երկրորդը հնարավորություն չեն տալիս ճանաչելու երևույթի էությունը: Վերջիններս կոչված են ոչ թե իմացաբանական տեսանկյունից քննարկելու երևույթի (կանխավարկածի) բովանդակությունը (էությունը), այլ երևույթի վերաբերյալ արդեն իսկ ձևավորված մտածողության (մտքի) կանոնավորությունը²⁸, այսինքն՝ ձևական տրամաբա-

понятии презумпций и их месте в системе средств юридической техники» / Первые Бабаевские чтения «Правовые презумпции: теория, практика, техника» / Юридическая техника, № 4, 2010, էջ 76, **Мейер Д.И.**, Избранные произведения по гражданскому праву. М.: Изд. АО Центр ЮрИнфоР, 2003, էջ 98, **Ойгензихт В.А.**, Презумпции в советском гражданском праве. Душанбе: Изд. Ирфон, 1976, էջ 31, **Баранов В.М., Перший В.В., Паршина И.В.**, Методологические предпосылки формирования теории правовых презумпций // Юридическая техники. 2008, № 2, էջ 20, **Жажина О.В.**, Презумпции как субсидиарные правовые нормы: автореф. дисс. канд. юрид. наук. Санкт-Петербург, 2011, էջ 8, **Левенталь Я.Б.**, К вопросу о презумпциях в советском гражданском процессе // Советское государство и право. 1949, № 6, էջ 64, **Штейнберг А.**, Предположения как доказательства в гражданском процессе // Советская юстиция. 1940, № 13, էջ 11, Энциклопедический словарь / под ред. Ф. А Брокгауза и И. Л. Эфрона. СПб.: Изд. Типо-Литография, 1898, Том XXV, էջ 52, Современный словарь иностранных слов. М.: Изд. Рус. яз., 1992, էջ 740, **Дыдынский Ф.М.**, Латинско-русский словарь к источникам римского права: 2-е изд., испр. и доп. Варшава: Изд. Тип. К. Ковалевского, 1896, էջ 432, **Нефедьев Е.А.**, Учебник русского гражданского судопроизводства. Краснодар: Изд. Совет. Кубань, 2005, էջ 215:

²⁴ Տե՛ս օրինակ **Грубцова С.П.**, Правовые презумпции в судебном административном процессуальном праве: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2018, 116-122 էջեր:

²⁵ Տե՛ս **Бронникова М.Н.**, Гражданско-правовая презумпция по российскому законодательству: содержание, правовые формы и применение: дисс. канд. юрид. наук. Самара, 2006, էջ 170:

²⁶ Տե՛ս **Владимиров Л.Е.**, Учение об уголовных доказательствах. Общая часть. 2-е изд., доп. Харьков: Изд. Тип. Каплана и Бирюкова, 1888, էջ 9, ինչպես նաև՝ **Асмус В.Ф.**, Логика. М.: Изд. ОГИЗ, 1947, էջ 302:

²⁷ Տե՛ս օրինակ **Мосин С.А.**, Конституционные принципы и презумпции-принципы: монография. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юстицинформ, 2018, **Кузнецова О.А.**, Специализированные нормы российского гражданского права: теоретические проблемы: дисс. докт. юрид. наук. Екатеринбург, 2007, **Марохин Е.Ю.**, Юридическая фикция в современном российском законодательстве: дисс. канд. юрид. наук. Ставрополь, 2004, **Тарасенко В.В.**, Презумпции и фикции в современном уголовном праве России: дисс. канд. юрид. наук. Воронеж, 2017:

²⁸ Տե՛ս օրինակ **Иванов Е.А.**, Логика: учеб. для студентов юрид. вузов и фак. 3-е изд., перераб. и доп. М.: Изд. Волтерс Клувер, 2007, էջ 14-16, **Кириллов В.И., Старченко А.А.**, Логика: учебник для юридических вузов. Под ред. проф. В.И. Кириллова. 6-е изд., перераб. и доп. М.: Изд. Проспект, 2008, էջ 14, **Бочаров В.А., Маркин В.И.**, Введение в логику. М.: Изд. ИД ФОРУМ, 2008, 21-27 էջեր:

նությունը հարցերը դիտարկում է գոյություն ունեցող մտածողության կառուցվածքի և գործառույթների շրջանակներում, ուսումնասիրում է մտածողության բաղկացուցիչ տարրերը և կապերը:

Եթե սեղանը մաքրենք, ապա կարող ենք արձանագրել, որ մեր կողմից կատարված այս «շրջայցը» թույլ է տալիս եզրահանգելու, որ առկա իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտություն իրականացնելիս և ոչ մեկը չի բարձրաձայնում այն մասին, թե որն է իրավական կանխավարկածների շուրջ առկա տարբեր մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման հիմքում դրվող մեթոդաբանությունը: Կյանքը ցույց է տալիս՝ դասական այն մոտեցումը, ըստ որի «սույն հետազոտության մեթոդաբանական հիմքը դիալեկտիկական, համակարգային, պատմական, տրամաբանական, ձևական-իրավաբանական, համեմատաիրավական [...] մեթոդներն են» և այսպես շարունակ, այլևս սպառել են իրենց. մեթոդների արհեստական կիրառումը մինչ օրս չի տվել վերը նշված հարցի պատասխանը (խոսքը հայեցակարգի մշակման մասին է): Հետևաբար, իրավաբանական հանրության առջև ծառայած խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ոչ թե մեթոդների արհեստական լուծում, այլ՝ հստակ մեթոդաբանություն:

Այդ մեթոդաբանությունը, մեր պատկերացմամբ, կարող է լինել իրավունքի գործիքակազմային տեսությունը: Ընդ որում հարկ ենք համարում նշել, որ այս առումով ելակետ ենք ըն-

դունում Դ. Կերիմովի այն տեսականը, ըստ որի՝ մեթոդաբանությունն ինտեգրալ երևույթ է, որն իր մեջ ներառում է մի շարք բաղադրատարրեր, ինչպիսիք են՝ աշխարհընկալումը, հայեցակարգերը, ընդհանուր փիլիսոփայական օրենքներն ու կատեգորիաները, ընդհանուր և մասնավոր գիտական մեթոդները²⁹:

Հեղինակի տեսականի վրա հիմնված մեր մոտեցման էությունն այն է, որ իրավունքի գործիքակազմային տեսությունը՝ որպես մեթոդաբանություն, պարզապես մեթոդների մասին ուսմունք չէ. մեթոդաբանական հայեցակարգ է, որը կառուցվածքային առումով բաղկացած է դիալեկտիկական, պրագմատիկ, ընդհանուր-գիտական, մասնավոր-գիտական և մետատեսականից դեպի պրակտիկ գործունեության անցման մակարդակներից, որոնք, միասին վերցրած, ապահովում են գիտական հետազոտության արդյունքների ամբողջականությունը և այդ արդյունքների ներդրումը մարդկային գործունեության մեջ³⁰:

Եզրահանգում: Այսպիսով՝ ընդհանրացնելով վերոգրյալը՝ ստորև կարող ենք արձանագրել հետևյալի մասին:

- Կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ իրավաբանական դոկտրինում իրավական կանխավարկածների շուրջ առկա իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավունքի տարբեր ճյուղերի շրջանակներում հետազոտություն իրականացնող իրավագետները չեն բարձրաձայնում իրավական կանխավարկածների շուրջ առ-

²⁹ Տե՛ս **Керимов Д.А.**, Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. М.: Изд. Аванта, 2001, էջ 46, ինչպես նաև՝ **Петряев К.Д.**, Вопросы методологии исторической науки. Киев: Изд. Вища школа, 1971, էջ 8, **Лебедев С.А.**, Роль индукции в процессе функционирования современного научного знания // Вопросы философии. 1980, № 6, էջ 87, **Алексеев П.В.**, Предмет, структура и функции диалектического материализма. М.: Изд. МГУ, 1983, էջ 133, **Семенюк Э.П.**, Общенаучные категории и подходы к познанию. Львов: Изд. при Львов. ун-те, 1978, էջ 6, **Марков М.**, Технология и эффективность социального управления. М.: Изд. Прогресс, 1982, էջ 85-133:

³⁰ Մեթոդաբանական մակարդակների մասին տե՛ս, օրինակ՝ **Сырых В.М.**, История и методология юридической науки: Учебник. М.: Изд. Норма, 2018, էջ 50-67, **Яркова Е.Н.**, История и методология юридической науки: учебное пособие. Тюмень: Изд. Тюменс. гос. ун-та, 2012, էջ 96-102, **Аверин М.Б., Никитин П.В., Федорченко А.А.**, История и методология юридической науки. Курс лекций. М.: Изд. РПА, 2012, էջ 192-206, **Штанько В.И.**, Философия и методология науки. Учебное пособие. Харьков: Изд. ХНУРЭ 2002, էջ 84-95, **Бахтина И.Л., Лобут А.А., Мартюшов Л.Н.**, Методология и методы научного познания: учебное пособие. Екатеринбург: Изд. Урал. гос. пед. ун-т., 2016, էջ 36-37, **Рузавин Г.И.**, Методы научного исследования. М.: Изд. Мысль, 1975, էջ 216, Философия и методология познания: Учебник. Под общ. и науч. ред. В.Л. Обухова, Ю.Н. Солониной, В.П. Сальникова и В.В. Васильковой. СПб.: Изд. РДК-принт, 2003, էջ 44, Философия: учеб. пособие: ред. Т.Х. Керимова: Екатеринбург: Изд. Урал ун-та, 2013, էջ 44, **Юдин Э.Г.**, Системный подход и принцип деятельности: Методологические проблемы современной науки. М.: Изд. Наука, 1978, էջ 40-44:

կա տարբեր մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման մեթոդաբանության մասին:

- Իրավական կանխավարկածի փիլիսոփայական, սոցիոլոգիական և իրավական ասպեկտների միավորման հնարավորություն ընձեռող մեթոդաբանությունը, որը վերջին հաշվով ուղղված կլինի ընդհանուր տեսության հայեցակարգի մշակմանը, մեր կարծիքով կարող է լինել իրավունքի գործիքակազմային տեսությունը: Մասնավորապես, իրավունքի գործիքակազմային տեսությունը՝ որպես մեթոդաբանություն, պար-

զապես մեթոդների մասին ուսմունք չէ. այլ մեթոդաբանական հայեցակարգ, որը կառուցվածքային առումով բաղկացած է դիալեկտիկական, պրագմատիկ, ընդհանուր-գիտական, մասնավոր-գիտական և մետատեսականից դեպի պրակտիկ գործունեության անցման մակարդակներից, որոնք, պիտանիության և օգտակարության տեսանկյունից միասին վերցրած, կապահովեն գիտական հետազոտության արդյունքների ամբողջականությունը և այդ արդյունքների ներդրումը մարդկային գործունեության մեջ:



ՀԱՅԿ ՇԱՀՐԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՕՐՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՍՈՒԲԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Սուբյեկտի մասին փիլիսոփայական ուսմունքն արդիական էր մտածողության արևմտամետրոպական հարացույցի շրջանակներում: Չնայած հին հունական միտքը նույնպես մշտապես դիմում էր սուբյեկտի թեմատիկային, սուբյեկտի ժամանակակից փիլիսոփայական հայեցակարգը չի հանդիսանում հին հունական փիլիսոփայության գաղափարների օրգանական զարգացում¹: Սուբյեկտի ժամանակակից հասկացությունը արևմտամետրոպական գիտական մտքի արդյունք է: *Սուբյեկտ* հասկացության ձևավորման գործում առաջատար դեր է խաղացել արևմտամետրոպական կրոնական փիլիսոփայությունը: Սուբյեկտի ժամանակակից հասկացության ստեղծման ժամանակ որպես ելակետ ծառայել է կամքի ազատության հիմնախնդիրը: Արևմտամետրոպական փիլիսոփայության շրջանակներում ձևավորված սուբյեկտի հայեցակարգը թույլ տվեց պատկերացնել մարդուն իբրև ազատ կամքի ու շահի կրողի, իսկ վերջին հաշվով՝ նաև իբրև մեղսագրման սուբյեկտի: Սուբյեկտի հանդեպ այդպիսի մոտեցումը իրավագիտությանը հնարավորություն ընձեռեց ձևավորել սուբյեկտիվ իրավունքի մասին ուսմունքն ու իրավաբանական պատասխանատվության մասին հայեցակարգը:

XIX դարի իրավական մտքի և իրավագիտության մեջ գոյություն ունեցած սուբյեկտիվ իրավունքի մասին ուսմունքները կարելի է համակարգել հինգ խմբերով՝ կամային, շահի, կոմբինացիոն, հոգեբանական, նորմատիվիստական տեսություններ²: Իրավագիտության մեջ առկա սուբյեկտիվ իրավունքի բոլոր տեսությունների բաժանումը բնական-իրավական և պոզիտիվիստական տեսությունների մեթոդաբանորեն անհիմն է:

Սուբյեկտիվ իրավունքի բոլոր տեսությունները, որոնք գոյություն են ունեցել XIX դարի իրավագիտության մեջ, բացի նորմատիվիստականից, չեն ըմբռնում օբյեկտիվ իրավունքի՝ սուբյեկտիվի նկատմամբ առաջնահերթության գաղափարը: Ընդհակառակը, դիտվում է միտքն այն մասին, որ օբյեկտիվ իրավունքը կյանք է տալիս սուբյեկտիվ իրավունքին, պետության հարկադրական իշխանությունը հենց միանում է անհատի կամքին: Սուբյեկտիվ իրավունքի ծառայողական դերը օբյեկտիվի հանդեպ լիովին հաստատվում է միայն իրավունքի նորմատիվիստական հայեցակարգով: XIX դարի իրավական միտքը ճանաչում էր միասնական հասկացություն օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի համար:

XIX դարի իրավագիտությանը բնորոշ է այն, որ սուբյեկտիվ իրավունքը էապես լցվում է կամքով և (կամ) շահով: Բացառություն է կազմում միայն նորմատիվիստական տեսությունը, որը սուբյեկտիվ իրավունքում տեսնում էր օբյեկտիվ իրավական նորմի կարգադրությունների մարմնավորման գործիքը: Կամային տեսության, շահի տեսության, կոմբինացիոն և հոգեբանական տեսություններին բնորոշ է սուբյեկտիվ իրավունքի դուրսբերումը ոչ թե օբյեկտիվ նորմից, այլ բուն սուբյեկտից, նրա կամքից ու շահից:

Իրավունքի մասին Ա. Պետրաժիցկու ուսմունքը հարկավոր է դիտարկել իբրև սուբյեկտիվ իրավունքի առանձին հոգեբանական տեսություն: Սակայն ի տարբերություն բոլոր այլ տեսությունների՝ իրավունքի հոգեբանական հայեցակարգը սուբյեկտիվ իրավունքը հասկանում է արդեն ոչ թե իբրև իրավական նյութի մաս, այլ իբրև դրա միակ մարմնավորում: Ուստի Լ. Պետրաժիցկու ուսմունքի առանձնա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

¹ Տեն Ներսեսյանց Վ.Ս., Իրավագիտություն: Եր., 2002:

² Տեն Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն: Եր., 2001:

հատկությունն է սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի հստակ սահմանված հարաբերակցության բացակայությունը³:

«Սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի զարգացման խորհրդային փուլին բնորոշ էին հետևյալ մոտեցումները՝ 1) սուբյեկտիվ իրավունքը հնարավոր վարքագծի չափ է՝ օբյեկտիվ իրավունքով սահմանված շրջանակներում, 2) սուբյեկտիվ իրավունքը երկրորդական է օբյեկտիվ հանդեպ և կատարում է ծառայողական գործողություն: Սուբյեկտիվ իրավունքի՝ նախկինում գոյություն ունեցած տեսությունների ողջ բազմազանությունից ճանաչում է ստացել նորմատիվիստական տեսությունը: Միասնական հասկացությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի համար մերժվում էր խորհրդային իրավագիտության կողմից՝ իբրև մեթոդաբանական առումով չհիմնավորված: Սուբյեկտիվ իրավունքի էական բնութագրերը այժմ հետևյալն են՝ ընդհանուր առմամբ դա հասարակական կամք է և հասարակական շահ, մասնավորապես, բարիք, որ ձեռք է բերվում անհատի կողմից սուբյեկտիվ իրավունքի օգտագործման ժամանակ: Այդպիսի մոտեցման ժամանակ կամքն ու շահը չեն կարող կատարել սուբյեկտիվ իրավունքի էության դերը, ինչպես դա պնդում էին սուբյեկտիվ իրավունքի որոշ տեսություններ:

Խորհրդային իրավագետների կողմից առաջադրված «սուբյեկտիվ իրավունք՝ օբյեկտիվ իրավունքի կողմից սահմանված սահմաններում հնարավոր վարքագծի չափ» և «սուբյեկտիվ իրավունքն անհանգստացնող է օբյեկտիվ իրավունքից» թեզերը պահպանեցին իրենց գերիշխող դիրքը ժամանակակից իրավագիտության մեջ⁴: Ժամանակակից իրավագիտության կողմից առանձնացվող սուբյեկտիվ իրավունքի հատկանիշները (պատկանելությունը կամ չպատկանելիությունը սուբյեկտին, դրանից կախվածություն կամ կախված չլինելը) նպատակահարմար չէ դիտարկել իբրև միմյանց հավասարազոր, քանի որ դրանցից մեկը (պատկանելիությունը) բխում է մյուսից (կախվածություն), իսկ, ավելի ճիշտ մեկն ուղեկցում է մյուսը:

Այսպիսով՝ սուբյեկտիվ իրավունքի բնու-

թագիրն իբրև սուբյեկտից կախվածի՝ իրավաչափ է միայն սուբյեկտի կողմից իրեն օբյեկտիվ նորմայով առաջարկվող վարքագծի տարբերակներից ընտրության հնարավորության իմաստով: Սուբյեկտիվ իրավունքի հատկանիշները, որոնք առանձնացվում են ժամանակակից իրավագիտության կողմից խորհրդային իրավագիտության դիրքերից, չեն բացահայտում սուբյեկտիվ իրավունքի իսկական էությունը, այլ մատնանշում են միայն վերջինիս գործիքային դերն օբյեկտիվ նորմի նկատմամբ, ինչը, իր հերթին, հանդիսանում է այսօր գերիշխող իրավունքի հանդեպ նորմատիվիստական մոտեցման հետևանքը: Տվյալ պայմաններում սուբյեկտիվ իրավունքը՝ ազատության, դիսպոզիտիվության հատկանիշներով օժտելն արդարացված չէ: Սուբյեկտիվ իրավունքի նախահեղափոխական մեկնաբանությունների և դրա այսօրվա ընկալման միջև տարբերությունն էական ու հայեցակարգային է: Ընդ որում, խոսքը գնում է ոչ թե նախահեղափոխական պատկերացումների հաջորդական զարգացման և խորհրդային իրավագիտության մեջ դրանց վերափոխման մասին, այլ, ավելի շուտ, հաջորդականության խաթարման մասին:

Սուբյեկտիվ իրավունքի էությունը վերանայվել է պետության և հասարակության միջև հարաբերակցության փոփոխության ազդեցության ներքո: Պետական իշխանության ուժեղացումը պայմանավորել է սուբյեկտիվ իրավունքի օգտագործումն իբրև իրավական վարքագծի նորմավորման գծով գործիք: Անհրաժեշտ է տվյալ հանգամանքը հաշվի առնել սուբյեկտիվ իրավունքի սահմանման ձևակերպման ժամանակ:

«Սուբյեկտիվ իրավունք» և «սուբյեկտիվ իրավունքներ» հասկացությունները գտնվում են տարբեր իմաստային հարթություններում: Այն է «սուբյեկտիվ իրավունք» եզրույթն ավելի նպատակահարմար է սահմանել «օբյեկտիվ իրավունք - սուբյեկտիվ իրավունք» համակարգի շրջանակներում: «Սուբյեկտիվ իրավունքներ» հասկացությունը ենթադրում է իրավահարաբերության սուբյեկտի մոտ առկա հստակ իրավասությունների լուսաբանումը, այն է՝ տեղա-

³ Տե՛ս Петражицкий Л.И., Теория права и государства в связи с теорией нравственности. СПб, 2000:

⁴ Տե՛ս Теория государства и права, М., 1985:

փոխել ողջ դիսկուրսը «իրավահարաբերություն», «իրավական կարգավորման մեխանիզմ» ոլորտ: Դրանից հետո, երբ «սուբյեկտիվ իրավունքը» փոխարինվում է «սուբյեկտիվ իրավունքներ» կատեգորիայով, արդեն դժվար է վիճարկել, վիճելի եզրույթը սուբյեկտիվ իրավունքի՝ օբյեկտիվ իրավունքի հանդեպ երկրորդական լինելու մասին:

Անհրաժեշտ է հստակ տարբերակել սուբյեկտիվ իրավունքի՝ իբրև համատեսական կատեգորիայի կառուցվածքը և սուբյեկտիվ իրավունքի՝ իրավունքի որևէ կատեգորիայի հանդեպ կիրառվող կառուցվածքը: Սուբյեկտիվ իրավունքի համատեսական եռանդամ կառուցվածքը չպետք է փոխարինվի իրավահարաբերության սուբյեկտի իրավագործությունների հանրագումարով:

Պաշտպանության իրավունքն անհրաժեշտ է դիտարկել որպես սուբյեկտիվ իրավունքի լիարժեք կառուցվածքային տարր: Տվյալ իրավասությունը, ներառված լինելով սուբյեկտիվ իրավունքի համատեսական կատեգորիայի մեջ, խորհրդանշում է պաշտպանվածության որակը, պետության մշտական պատրաստականությունն օգտագործելու դրա հարկադրանքի ուժը՝ խախտված իրավունքի վերականգնման համար: Հավակնության իրավունքը հենց պետական հարկադրանքի ապարատը գործի դնելու հնարավորության մեջ է: Համատեսական մոդելը չի ենթադրում պաշտպանության իրավունքի հանգում որոշակի իրավասությունների հավաքածուին՝ թվարկելով դրանց թղթակցող իրավաբանական պարտականությունները:

Սուբյեկտիվ իրավունքը սոցիալական իրականության արտացոլումն է իրավունքի սուբյեկտի իրավագիտակցության մեջ, որը թույլ է տալիս բացահայտել օբյեկտիվ իրավունքի նորմի վրա հիմնված հնարավոր վարքագծի չափը՝ նպատակ ունենալով բավարարել օրինական շահը, որն արտահայտում է բուն իրավասու անձի կողմից որոշակի գործողությունների կատարման հնարավորությունը, իրավասու անձի կողմից պարտավոր անձից որոշակի վարքագիծ պահանջելու հնարավորությունը, ինչպես նաև անհրաժեշտ դեպքերում պետության հարկադիր ուժին դիմելու հնարավորությունը:

Տվյալ սահմանումը ենթադրում է հետևյալ իմաստային հիմնավորումները.

- «արտացոլում» կատեգորիայի միջոցով սուբյեկտիվ իրավունքի սահմանման ժամանակ շեշտը դրվում է սուբյեկտի մոտ իր սուբյեկտիվ իրավունքի մասին պատկերացումների ձևավորման գործում իրավագիտակցության ակտիվ դերի վրա: Սոցիալական իրականությունը, բեկվելով սուբյեկտի իրավագիտակցությամբ, ակտիվորեն ներգործում է «սուբյեկտիվ իրավունք» հասկացության իմաստային լրացման վրա,
- «սուբյեկտիվ իրավունք» արտահայտությունն իրենից ներկայացնում է օբյեկտիվ իրավունքի նորմի վրա հիմնված՝ հնարավոր վարքագծի չափ, հետևաբար չպետք է մեկնաբանվի իբրև փաստարկ հոգուտ սուբյեկտիվ իրավունքի ածանցյալության, երկրորդականության օբյեկտիվի նկատմամբ,
- անհրաժեշտ է նաև նկատի ունենալ այն փաստը, որ սուբյեկտիվ իրավունքի ժամանակակից տեսության մեջ օգտագործվող «շահ» հասկացությունը կատարում է գործիքային դեր և այլևս հանդես չի գալիս իբրև սուբյեկտիվ իրավունքի էական լրացում,
- ժամանակակից իրավագիտության կողմից առանձնացվող՝ սուբյեկտիվ իրավունքի հատկանիշները (սուբյեկտին պատկանելությունն ու սուբյեկտից կախվածությունը) նույնպես չեն կարող բառացիորեն մեկնաբանվել: Այդ հատկանիշները նպատակահարմար չէ դիտարկել իբրև միմյանց համարժեք, քանի որ դրանցից մեկը (պատկանելիությունը) բխում է մյուսից (կախվածություն), ավելի ճիշտ, մեկն ուղեկցում է մյուսին: Սուբյեկտիվ իրավունքի բնութագիրը՝ իբրև սուբյեկտից կախված, իրավաչափ է միայն սուբյեկտի կողմից իրեն օբյեկտիվ նորմով առաջարկվող վարքագծի տարբերակներից ընտրության հնարավորության իմաստով,
- անհրաժեշտ է կշռադատված մոտեցում սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի փոխգործության հիմնախնդրի, սուբյեկտիվ

իրավունքի և իրավաբանական պարտականության, որի ժամանակ յուրաքանչյուր կատեգորիան կստանար ճանաչում որպես ինքնարժեք:

Գիտական առումով հեռանկարային է սուբյեկտիվ իրավունքի սահմանումն իբրև «անձնական իրավական հզորության ոլորտ» կամ «սուբյեկտի իրավական հզորության ոլորտ»: Այն թույլ է տալիս նշել ինքնության պահը, սուբյեկտով իրավունքի լրացման փաստը: Սուբյեկտիվ իրավունքը, որը գիտակցված է իբրև «անձնական իրավական հզորության ոլորտ», իրավական մշակույթի համատեքստում առաջին հերթին ենթադրում է ոչ թե սուբյեկտի կողմից իր իրավական հնարավորությունների ակտիվ որոնում և ոչ թե սուբյեկտի կողմից այդ սահմանների ընդլայնման ձգտում, այլ, ընդհակառակը, սուբյեկտի ինքնապարտա-

դրում, իրեն հասած իրավունքի բեռի գիտակցում:

Իրավունքի մասին սուբյեկտի պատկերացումներին ներկայումս տրվում է երկրորդական դեր՝ սուբյեկտիվ տարրերը, որոնք իրենց արտահայտությունն են գտնում իրավագիտակցության և սուբյեկտիվ իրավունքի մեջ կամ դուրս են մղվում իրավունքի ծայրամաս կամ ընդհանրապես դուրս են բերվում վերջինիս սահմաններից: Տվյալ դիրքորոշումը չի կարող բավարար ճանաչվել: Իրավագիտակցությունը նպատակահարմար չէ դիտարկել իբրև արտահրավական երևույթ⁵: Այն չափով, որով արտացոլում է օբյեկտիվ նորմը, այն հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքի փոխանցիչ (ծագման գործոն): Իրավագիտակցությունը պետք է ստեղծագործորեն ակտիվ դեր խաղա սուբյեկտիվ իրավունքի ընկալման գործում:



⁵ Տե՛ս Лившиц Р.З., Теория права.М.,2001.

ԱՆԱՀԻՏ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԱՆՔԱԿՏԵԼԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻԾ

Չնայած նրան, որ իրավաբանական գրականության մեջ քննարկվում են իրավունքի հասկացության տարբեր ոլորտներ, սակայն իրավունքի դոգման և օրենսդիրը նախկինի պես սահմանում են իրավունքի սուբյեկտը ֆորմալ-իրավաբանական առումով իրավագործունակության կամ իրավասուբյեկտության միջոցով: Պարզ է, որ նկատի ունենալով *սուբյեկտ* հասկացության սահմանման այս հին ավանդույթը՝ Ս. Ալեքսեևը նշում է. «իրավունքի սուբյեկտ և իրավասուբյեկտություն կատեգորիաները իրենց բովանդակությամբ համընկնում են»¹: Տարբեր իրավական դոկտրինների առաձևահատկությունները, հատկապես գերմանականը (իրավասուբյեկտությունը և իրավունակությունը նույնականացնող) և ֆրանսիականը (հասկացության մեջ իրավասուբյեկտությունը, իրավունակությունը և գործունակությունը) սկզբունքային նշանակություն չունեն: Իրավունքի սուբյեկտը օրենսդրական ակտերի տեքստերում սահմանվում է ու շարունակում է սահմանվել որոշակի վարիացիաներով և լրացումներով որպես անձի՝ իրավունքներ ու պարտականություններ ունենալու ֆորմալ կարողություն, որը լրացվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռքբերելու ու իրականացնելու, իր համար ստեղծելու և պարտականություններ կատարելու կարողությամբ՝ գործունակություն:

Իրավունքի սուբյեկտի՝ որպես իրավագործունակության մասին նշված պատկերացումների ամրությունը, հիմնավորվածությունը արտաքին են, խաբուսիկ, նրանք այդքան էլ կայուն չեն: Այս պատկերացումները չեն տալիս համարժեք պատասխաններ տեսության մեջ ու պրակտիկայում առաջացող հարցերին: Գ. Ելինեկն իր «Պետության մասին ընդհանուր ուս-

մունքում» գրում էր. «Իրավական սուբյեկտի հասկացությունը իրավաբանական է ու նշանակում է ոչ թե մարդու համար բնորոշ իրավական որակ, այլ հանդես է գալիս իր էությամբ, ինչպես և այլ իրավական հասկացությունները, որպես հարաբերություն: Մարդը իրավունքի սուբյեկտ է, որը նշանակում է, որ նա գտնվում է որոշակի նորմավորված կամ իրավունքի կողմից ճանաչված հարաբերություններում իրավակարգի հանդեպ: Սուբյեկտը իրավաբանական իմաստով էակ կամ սուբստանցիա չէ, այլ դրսից տրված, իրավակարգի կամքով ստեղծված կարողություն է»²: Այստեղ կենտրոնացված կերպով արտահայտվում է գաղափարն այն մասին, որ իրավունքի սուբյեկտը իրավակարգի ծնունդ է, օբյեկտիվ իրավունքի ստեղծագործության արհեստական արդյունք, բայց չի տրվում պատասխան այն հարցին, թե ինչպես իրավակարգի այդ ծնունդը, որը գտնվում է նրա հանդեպ որոշակի հարաբերություններում, կարող է սահմանել տվյալ իրավակարգը ու նրա իրավասուբյեկտությունը: Եթե անձը, որը կոչվում է իրավունքի սուբյեկտ, ի վիճակի չէ սահմանել ո՛չ իրավակարգը, ո՛չ իր իրավակարողությունը, ապա արդյոք կարելի է նրան համարել այդպիսին: Որքանով է իրավաչափ իրավունքի սուբյեկտի նույնականացումը իրավահարաբերությունների մասնակցի կամ իրավունքերի ու պարտականությունների կրողի հետ: Եթե իրավունքը գործնական հարաբերությունների ոլորտ է, ապա ինչո՞ւ իրավունքի սուբյեկտը սահմանվում է միայն որպես իրավունքերի ու պարտականությունների տիրապետման կարողություն, այլ ոչ թե որպես իրապես գործող իրավական անձ: Բացի այդ, առաջանում են հարցեր այն առիթով, թե ինչու իրավունքի սուբյեկտը բնութագրվում է իրա-

¹ Տե՛ս **Алексеев С. С.**, Общая теория права. Т. 2, էջ 139:
² Տե՛ս **Еллинек Г.**, Общее учение о государстве, СПб, 1903, էջ 106:

վունքների ու պարտականությունների տիրապետման կարողությամբ, այլ ոչ թե, օրինակ, իրավական որոշումներ ընդունելու, իրավական գործունեություն իրականացնելու հնարավորությամբ, իրավական համակարգում հատուկ տեղով, այլ կողմերով: Նման հարցերը կարելի է շարունակել: Բայց խնդրի էությունը կայանում է ոչ թե մասնավոր կողմերում, եզրութաբանական և իրավաբանական նրբություններում, այլ իրավունքի սկզբունքի հանդեպ վերաբերմունքի, սկզբունքային մոտեցման մեջ:

Իր հերթին Ի. Կանտը ձևակերպել է հատուկ իրավական սուբյեկտ լինելու էթիկական-իրավական իմպերատիվ, որը հասցեագրված է անձին, այն նաև կհսում էր Հեգելը³: Համաձայն այդ իմպերատիվի՝ իրավունքի հրամանը հռչակում է. «Եղի՛ր անձ և հարգի՛ր այլոց՝ որպես անձանց»: Կանտը տեսնում էր անձին ավելի շուտ ոչ այլոց համար միջոց, այլ նպատակ⁴: Բացի դրանից, ըստ Կանտի՝ անձը ենթակա է միայն այն օրենքներին, որոնք նա իր համար սահմանում է: Շրջափոխված ձևով այդ բանաձև-իմպերատիվը կարող է երևալ հետևյալ տեսքով. «Եղի՛ր իրավունքի նպատակ, նրա ստեղծող ու նույն կերպ վերաբերվիր նրանց»: Գլխավորը իրավունքի սուբյեկտում կայանում է նրանում, որ նա կարող է կրել իրավունքներ ու պարտականություններ, մասնակցել իրավահարաբերություններում, կատարել ընդունված օրենքները, նրանում, որ նա իրավունքի իրական կենտրոն է, այն առանցքը, որի շուրջ պտտվում են բոլոր իրավական առանցքները, իրավունքի հիմնադիրը և նրա նպատակը: Այս կարևոր կողմը հաշվի չի առնվում օրենսդրի կողմից ու իրավագիտության կողմից *իրավասուբյեկտություն* հասկացության սահմանման ժամանակ:

Իրավասուբյեկտություն հասկացությունը արտահայտում է ոչ միայն պետության՝ անձի հանդեպ վերաբերմունքը, այլ նաև իրավագիտության, իրավաբանության հանդեպ վերաբերմունքը: Այսօր այդ հարաբերությունը կայանում է նրանում, որ պետությունը և իրավաբանությունն իրավասուբյեկտության մեջ տեսնում են ոչ թե անձի դրսևորումը, իրավական ձևը,

այլ միայն իրավաբանական միջոցը, ազդեցության գործիքը: Իրավունքի սուբյեկտը, որը հանդիսանում է որպես ամբողջ իրավահամակարգի հիմք, նրա կենտրոն, որի վրա այն կառուցվում է, որի իրավագիտակցությամբ, գաղափարներով սնվում է, նվազեցվեց մինչև ցածրագույն իրավական մակարդակ, որ չունի այլ տեղ այդ համակարգում, քան միայն իրավահարաբերությունների մի տարր լինելը նրանց օբյեկտի ու բովանդակության հետ մեկտեղ: Տվյալ իրավաբանական կառույցը, որը ծնվել է ֆրանսիական հեղափոխությունից հետո ծագած ռեակցիայի շրջանում, հանդիսանում է որպես իրավական անձի զավեշտալի տեսություն: Բայց այս կառույցը շատ հարմար էր խորհրդային տոտալիտար պետականության համար, որի համար այն փոխ էր առնվել օրենսդրի կողմից ու մինչև այժմ ավանդաբար կիրառվում է հետխորհրդային իրավական համակարգերում: Իրավունքի սուբյեկտը՝ որպես իրավահամակարգի կենտրոն, չի կարող հանդես գալ որպես իրավահարաբերությունների պատկանելիք: Այն չի կարելի նույնականացնել իրավահարաբերությունների մասնակցի հետ, ինչպես նաև իրավունքների ու պարտականությունների կրողի հետ նրա հիման վրա, որ իրավունքի սուբյեկտը ոչ միայն իրավական դերի կատարող է կամ սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների կրող, այլ նաև նրանց ստեղծող, իրավունքի ու ամբողջ իրավական համակարգի հիմնադիր: Բացի դրանից, իրավունքի սուբյեկտը կարող է ստեղծել իր համար ու մասնակցել տարբեր իրավահարաբերություններում, կարող է լինել և՛ գնորդ, և՛ վարձակալ, և՛ ծնող և այլն, կարող է ունենալ իրավունքների ու պարտականությունների տարբեր համալիրներ, կարող է լինել իրավական գործունեության տարբեր տեսակների սուբյեկտներ, կատարել այլ գործառույթներ իրավունքի համակարգում, բայց այն չի կարելի վերագրել այս գործառույթներից, իրավական դերերից, իրավունքների ու պարտականությունների համալիրներից և ոչ մեկին:

Իրավասուբյեկտությունը, հասկացվելով որպես երկու հնարավորությունների միասնու-

³ Տե՛ս Կանտ **И.**, Соч., в 6 т., т. 4, ч. 2, էջ 146, Гегель, Философия права, էջ 98:

⁴ Տե՛ս Կանտ **И.**, նշվ. աշխ., էջ 146:

թյուն, իրավունքեր ու պարտականություններ ունենալու, ինչպես նաև իր գործողությունների հնարավորություններ ունենալու ու իրականացնելու իրավունքի, իր համար պարտականություններ ստեղծելու, կատարելու հնարավորության միասնություն, չի համընկնում *իրավունքի սուբյեկտ* հասկացության հետ: Բացի *իրավունքի սուբյեկտ* հասկացության տվյալ ոլորտից, կարելի է առանձնացնել նաև այլ ոլորտներ:

Այս իմաստով իրավունակությունը այն տեսքով, որում այն սահմանված է օրենսդրության մեջ ու սովորաբար սահմանվում է իրավաբանության մեջ, հանդիսանում է միայն կողմերից մեկը, որով բնութագրվում են իրավունքի սուբյեկտը, անձի՝ որպես իրավունքների ու պարտականությունների հնարավոր կրողի օրենսդրական ճանաչման կողմը: Իրավունքի սուբյեկտի կեցության մնացած ոլորտները օրենսդրի կողմից հաշվի չեն առնվում: Առաջանում է հեռավորություն իրավունքի սուբյեկտ լինելու և իրավագործունակության միջև, առաջին հասկացությունն ըստ ծավալի ավելի լայն է, քան երկրորդը: Տվյալ եզրակացությունը ենթադրում է իրավագործունակություն հասկացության ճշգրտման անհրաժեշտությունը: Առկա հեռավորությունը հաղթահարելու համար առաջարկվում է դիտարկել իրավասուբյեկտիվությունը որպես օրենսդրությամբ սահմանված անձի՝ իրավունքի սուբյեկտ լինելու կարողություն: *Իրավունքի սուբյեկտ* հասկացությունը՝ որպես սինթետիկ ներառում է հասկացություններ՝ իրավահարաբերությունների սուբյեկտ, իրավունքների ու պարտականությունների սուբյեկտ, իրավական գործունեության սուբյեկտ, իրավագիտակցության սուբյեկտ, իրավական գործընթացի սուբյեկտ-մասնակից հասկացությունները: Իրավագործունակության կառույցը նրանցից յուրաքանչյուրին չվերագրելու համար պետք է այն վերագրել իրավունքի սուբյեկտին: Իրավունքի անձ-սուբյեկտը իրավակարող է որպես իրավահարաբերությունների մասնակից, գործունեության սուբյեկտ, իրավունքների ու պարտականությունների կրող նաև այլ իրավական ոլորտներում:

Իրավասուբյեկտության՝ որպես անձի՝ օրենսդրությամբ սահմանված կարողության հասկացումը չի նշանակում *իրավասուբյեկտություն* ու *իրավունքի սուբյեկտ* հասկացությունների

նույնականացում: *Իրավասուբյեկտություն* հասկացության ծավալը ընդլայնվում է, բայց ոչ այն աստիճան, որ այս հասկացությունները դիտարկեն որպես նույնական: Իրավասուբյեկտությունը բացահայտում է իրավունքի սուբյեկտի ֆորմալ կողմը, բովանդակային կողմը նրան հետաքրքրում է այնքանով, որքանով նորմին հետաքրքրում է նրանց հնարավոր շեղումները, իրավասուբյեկտությունը մնում է *իրավունքի սուբյեկտ* հասկացության մի քանի ոլորտներից մեկը:

Իրավասուբյեկտությունը սովորաբար դիտարկվում է որպես անձի իրավաբանական որակ, հասարակական իրավաբանական վիճակ, որն իր բնույթով անքակտելի է անձից: Այն իրավական համակարգին պատկանելիության, որպես հավասարազոր մասնակից նրանում ներկայության, տվյալ համակարգի ռեսուրսներից օգտվելու հնարավորության, նրանից պաշտպանվելու վիճակ է: Այն ձևավորվում է ոչ թե ինքն իրեն, այլ տվյալ որակի, վիճակի առաջացման աղբյուր է հանդես գալիս գործող իրավակարգի, իրավաբանական նորմերի համակարգը: Որ այդ անքակտելի որակը հայտնվի անձի մոտ, անհրաժեշտ է համապատասխան ճանաչում օրենսդրի կողմից: Որ անձը դառնա իրավունքի սուբյեկտ, օրենսդիրը հասցեագրում է նրան, իսկ իրավունքի այս սուբյեկտներին հավասար իր նորմատիվ-իրավական ֆորմալ պահանջներին հետևում կապահովի նրա մուտքը իրավական հանրույթ: Այս իմաստով պայմանների միասնությունը, որ սահմանվում է օրենսդրի կողմից իրավունքի պատենցիալ սուբյեկտների համար, իրավական դարպաս է գործող իրավահամակարգում: Անձը, ով ներառված է նրանցում, ով դարձել է իրավունքի սուբյեկտ, կապված է ընդհանուր իրավական կապով, որը միավորում է նրան իրավակարգի համակարգի, իրավունքի այլ սուբյեկտների հետ: Այս կապը, որը սահմանված է նորմերի հիման վրա, որ կարգավորում են իրավասուբյեկտությունը, կարելի է նաև անվանել իրավասուբյեկտ: Այն առկա է իրավունքի սուբյեկտի առաջացման պահից մինչև նրա դադարը: Բայց այս կապի որոշ տարրեր սուբյեկտի տարբեր կամային ակտերի տեսքով կարող են առկա լինել ու ունենալ իրավաբանական հետևանքներ այլ անձանց համար նրա իրա-

վական սուբյեկտի մահից հետո: Քաղաքացիության հարաբերությունների նման, որոնք սահմանում են մարդու դիրքը պետության մեջ, իրավասուբյեկտ կապը որոշիչ է՝ իրավունքի սուբյեկտի համար իրավական համակարգում:

Նրա միջոցով ձևավորվում ու պահպանվում է իրավունքի սուբյեկտների վերոնշյալ որակը, քանի որ այն ապահովում է անձի մուտքը դեպի իրավական համակարգ և ապահովում է նրա հասանելիությունը բոլոր հնարավորությունների հանդեպ, որոնք տրամադրվում են նրան: Տվյալ կապը որոշիչ է ոչ միայն իրավունքի սուբյեկտների համար, այլ նաև իրավակարգի համակարգի համար, որը տվյալ կապի առաջացման և իրականացման արդյունքում ձեռք է բերում իր հասցեատիրոջ, ստեղծողի ու կատարողի որակ: Իրավասուբյեկտ կապը հիմնվում է նրանում մասնակից սուբյեկտների հավասարության վրա, բայց այդ հավասարությունը տարածվում է միայն նրանց իրավունակության վրա: Նրանցից յուրաքանչյուրը տարակերպորեն ճանաչվում է իրավունքի սուբյեկտի գործառույթների կատարման կրող, որոշիչ իրավական ատյան: Այն չի ենթադրում առանձին իրավունքների, պարտականությունների ու պատասխանատվության միատեսակ ծավալ, ինչպես նաև չի ենթադրում նրանց սուբյեկտիվ գործունակության միատեսակ ծավալ: Վերջինս նշանակում է ոչ թե նրանց գործունակության օրենսդրական սահմանափակում, այլ միայն անձի գործունակության կապվածություն նրա իրավական կամքի, գիտակցության և այլ գործոնների հասունության աստիճանից:

Իրավասուբյեկտ կապը ստատիկ է, անփոփոխ իրավունքի սուբյեկտի համար, այն փոփոխվում է նրա հետ: Ըստ մեզ՝ իրավակարողությունը և գործունակությունը կարող են դիտարկվել որպես այս կապի երկու կարևորագույն փուլեր: Առաջին փուլին՝ իրավակարողությանը համապատասխանում է կամքի, իրավագիտակցության, իրավական գործառույթների ինքնուրույնության կատարման հանդեպ պատրաստակամության իմաստով դեռևս չձևավորված իրավական անձը: Այն սուբյեկտի իրավունք է, որը ներկայացնում է իրենից մաքուր իրավական ձև, իրավական թաղանթ, որը գուրկ է իրավական բովանդակությունից՝ անձի կամային որոշումներից: Նրանց կամքը փոխա-

րինվում է իրավունքի այլ սուբյեկտների կամքերից, ովքեր գործում են նրա անունից օրենքի հիման վրա: Իրավունքի տվյալ սուբյեկտը իրավաբանական առումով էական իրական սուբյեկտ է, բայց ոչ գործող, ինքնուրույն իրավական որոշումներ ընդունող, նրանք սեփական գործողություններ իրականացնել անկարող են, այսինքն՝ իրավունքի անլիարժեք սուբյեկտ են: Իրավական անձը, ունենալով այդպիսի իրավական թաղանթ, հասունանում է նրանում, ձևավորում է իր իրավական որակները այնքան ժամանակ, քանի դեռ չի կարող ինքնուրույնաբար մասնակցել իրավական հաղորդակցմանը: Եթե հարաբերակցենք իրավակարողությունը իրավական կամքի կյանքի ավելի վաղ առանձնացված փուլերի հետ, ապա իրավասուբյեկտ կապի շրջափոխման տվյալ փուլին համապատասխանում են իրավական կամքի գոյության երկու փուլերը: Առաջին փուլին՝ վերացական-համընդհանուր փուլին՝ ըստ մեզ համապատասխանում է իրավակարողությունը, որը հասկացվում է ոչ թե սուբյեկտիվ իմաստով, այլ ինստիտուցիոնալ, կոնկրետ անձին չվերագրվող իմաստով, իրավակարողությունը՝ որպես նորմատիվ կապ: Երկրորդ փուլին՝ եզակի իրավական կամքի գոյության փուլին, համապատասխանում է իրավակարողությունը սուբյեկտիվ իմաստով:

Իրավասուբյեկտիվ կապի զարգացման երկրորդ փուլը իրավական անձի կողմից այդ գործունակության ձեռքբերման փուլն է: Այն ենթադրում է իրավունքի սուբյեկտի գործառույթների իրականացման պատրաստակամություն:

Գործունակության փուլը սահմանում է իրավասուբյեկտ կապի գործարկման մեկ այլ մակարդակ, այն իրավունքի սուբյեկտի վերացական հնարավորությունից անցումն է իրականության, անձ, ով պատրաստ է ինքնուրույնաբար իրականացնել իրավական գործունեություն, ստեղծել իրավունք, ձեռքբերել ու իրացնել իր իրավունքներն ու պարտականությունները, կրել իրավաբանական պատասխանատվություն իր իրավական արարքների համար:

Իրավունակության փուլը մի կողմից ենթադրում է որպես անհրաժեշտ պայման այն իրավական ձևը, իրավական թաղանթը, որը հայտնվում է անձի մոտ իրավունակության ձևավորման պահին, իսկ մյուս կողմից ոչ գործու-

նակ մարդու համար այս ձևը ստանում է իր իրավաբանական բովանդակությունը, դառնում բովանդակային ձև: Տվյալ ձևը ոչ միայն արտահայտում է անձի՝ իրավունքի սուբյեկտ լինելու հնարավորությունը, այլ սահմանում է «իրավական գործունեության նաև այն տեսակները, իրավահարաբերությունների տեսակները, կոնկրետ իրավական գործառույթները, որոնք կարող են իրականացնել իրավական անձինք: Գործունակությունը չի կարելի դիտարկել որպես իրավունակության գոյության կողմ, այն իրավասուբյեկտության զարգացման ինքուրույն փուլ է, որն արտահայտում է անցումը իրավունքի վերացական սուբյեկտից որպես իրավական հնարավորություն դեպի իրավական անձի իրականություն: Որպես իրավասուբյեկտության զարգացման բարձր մակարդակ՝ գործունակությունը իրավունքի սուբյեկտի ինքնուրույն գործողությունների ձևական իրավաբանական դրսևորումն է:

Պետությունը, համայնքային կազմավորումները չունեն ընդհանուր, համընդհանուր իրավունակություն: Նրանց իրավունակության աղբյուրը քաղաքացիների իրական կամքն է: Այն ձևավորում է իրավունակությունը, սահմանում է իրավունքի հանրային սուբյեկտների իրավական հնարավորությունները՝ իրավական նպատակների ու խնդիրների հաշվառմամբ: Իրավունքի հանրային սուբյեկտներին իրավունա-

կությունը չի կարող ունենալ համընդհանուր բնույթ, այն ինչպես նաև առևտրային կազմակերպությունների, մասնավոր և ոչ առևտրային կազմակերպությունների իրավունակությունը, պայմանավորվում է նրանց ստեղծման նպատակներով, հատուկ է: Այն, որ պետությունը թույլ է տալիս իրեն անտեսել իրենց քաղաքացիների կամքն ու պարտադրել նրանց իր իրավաբանական որոշումները, գործում է որպես սուվերեն և վկայում է նրա ոչ իրավական բնույթի, իրավական կամքի՝ իր կողմից բաժանման մասին: Սեփական քաղաքացիների իրավական կամքի անտեսումը այն բանի արտաքին դրսևորում է, որ պետությունը լքում է իրավունքի, իրավահարաբերությունների ոլորտը ու սկսում է վերաբերվել իր քաղաքացիներին որպես ենթակաների հանդեպ քաղաքական իշխանության սուբյեկտ: Պետության ու նրա քաղաքացու միջև իրավական կապի վերականգնումը առաջացնում է նրա հատուկ իրավունակություն, նրա իրավական հնարավորություններ՝ նպատակներով ու խնդիրներով պայմանավորվածության վերականգնում: Միայն անհատն ունի ընդհանուր հանընդհանուր, իրավունակություն. իրավունքի մնացած սուբյեկտները կարող են ունենալ միայն հատուկ իրավունակություն, որն ապահովում է այն նպատակների ու խնդիրների իրականացումը, որոնց համար նրանք ստեղծված են:



ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Իրավական համակարգերի գլոբալացման և ինտեգրման պայմաններում տեղի են ունենում փոփոխություններ իրավունքի ֆորմալ (ձևական) աղբյուրներում, որոնք պայմանավորված են տվյալ համակարգի և կարգավորվող հասարակական հարաբերությունների միջև կորելացիոն կապերի արժեքի աճով: Առավել նկատելի է դառնում քաղաքակրթական բնույթի խորքային սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունը իրավունքի աղբյուրների համակարգի հիերարխիկ կառուցվածքի վրա: Այս առումով սրությամբ է զգացվում իրավունքի աղբյուրների համակարգի և հիերարխիայի իրավական ամրագրման պահանջը:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ իրավունքի աղբյուրների հիերարխիայի հարցերը բոլոր ժամանակներում եղել և մնում են արդիական¹: Այս առումով, գտնում ենք, որ անհարժեշտ է շարունակել, և մասնավորապես լուծել հետևյալ հարցադրումները. 1) *իրավունքի աղբյուրների հիերարխիայի* հասկացության հստակեցում, 2) հասարակական հարաբերությունների բովանդակության, ձևի և տիպի հետ կապված՝ իրավունքի աղբյուրների հատկությունների միջև կորելացիոն կախվածությունների դիտարկում, 3) իրավունքի աղբյուրների սուբորդինացման վրա խորքային սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունների վերլուծություն,⁴ իրավունքի հիմնական և լրացուցիչ աղբյուրների միջև կապերի բնույթի սահմանում, 5) իրավունքի աղբյուրների աստիճանակարգում, որը հիմնված պետք է լինի գոյու-

թյուն ունեցող պոզիտիվ իրավունքի և տեսության մեջ մշակված հիմնադրույթների վրա, 6) իրավունքի աղբյուրների համակարգի և հիերարխիայի (աստիճանակարգման) իրավական ամրագրման օպտիմալ ուղիների ընտրություն:

Իրավունքի աղբյուրների հիերարխիա հասկացության վերլուծություն.

Ամենաընդհանուր գծերով իրավունքի աղբյուրների հիերարխիան հասկացվում է որպես իրավունքի աղբյուրների տարբեր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների և դրանց միջև կապերի բացահայտումը: Հիերարխիան կապում է իրավունքի աղբյուրների առանձին տեսակներ, խմբեր և ենթահամակարգեր ամբողջական համակարգում և ապահովում հասարակական հարաբերությունների վրա իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի նպատակաուղղված ազդեցությունը: Ժամանակակից իրավունքի աղբյուրների համակարգը կազմված է ներպետական, վերազգային և միջազգային իրավունքի առանձին ենթահամակարգերից, որոնց միջև գերակայում են ուղղակի կորելացիոն կապերը: Ենթահամակարգերից յուրաքանչյուրը ներառում է իրավունքի աղբյուրների առանձին տեսակներ և մակարդակներ, որոնց միջև և որոնց ներսում առաջնություն ունեն սուբորդինացման կապերը: Քանի որ իրավունքի աղբյուրի յուրաքանչյուր տեսակի, խմբի և ենթահամակարգի մոտ առանձնացվում են հիերարխիայի սեփական մակարդակները, առկա են սուբորդինացման և կոր-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

¹ Дрейшев Б.В., Правотворчество в советском государственном управлении. М, 1977, Зивс С.Л., Источники прав. М, 1981, Мицкевич А.В., Акты высших органов советского государства: юридическая природа нормативных актов виших органов государственной власти и управления СССР. М, Поленина С.В., Сильченко Н.В., Научные основы типологии нормативно-правовых актов в СССР, М, 1987, Самощенко И.С., Иерархия и основные подразделения нормативных актов социалистического государства: Ученые записки ВНИИСЗ. Вып. 15. М, 1968, С. 24-32, Шебанова А.Ф., Форма советского права, М, 1968. Бошо С.В., Форма права: теоретико-правовое исследование: дис...д-ра юрид. наук. М, 2005, Марченко М.Н., Источники права, М., 2005, Толстик В.А., Иерархия источников российского прав., Н. Новгород, 2002.

դինացման կապեր, ապա խոսք կարող է գնալ իրավունքի աղբյուրների համակարգի բազմաաստիճանակարգության (բազմահիերարխիա) բնույթի մասին:

Իրավունքի աղբյուրների հիերարխիայում առանձնանում են երկու հիմնական առումներ:

Առաջինը ներառում է իրավունքի աղբյուրների որոշակի տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների բաժանման ամբողջ համախումբը: Հիմնական բաժանման որակով սովորաբար հանդես է գալիս պետության և նրա մարմինների, պետությունների միությունների և միջազգային համապարփակ և տարածաշրջանային կազմակերպությունների, իրավաստեղծման այլ սուբյեկտների գործունեությունը, կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները, իրավունքի աղբյուրների որակը և այլն: Անհրաժեշտ է նշել իրավունքի աղբյուրների հիմքերի և, համապատասխանաբար, նոր տեսակների, խմբերի և մակարդակների մշտական աճը: Իրավունքի աղբյուրների հիերարխիան հենվում է իրավունքի աղբյուրների դասակարգման և տիպաբանության վրա, սակայն կողմնորոշված է իրավունքի աղբյուրների տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների զատման հիմքում ընկած գործոնների բացահայտմանը:

Երկրորդ առումը ներառում է իրավունքի աղբյուրների տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների միջև ժամանակակից իրավունքի ուղղակի և կորելացիոն աղբյուրների հիերարխիան, ըստ էության, հանգեցվում է տարատեսակ կապերի, որոնք էլ ձևավորվում են իրավունքի աղբյուրների բոլոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների միջև և դրանց ներսում, հնարավորություն են տալիս սահմանել իրավունքի աղբյուրների համակարգում իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի տեղը և դերակատարումը իրավակարգավորումների ոլորտում: Ժամանակակից իրավունքի աղբյուրների համակարգում դիտարկվում է հիերարխիկ կապերի տարատեսակության աճ, ինչը հնարավոր է բացատրել իրավունքի աղբյուրների նոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակ-

ների ծագմամբ և իրավունքի աղբյուրների մշտական աճող թվի կառավարելիության ապահովման անհրաժեշտությամբ:

Ըստ մեր տեսանկյան՝ ժամանակակից իրավունքի աղբյուրների հիերարխիան լիարժեք չի դրսևորվի առանց հասարակական հարաբերությունների և իրավունքի աղբյուրների համակարգի միջև կապերի հաշվառման: Այսպես հասարակական հարաբերությունների բնույթի, բովանդակության, ձևերի, տիպերի և իրավունքի աղբյուրների որոշակի հատկությունների միջև ձևավորվում են կորելացիոն կապեր²: Քաղաքակրթական բնույթի սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությամբ տեղի է ունենում իրավունքի աղբյուրների ամբողջ համակարգի բաժանում հիմնականների և լրացուցիչների, ինչպես նաև կորելացիոն կապեր են ծագում իրավունքի ձևերի միջև, որի տակ ընկալվում են փաստացի իրավական հարաբերությունները, իրավաստեղծումը, իրավունքի ձևավորումը, ինչպես նաև իրավունքի ֆորմալ աղբյուրների առանձին տեսակների իրավական ավանդույթ, իրավական նախադեպ, նորմատիվ իրավական ակտ, նորմատիվ բովանդակության պայմանագիր, դոկտրինա և դրանց փոխհարաբերակցությունը: *Իրավունքի աղբյուրների հիերարխիա* հասկացության ընդլայնումը դրանում իրավունքի աղբյուրների նոր խմբերի և կորելացիոն կապերի ընդգրկման հաշվին արդարացված է, քանի որ հնարավորություն է տալիս առավել լիարժեք արտահայտել իրավունքի աղբյուրների բոլոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների բարդ համագործակցությունը, առավել հստակ սահմանել իրավունքի աղբյուրների համակարգում իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի տեղը և գնահատել դրա կարգավորիչ հատկությունները: Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ *իրավունքի աղբյուրների հիերարխիա* հասկացության մեջ կարելի է ներառել իրավունքի աղբյուրների տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների այնպիսի ձևեր և դրանց միջև կորելացիոն այնպիսի կապեր, որոնք ազդեցություն ունեն իրավունքի աղբյուրների համակարգի հիերարխիկ կառուցվածքի վրա:

² Մանրամասն տե՛ս Աзми Д.М., Система права и ее строение: методологические подходы и решения. М., 2014.

Միաժամանակ իրավունքի աղբյուրների, ինչպես նաև այլ սոցիալական համակարգերի հիերարխիայի հիմք նախկինի նման մնում են սուբորդինացման կապերը, քանի որ «հիերարխիկ համակարգի էությունը ձևավորող տարրերի կախվածության, ենթակայություն, անհավասարության մեջ է: Հիերարխիան իրենից ներկայացնում է ստորադաս մակարդակներում տեղակայված տարրերի ենթակայություն, կախվածություն վերադաս մակարդակներում գտնվող տարրերից»³:

Կորելացիան հասարակական հարաբերությունների և իրավունքի աղբյուրների հատկությունների միջև: Իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունները վերածվել են գործոնի, որն էական ազդեցություն ունի իրավունքի աղբյուրների համակարգի հիերարխիկ կառուցվածքի վրա: Տվյալ ազդեցության բովանդակությունը հաստատվում է հասարակական հարաբերությունների կայունության, դինամիզմի հատկությունների, կարևորության, դրանց հանրային կամ մասնավոր իրավական բնույթի և իրավունքի աղբյուրների հիմնական հատկությունների միջև կորելացիոն կապերի ուսումնասիրման ուղիով:

Իրավունքի աղբյուրների որոշ տեսակներ առավել լիարժեք արտահայտում են իրենց կարգավորիչ հնարավորությունները կայացած հասարակական հարաբերությունների վրա ազդեցության դեպքում, իսկ մյուսները՝ ձևավորվող սոցիալական կապերի վրա: Հասարակության էվոլյուցիոն զարգացման պայմաններում կայուն հարաբերությունները առավել լիարժեք կարգավորում են իրավական ավանդույթները, իսկ իրավական նախադեպը՝ իրավական բովանդակության նոր սոցիալական կապերը, որոնք պետության և հասարակության կողմից պահանջում են համարժեք արձագանք: Սակայն եթե իրավունքի ինքնուրույն աղբյուրի ձևով իրավական նախադեպի ծագումը պայմանավորված է իրավական ավանդույթի մի շարք թերությունների հաղթահարման անհրաժեշտությամբ, ապա ժամանակակից պայմաններում իրավական նախադեպը դրսևորում է

իրավունքի բոլոր ավանդական աղբյուրների հետ համագործակցությամբ՝ իրականացնելով առանց իրավունքի աղբյուրների համակարգում կոնկրետ փոփոխությունների փոփոխված իրականությանը իրավական համակարգի հարմարեցման գործառույթ:

Նորմատիվ իրավական ակտը և նորմատիվ բովանդակության պայմանագիրը առավել լիարժեք են արտահայտում իրենց կարգավորիչ հնարավորությունները դինամիկ զարգացող հասարակության պայմաններում: Նորմատիվ իրավական ակտը, որպես կանոն, կիրառվում է, որ ընդգծի հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները, իսկ նորմատիվ բովանդակության պայմանագիրը հնարավորություն է տալիս առավել լիարժեք արտացոլել տարատեսակ կարգավորվող սոցիալական կապերը: Նորմատիվ իրավական ակտը կիրառվում է հասարակական հարաբերությունների զարգացման կայուն արտաքին ձևերի, դրանց արտաքին կառուցվածքի ամրագրման համար, իսկ նորմատիվ բովանդակության պայմանագիրը կողմնորոշված է արտաքին կառուցվածքի «հարմարեցմանը» և սոցիալական կապերի բովանդակության կոնկրետացմանը: Միջազգային և վերազգային իրավունքի համակարգերում նորմատիվ բովանդակության պայմանագիրը արտահայտում է հատկությունների այլ հավաքածու, մասնավորապես, այնպիսի հատկություններ, որոնք նորմատիվ իրավական ակտը ցուցադրում են ներպետական բնույթի հասարակական հարաբերությունների հետ փոխազդեցության դեպքում:

Այսպիսով՝ միջազգային և ներպետական իրավունքի համակարգերում նորմատիվ իրավական ակտը և նորմատիվ բովանդակության պայմանագիրը կարծես փոխվում են տեղերով ըստ հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ դերերի՝ միևնույն ժամանակ արտահայտելով իրենց հատկությունների տարբեր խմբերը:

Կայուն սոցիալական կապերն ամրագրող իրավունքի աղբյուրները սովորաբար հայտնվում են իրավունքի աղբյուրի բուրգի գագաթում⁴:

³ Տե՛ս Толстик В.А., նշվ.աշխ., էջ 15:

⁴ Տե՛ս Лейст О. Э., Сущность права. Проблемы теории и философии права. М., 2008, С. 79-80.

Որպես կանոն, կայուն հասարակական հարաբերությունները հանդիսանում են նաև ամենակարևորը (էականը), սակայն պատմական բեկումնային պահերին, հակառակը, ծնվող սոցիալական կապերը ձեռք են բերում առաջնային նշանակություն: Համապատասխանաբար, իրավունքի այն աղբյուրները, որոնք իրենց հատկությունների ուժով առավել հարմարեցված են ձևավորվող սոցիալական կապերի կարգավորմանը, իրավունքի աղբյուրների համակարգում առաջադրվում են գլխավոր դերերում: Իրավունքի աղբյուրների սուբորդինացիայում նման փոփոխությունները սովորաբար ուղեկցվում են գործող իրավունքում համար, պատասխան իրավական պահանջների ամրագրմամբ:

Հասարակական հարաբերությունների կայունացումը ուղեկցվում է կայուն սոցիալական կապերի կարևորության և, համապատասխանա-

բար, կայուն հասարակական հարաբերությունների և իրավունքի այն տեսակների միջև կորելացիոն կախվածությունների վերականգմամբ, որոնք վերջիններիս գերադրապես կարգավորում են:

Ինչպես նշվել է, իրավունքի աղբյուրներից յուրաքանչյուր տեսակ առավել համարժեք արտացոլում և ամրագրում է հասարակական հարաբերությունների որոշակի տիպեր: Այսպես՝ ներպետական բնույթի հանրային-իրավական հարաբերությունների կարգավորման համար առավել հարմար են նորմատիվ իրավական ակտը, իսկ մասնավոր իրավական հարաբերությունները առավել լիարժեք կարելի է կարգավորել նորմատիվ բովանդակության պայմանագրի, դոկտրինայի և իրավական (դատական) նախադեպի միջոցով:



ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հագենի համալսարանի Գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Բեռլինի Տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Ոստիկանության և անվտանգության կառավարման բաժնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր

ԽՆԴԻՐ. «ՄԱՐԵ՛Ք ԼՈՒՅՍԵՐԸ»

Պ միությունը Ս քաղաքում քննադատում է ղարաբաղյան երկրորդ պատերազմում ՀՀ Կառավարության ծախսողումները: Իբրև միության պատասխանատու ղեկավար՝ Վ-ն իրազեկում է Պ-ի կողմից 2020 թ. նոյեմբերի 14-ի երեկոյան բողոքի ցույց անցկացնելու մասին: Ս-ի քաղաքապետ Օ-ն, որպես «նշան ընդդեմ նախկինների ու անհանդուրժողականության», Ս-ի պաշտոնական կայքում հրապարակում է մի կոչ՝ «**Մարեք լույսերը**», որում նա կոչ է անում Պ-ի բողոքի ցույցի երթուղու ամբողջ երկայնքով մարել լույսերը: Ինքը՝ Օ-ն, իր հերթին կանջատի քաղաքի կարևոր շենքերի (քաղաքապետարանի, մշակույթի տան ևն) լույսերը: Միաժամանակ Օ-ն կոչ է անում Ս-ի բնակիչներին հակացույց անցկացնել Պ-ի բողոքի ցույցի ժամանակ: Պ-ի բողոքի ցույցը և քաղաքի բնակիչների հակացույցը տեղի են ունենում պլանավորված օրը: Օ-ն, ինչպես որ հայտարարել էր, անջատում է քաղաքի կարևոր շենքերի լույսերը: Երեք շաբաթ անց Վ-ն Օ-ի դեմ հայց է ներկայացնում վարչական դատարան: Նա ցանկանում է դատական կարգով ճանաչել տալ, որ Օ-ի կոչը եղել է ոչ իրավաչափ:

Կբավարարվի արդյոք Վ-ի հայցը: ԼՈՒԾՈՒՄ

Վ-ի հայցը կբավարարվի, եթե այն թույլատրելի է ու հիմնավորված:

Ա. Հայցի թույլատրելիությունը վարչական դատարանում

Վ-ի հայցը պետք է լինի թույլատրելի: Հայցը թույլատրելի է, եթե այն բավարարում է թույլատրելիության՝ ստորև նշված բոլոր նախապայմանները:

1. Վարչական հայցերի ընդհանուր նախապայմանները

1. Վեճի ենթակայությունը վարչական դատարանին

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ: Վարչական դատարա-

*նին վեճի ենթակայությունն ըստ էության հայցի թույլատրելիության նախապայման չէ, որովհետև այլ դատարանին ենթակա հայցը ոչ թե վերադարձվում է վարչական դատարանի կողմից իբրև անթույլատրելի հայց, այլ **ՎարչԴՕ 81-րդ հոդ. 1-ին մասի** հիման վրա այն պարճառաբանված որոշմամբ վերահասցեագրվում է ըստ ենթակայության:*

Նախ՝ պետք է վեճը ենթակա լինի վարչական դատարանի քննությանը: Քանի որ գոյություն չունի հատուկ նորմ այն մասին, որ այս վեճը պիտի քննվի վարչական դատարանում, ուստի վեճի ենթակայությունը վարչական դատարանին կարող է լուծվել միայն **ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդվածի** ընդհանուր վերապահման հիման վրա, ըստ որի՝ վարչական դատարանին ենթակա են՝

- **հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը** (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 1-ին մաս), որոնք
- վերապահված չեն Սահմանադրական դատարանի ենթակայությանը (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 2-րդ մասի 1-ին տարբերակ),
- ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործեր չեն (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 2-րդ մասի 2-րդ տարբերակ),
- պատժի կատարման հետ կապված գործեր չեն (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 2-րդ մասի 3-րդ տարբերակ):

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ: Հանրային և մասնավոր իրավունքի փարբերակումն ամենից առաջ կարևոր է իրավունքների դափական պաշտպանության հարցի համար: Չէ՞ որ «քաղաքացիաիրավական վեճերը» պետք է հանձնվեն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը (ՀՀ ՔաղԴՕ 2-րդ հոդ. 1-ին մաս), իսկ «հանրային-իրավական վեճերը»՝ վարչական

դատարանի քննությանը (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ.): Հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի հստակ տարանջատումը, սակայն, հաճախ դժվար է ու վիճելի: Քանի որ պետությունը նույնպես կարող է գործել մասնավոր-իրավական ձևով, ուստի հնարավոր չէ իրավունքի այս երկու ճյուղերը տարանջատել միայն ըստ սուբյեկտի՝ ասելով, թե մասնավոր իրավունքին պատկանում են մասնավոր անձանց միջև հարաբերությունները, իսկ հանրային իրավունքին պատկանում են հանրային իշխանության գործողությունները: Պատասխանելու համար այն հարցին, թե արդյոք վեճը հանրային-իրավական է, առաջարկվում են տարբեր տեսություններ, որոնցից ամենակարևորներն են հատուկ իրավունքի (կամ ձևափոխված սուբյեկտային) տեսությունը, ենթակարգության տեսությունը և շահերի տեսությունը:¹

ա) Նախ՝ Վ-ի ու Ս-ի միջև վեճը պիտի լինի **հանրային-իրավական բնույթի** (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 1-ին մաս): **Վեճը հանրային-իրավական է**, եթե իրավահարաբերությունը, որից բխեցվում է հայցային պահանջը, ոչ թե քաղաքացիաիրավական, այլ հանրային-իրավական է:

Օ-ի կոչը հանրային իրավունքին կամ մասնավոր իրավունքին դասելը խնդրահարույց է, որովհետև խոսքը **ռեալ ակտի** մասին է: Ռեալ ակտերն արարքներ են, որոնք չունեն օրենսդրական հիմք: Այդ պատճառով հնարավոր չէ ռեալ ակտերի բնույթը որոշել դրանց հիմքում ընկած իրավանորմերի միջոցով, որովհետև այդպիսիք չկան: Ուստի հատուկ իրավունքի տեսությունն այս հարցում չի օգնում:

Պաշտոնատար անձանց հայտարարությունները հանրային-իրավական բնույթի են, եթե դրանք կապված են հանրային խնդիրների իրականացման հետ կամ հիմնված են ենթադրյալ հանրային-իրավական լիզորությունների վրա: Դա այդպես չէ, եթե պաշտոնատար անձի հայտարարությունները հատուկ ընդգծում են նրա անձնական կարծիքը, այսինքն՝ արվում են թեև ծառայողական գործունեության ժամանակ, բայց արտահայտում են նրա անձնական կարծիքը: Հարցը միշտ պետք

է լուծել՝ հաշվի առնելով կոնկրետ իրադրությունն ու այն առարկայական կապը, որում արվել է հայտարարությունը: Ընդ որում, հայտարարության հանրային կամ մասնավոր իրավական բնույթը պետք է պարզել մեկնաբանման միջոցով:

Օ-ն իր **պաշտոնական** կարգավիճակը, որ է՝ քաղաքապետի իր ծառայողական լիզորություններն ու քաղաքի պաշտոնական կայքն օգտագործելով, կոչ է արել մարել լույսերը, ու ինքն էլ մարել է քաղաքի կարևոր շենքերի լույսերը: Վ-ն պաշտպանվում է, այսպես ասած, Օ-ի կողմից **իշխանական միջամտություններից**, այնպես որ **շահերի տեսության** հիման վրա կարելի է պնդել, որ առկա է հանրային-իրավական վեճ:

բ) Այնուհետև այս հանրային-իրավական վեճը չպետք է վերապահված լինի Սահմանադրական դատարանի ենթակայությանը (ոչ սահմանադրաիրավական բնույթի վեճ, ՎարչԴՕ 10-րդ հոդ. 2-րդ մասի 1-ին տարբերակ):

Սահմանադրաիրավական վեճերը նույնպես հանրային-իրավական վեճեր են, որոնք, սակայն, լուծվում են ոչ թե վարչական, այլ Սահմանադրական դատարանում: Վեճը սահմանադրաիրավական է, եթե

- երկու **սահմանադրական մարմիններ** անմիջականորեն վիճում են **սպեցիֆիկ սահմանադրական իրավունքի** վերաբերյալ (այսպես կոչված՝ **կրկնակի սահմանադրական անմիջականություն**):

Ակնհայտորեն սույն գործով վեճը սահմանադրաիրավական բնույթի չէ, քանի որ վեճի կողմերը սահմանադրական մարմիններ չեն և չեն վիճում անմիջականորեն սահմանադրությունից բխող իրենց իրավունքների ու պարտականությունների, այսինքն՝ սահմանադրական իրավունքի մեկնաբանման ու կիրառման մասին:

գ) Վեճը նաև ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործ չէ (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 2-րդ մասի 2-րդ տարբերակ), ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործ չէ (ՀՀ ՎարչԴՕ 10-րդ հոդ. 2-րդ մասի 3-րդ տարբե-

¹ Հանրային ու մասնավոր վեճերի սահմանագատման մասին մանրամասն տես *Հովհաննիսյան*, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Եր., 2020թ., էջ 27-38:

րակ), ուստի այն **ենթակա է վարչական դատարանին**:

2. Հայցվորը և պատասխանողը

ա) Վ-ն՝ իբրև ֆիզիկական անձ, կարող է վարչական դատարանում լինել հայցվոր (ՎարչԴՕ 15-րդ հոդ. 1-ին տարբերակ):

բ) Օ-ն՝ իբրև պաշտոնատար անձ, կարող է վարչական դատարանում հանդես գալ պատասխանողի դերում (ՎարչԴՕ 16-րդ հոդ. 2-րդ տարբերակ):

3. Դատավարական իրավունակությունն ու գործունակությունը

ա) Վ-ն՝ իբրև չափահաս ֆիզիկական անձ, օժտված է դատավարական իրավունակությամբ (ՎարչԴՕ 4-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ. 1-ին տարբերակ) և գործունակությամբ (ՎարչԴՕ 4-րդ հոդ. 2-րդ մասի 2-րդ նախ. 1-ին կետ):

բ) Նույնը վերաբերում է Օ-ին:

4. Սեփական իրավունքի խախտման մասին պնդումը

Ըստ ՎարչԴՕ 3-րդ հոդ. 1-ին մասի՝ Վ-ն իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե կարող է պնդել, որ վարչական ակտով խախտվել են **իր սուբյեկտիվ իրավունքները**:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ: Վարչական հայցի թույլատրելիության համար բավարար է, որ իրավունքի խախտումը վարչական դատարանին **հնարավոր թվա**, այսինքն՝ իրավունքի խախտումը չպետք է ի սկզբանե բացառված լինի (այսպես կոչված **հնարավորության տեսություն**):²

Ուշադրություն: Այստեղ պետք է ստուգել հայցվորի իրավունքի խախտման սուկ հնարավորությունը. արդյոք հայցվորի իրավունքն **իսկապես խախտվել է, ինչը** ստուգվում է հայցի հիմնավորվածության ներքո (տես **Բ** կետի տակ):

Սույն գործով հնարավոր չէ ի սկզբանե բացառել, որ Օ-ի գործողությունները կարող են լինել ոչ իրավաչափ, և այդ պատճառով խախտել Վ-ի հիմնական իրավունքները (կարծիքն ազատորեն արտահայտելու (ՀՀ Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.) և հավաքների ազատության (ՀՀ Սահմ. 44-րդ հոդ. 1-ին մաս) իրավունքը):

II. Ճիշտ հայցարեսակը

Ճիշտ հայցարեսակը որոշելու համար պետք է պարզել, թե կոնկրետ ինչ է հայցում հայցվորը դատարանից: Վ-ն ցանկանում է, որ դատարանը ճանաչի Օ-ի գործողությունների ոչ իրավաչափ լինելը: Ըստ այդմ՝ ճիշտ հայցարեսակ կարող է լինել **ճանաչման հայցը**, համաձայն ՀՀ ՎարչԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի, քանի որ ճանաչման հայցով հայցվորը պահանջում է ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը (**պոզիտիվ** ճանաչման հայց) կամ բացակայությունը (**նեգատիվ** ճանաչման հայց):

Դրա համար պետք է առկա լինի **իրավահարաբերություն**: Իրավահարաբերությունը ՀՀ ՎարչԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի իմաստով մի անձի՝ հանրային իրավանորմի հիման վրա կոնկրետ փաստական հանգամանքներից բխող իրավական հարաբերությունն է մեկ այլ անձի կամ մի առարկայի նկատմամբ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ: Իրավահարաբերությունը պիտի լինի բավարար չափով **կոնկրետ ու վիճելի**: Իրավահարաբերությունը կոնկրետ է, երբ խոսքը մի որոշակի դեպքի նկատմամբ մի նորմի կիրառման մասին է: Վերացական իրավական հարցերը, որոնք անմիջականորեն իրավունքներ ու պարտականություններ չեն ստեղծում, բավարար **չեն** կոնկրետ իրավահարաբերության առկայության համար:

ՀՀ ՎարչԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասը ներառում է ոչ միայն ներկա, այլ նաև **անցյալ ու ապագա** իրավահարաբերությունները: Անցյալում իրեն սպառած իշխանական գործողությունը, որը վարչական ակտ **չէ**, կարող է լինել ճանաչման հայցի առարկա, եթե այն իր դադարումից հետո ևս շարունակում է իրավական ներգործություն ունենալ: Իսկ եթե իշխանական գործողությունն ակնկալվում է ապագայում, ապա գործ ունենք այսպես կոչված **կանխարգելիչ ճանաչման հայցի** հետ:

Եթե պետք է ճանաչել իրեն սպառած **վարչական ակտի** ոչ իրավաչափությունը, ապա կիրառելի է ՀՀ ՎարչԴՕ 69-րդ հոդ. **3-րդ մասը**:

Վ-ի ու Ս-ի միջև առկա է **ճանաչման են-**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

² Հնարավորության տեսության մասին տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Եր., 2020թ., էջ 51:

թակա իրավահարաբերություն: Անհանդուրժողականության մասին Օ-ի մեղադրանքը և երթուղին մթնեցնելը վերաբերում են Վ-ին և շոշափում են նրա հավաքների ազատության (ՀՀ Սահմ. 44-րդ հոդ. 1-ին մաս) և կարծիքի ազատության (ՀՀ Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.) հիմնական իրավունքները: Օ-ի գործողություններն ի վիճակի էին հավաքից հետ պահելու պոտենցիալ մասնակիցներին և նվազեցնելու հավաքի ազդեցությունը:

III. Ճանաչման հայցի թույլատրելիության հարուկ նախապայմանները

1. Ճանաչման հայցի սուբսիդիարությունը (լրացուցիչ բնույթը)

ՀՀ ՎարչԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի երկրորդ կիսանախադասության համաձայն՝ վիճարկման, պարտավորեցման և գործողության կատարման հայցերն առաջնություն ունեն ճանաչման հայցի նկատմամբ: Սույն գործով Վ-ն չի կարող իր իրավունքները պաշտպանել այլ հայցատեսակների միջոցով (ճանաչման հայցի սուբսիդիարություն):

ՊԱՐՉԱԲԱՆՈՒՄ: Հայցվորը պետք է ներկայացնի առավել արդյունավետ հայցարեսակը: Վիճարկման ու պարտավորեցման հայցերի վերաբերյալ դատական վճիռներն անմիջականորեն փոփոխում են իրավական դրությունը: Գործողության կատարման հայցի վերաբերյալ դատական վճիռը հայցվորին տալիս է հարկադիր կատարման ծառայության միջոցով վճռով նախատեսված գործողությունը կամ անգործությունը պատասխանողին հարկադրելու հնարավորություն: Ճանաչման հայցի վերաբերյալ վճիռը, հակառակը, հարկադիր կատարման ենթակա չէ:

Սուբսիդիարության սկզբունքից բացառություն է արվում միայն այն դեպքում, երբ ճանաչման հայցը բացառության կարգով ավելի ինտենսիվ իրավական պաշտպանություն է երաշխավորում:

2. Ճանաչման առնչությամբ արդարացի շահը

Այն կարող է առկա լինել իրավական կամ փաստացի, մասնավորապես տնտեսական կամ ոչ նյութական տեսքով, քանի դեռ դատարանի վճիռն ի վիճակի է բարելավելու հայցվորի իրավական դրությունը:

Եթե ճանաչման ենթակա իրավահարաբերությունը անցյալում է, ապա ճանաչման առնչությամբ հայցվորի արդարացի շահն առկա է, եթե առանց ճանաչման հայցի հնարավոր չի լինի ստանալ արդյունավետ դատական պաշտպանություն: Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը (ՀՀ Սահմ. 61-րդ հոդ. 1-ին մաս) պահանջում է, որ անձը կարողանա դատական կարգով ստուգել տալ իրեն ծանրաբեռնող իշխանական գործողությունները: Եթե վիճելի են այնպիսի իշխանական գործողություններ, որոնք սովորաբար այնքան արագ են իրենց սպառում, որ, որպես կանոն, հնարավոր չէ դրանք ենթարկել դատական վերահսկողության, ապա ճանաչման առնչությամբ արդարացի շահի առկայությունը պետք է ընդունել նաև անցյալում գտնվող իրավահարաբերության առնչությամբ:

Հավաքների դեպքում դրանց դեմ կոչերն արվում են սովորաբար դրանց սկսվելուց կարճ ժամանակ առաջ, այնպես որ այդ կոչերը, որպես կանոն, այնքան արագ են իրենց սպառում, որ հնարավոր չէ ժամանակին դիմել դատարան: Այդպես է նաև այստեղ: Ուստի Վ-ն ունի ճանաչման առնչությամբ արդարացի շահ:

3. Հայց ներկայացնելու ժամկետները

Պոզիտիվ կամ նեգատիվ ճանաչման հայցի դեպքում հայցվորը պետք է հայցը ներկայացնի 5 տարվա ընթացքում՝ իրավահարաբերության ծագման կամ դադարման պահից (- ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետ):

Վ-ն հայց է ներկայացրել Օ-ի դեմ հավաքի ժամանակ լույսերն անջատելուց երեք շաբաթ անց, ուստի՝ ժամանակին:

Միջանկյալ արդյունքը

Վ-ի ճանաչման հայցը թույլատրելի է:

Բ. Հայցի հիմնավորվածությունը

Ճանաչման հայցը հիմնավորված է, եթե Օ-ն հակաիրավական եղանակով միջամտել է Վ-ի իրավունքներին (Օ-ի կոչը, քաղաքի շենքերի լույսերն անջատելը):

1. Հակաիրավական միջամտությունը Վ-ի հավաքների ազատության իրավունքի նկատմամբ (ՀՀ Սահմ. 44-րդ հոդ. 1-ին մաս)

ՊԱՐՉԱԲԱՆՈՒՄ: Հիմնական իրավունքների խախտումն ստուգվում է երեք քայլով՝

1. պաշտպանության ոլորտ,

2. միջամտություն,

3. սահմանադրաիրավական արդարացում:

Իսկ սա նշանակում է, որ, նախ, պետք է ճշտել ենթադրաբար խախտված հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը (ո՞ւմ և ի՞նչ արարքներ է պաշտպանում կոնկրետ հիմնական իրավունքը): Այնուհետև պետք է պարզել՝ առկա է պետության կողմից միջամտություն խնդրո առարկա հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտի նկատմամբ, այն է՝ պետությունն արգելել կամ սահմանափակել է անձի ազատությունը: Հարցին դրական պատասխանելու դեպքում երրորդ քայլով պետք է ստուգել՝ արդյոք պետությունը սահմանադրաիրավական արդարացում ունի իր միջամտության համար այն է՝ Սահմանադրությունը թույլատրու՞մ է կոնկրետ հիմնական իրավունքի սահմանափակում, ի՞նչ պայմաններով, ու պետությունը պահպանել է այդ պայմանները:³

1. Հավաքների ազատության իրավունքի պաշտպանության ոլորտը

Այս հիմնական իրավունքի սուբյեկտ է յուրաքանչյուր ոք (պաշտպանության անձնային ոլորտ), ուստի նաև Վ-ն: Պաշտպանության առարկայական ոլորտը ներառում է ինչպես մարդկանց հավաքվելու ամբողջ գործընթացը, այնպես էլ հավաքը կազմակերպելն ու ղեկավարելը: Օ-ի կոչը և հավաքի երթուղին մթնեցնելը շոշափում են հավաքների ազատության իրավունքի պաշտպանության ոլորտը:

2. Իշխանական միջամտությունը պաշտպանության ոլորտի նկատմամբ

Միջամտությունը պետության կողմից հիմնական իրավունքով պաշտպանվող ազատության ցանկացած սահմանափակումն է (միջամտության մոդելն հասկացություն): Գուցե միջամտություն տեղի չի ունեցել, քանի որ Վ-ն, չնայած Օ-ի ակցիային, կարողացել է անցկացնել իր հավաքը: Բայց նաև սուկ միջնորդավորված փաստացի սահմանափակումներն են դառնում արդարացման կարիք ունեցող միջամտություններ, եթե դրանք կատարվում են նպատակամետ ձևով և առանձնապես ին-

տենսիվ են: Օ-ի կոչը և լույսերն անջատելը նպատակ են հետապնդում վախեցնել Վ-ի բողոքի ցույցին մասնակցելու ցանկություն ունեցողներին և իբր ուղղամիտ մարդկանց շրջանակից դուրս թողնել նրանց, որոնք այնուամենայնիվ մասնակցում են: Ուստի Օ-ն նպատակամետ ձևով ու առանձնապես ծանրորեն միջամտել է Վ-ի հավաքների ազատության իրավունքին: Օ-ն հանդես է եկել իբրև քաղաքացետ, ուստի գործել է իշխանական եղանակով: Հետևաբար, միջամտությունն առկա է:

3. Միջամտության սահմանադրաիրավական արդարացումը

Հնարավոր է, որ միջամտությունն արդարացված լինի: ՀՀ Սահմանադրությունը հավաքների ազատությունը չի երաշխավորում անսահմանափակ ձևով: Այդ իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով՝ ՀՀ Սահմ. 44-րդ հոդ. 5-րդ մասում թվարկված նպատակներով (օրենքի որակյալ վերապահման սկզբունք):

ա) Օ-ի գործողությունները լիազորող հատուկ օրենք գոյություն չունի: Օ-ն՝ իբրև Ս համայնքի մարմին և դրանով՝ իբրև գործադիր իշխանության մի մաս, ՀՀ Սահմ. 3-րդ հոդ. 3-րդ մասի ուժով սահմանափակված է հիմնական իրավունքներով: Ուստի նա չի կարող վկայակոչել ՀՀ Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախադասությունը՝ պնդելով, թե օգտվել է իր կարծիքն արտահայտելու ազատությունից: Եթե քաղաքացին կարող է հիմնվել կարծիքի ազատության իր հիմնական իրավունքի վրա, ապա պետությանն արգելված է իր քաղաքացիների առաջ վկայակոչել այդ նույն կարծիքի ազատության իրավունքը:

բ) Եթե բացակայում են հասարակ օրենքի լիազորող նորմերը, ապա պետության տեղեկատվական գործունեության համար սկզբունքորեն բավարար է հանրային խնդիրների իրականացում հանձնարարող նորմը:

Ճանաչված բան է, որ պետության կողմից տեղեկատվական ու հասարակության հետ աշխատանքն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր համաձայնությունը երաշխավորելու համար: Նույնը վերա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

³ Հիմնական իրավունքների խախտումն ստուգելու այս եռաստիճան մեթոդի մասին գրել ենք դեռևս 2009 թվականին: Տես Հովհաննիսյան, Մարդու արժանապատվության իրավունքը Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում, ՀՀ ՍԴ Տեղեկագիր 4/2009, էջ 5:

բերում է քաղաքապետի համապատասխան գործունեությանը: Քաղաքապետի պաշտոնին՝ իբրև ընտրված քաղաքագլխի, հատուկ է **հաղորդակցական լիազորությունը** (համեմատելի կառավարության անդամների հետ): Նա համայնքային ընտրովի պաշտոնատար անձ է և համայնքի ամբողջ վարչակազմի ղեկավարը: Նա ընտրվում է քաղաքացիների կողմից ընդհանուր, ազատ, հավասար, անմիջական ընտրությունների միջոցով, ուստի նա համայնքի վարչակազմը ղեկավարելուն զուգահեռ պետք է իրականացնի նաև անմիջական քաղաքական գործառույթ: Իր այդ քաղաքական գործառույթի հիման վրա քաղաքապետն իրավասու է մասնակցել տեղական նշանակության հարցերի վերաբերյալ քաղաքական դիսկուրսին:

աա) Հանրային խնդիրների իրականացում հանձնարարող նորմ կարող է լինել միայն **ՀՀ Սահմ. 179-րդ հոդ. 1-ին մասը**: Դրանից բխում է համայնքների լիազորությունը՝ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը՝ անգամ առանց հատուկ օրենսդրական լիազորող նորմերի առկայության: Համայնքային նշանակության հանրային հարցերը, ըստ **ՀՀ Սահմ. 179-րդ հոդ. 1-ին մասի**, այն կարիքներն ու շահերն են, որոնք արմատավորված են համայնքի ներսում կամ առանձնահատուկ կերպով կապված են համայնքի հետ, այսինքն՝ վերաբերում են համայնքի բնակիչների համատեղ կյանքին: Այդ պատճառով համայնքային պաշտոնատար անձի հայտարարությունները պետք է լինեն տեղական նշանակության:

բբ) Օ-ն չպետք է գերազանցած լինի համայնքային իրավասությունը, որովհետև համայնքը **ՀՀ Սահմ. 179-րդ հոդ. 1-ին մասի** հիման վրա ունի **ոչ թե ընդհանուր քաղաքական, այլ միայն համայնքային-քաղաքական մանդատ**: Դրա համար և՛ Ս-ն՝ իբրև համայնք, և՛ Օ-ն՝ իբրև համայնքի մարմին, պիտի ունենան համապատասխան լիազորություն:

Օ-ի հայտարարությունն անմիջական կապի մեջ է Վ-ի կողմից իրազեկված հավաքի և այդ միջոցառման հետևում կանգնած քաղաքական խմբավորման հետ: Ընդ որում, քաղաքապետը դիմում է իր համաքաղաքացիներին: Բացի այդ, քաղաքապետի խոսքերն **առանձնահատուկ տեղական նշանակություն** են ձեռք բերում այն պատճառով, որ իբրև բողոքի ցույ-

ցի ու հակացույցի վայր է ընտրվել Ս քաղաքը: **գգ)** Այնուամենայնիվ հանրային խնդիրներ իրականացնելը **սահմանափակ** է:

Հանրային խնդիրների իրականացումը տալիս է տեղեկատվական գործունեության լիազորություն միայն այդ խնդրի իրականացման շրջանակում, անգամ եթե դրանով կարող են շոշափվել երրորդ անձանց հիմնական իրավունքները: **Օրենքի վերապահման սկզբունքն** այստեղ չի պահանջում օրենսդրի կողմից օրենքի միջոցով **հատուկ լիազորում**, բացառությամբ եթե ձեռնարկվող միջոցառումն իր նպատակով ու ներգործությամբ փոխարինում է այնպիսի պետական միջոցառման, որը կարելի է որակել իբրև ավանդական իմաստով միջամտություն հիմնական իրավունքների նկատմամբ: Միջամտությանը փոխարինող այսպիսի **ֆունկցիոնալ համարժեքի** ընտրության միջոցով չի կարելի շրջանցել հատուկ օրենսդրական լիազորման անհրաժեշտությունը:

Օ-ի ձեռնարկած միջոցառումները չպետք է **իրենց ուժգնությամբ հավասարվեն հիմնական իրավունքների նկատմամբ նպատակամետ միջամտության**:

Լույսերը մարելու, քաղաքային շենքերի լուսավորությունն անջատելու կոչը, ինչպես նաև հակացույց անցկացնելու կոչը ո՛չ օբյեկտիվորեն նպատակամետ միջամտում են Վ-ի հավաքների ազատության իրավունքին, ո՛չ էլ ներգործում են հիմնական իրավունքների նկատմամբ կարգավորիչ միջամտություն: Դրանք շոշափում են Վ-ի հավաքների ազատության իրավունքը սուկ կողմնակիորեն այնքանով, որքանով ի վիճակի են ազդելու դեռ չկողմնորոշված անձանց վրա բողոքի ցույցին մասնակցելու հարցը որոշելիս:

Քանի որ Օ-ի կոչն իր ուժգնությամբ չի հավասարվում ավանդական իմաստով միջամտության, ուստի դրա համար օրենքի կարիք չկա:

գ) Այնուամենայնիվ քաղաքապետն **անսահմանափակ կերպով լիազորված չէ** պաշտոնական հայտարարություններ անել տեղական նշանակության հարցերի վերաբերյալ:

աա) Օ-ն կարող է խախտած լինել այն պահանջը, որ պետական միջոցառումները պետք է քաղաքականապես չեզոք լինեն (**«չեզոքության պահանջ»**):

(1) **Վարչարարության չեզոքությունը** երաշխավորելուն են ուղղված ՀՀ ՎարչահիմՕ՝ 25-26-րդ հոդվածները: Սակայն այստեղ չկա վարչական վարույթ ՀՀ ՎարչահիմՕ 2-րդ բաժնի իմաստով: Այդ պատճառով Օ-ն նշված օրենքով կաշկանդված չէր իր կոչն անելիս:

(2) Այնուհետև **ՀՀ Սահմ. 8-րդ հոդվածի 2-րդ մասից** բխում է պետության չեզոքության պահանջը, որի նպատակը քաղաքական կուսակցությունների հավասարությունը երաշխավորելն է: Այդ պահանջը գործում է նաև համայնքի մակարդակում: Չեզոքության պահանջը ծառայում է քաղաքական կուսակցությունների հավասարության պաշտպանությանը: Հակառակը, քաղաքական այն խմբավորումների դեպքում, որոնք **կազմակերպված չեն իբրև քաղաքական կուսակցություն, չեն մասնակցում քաղաքական ընտրություններին** և որպես կանոն ավելի նվազ կազմակերպական մակարդակ ունեն, կուսակցությունների հետ համեմատելի շահերի դրություն առկա չէ: Այդ պատճառով ոչ մի անհրաժեշտություն չկա չեզոքության պահանջը կիրառել նաև նման քաղաքական խմբավորումների նկատմամբ:

Քանի որ Պ-ն սուսկ միություն է և ոչ քաղաքական կուսակցություն, ուստի ՀՀ Սահմ. 8-րդ հոդ. 2-րդ մասը կիրառելի չէ:

բբ) Եվ, ի վերջո, պաշտոնական հայտարարությունները պետք է համապատասխանեն իրավական պետության ընդհանուր սկզբունքներին:

(1) Դրանց թվին պատկանում է նախ կամայականության արգելքը, որը պարտավորեցնում է անել միայն առարկայական հայտարարություններ (**«առարկայականության պահանջ»**):

Կամայականության արգելքի սկզբունքից բխում է, որ գնահատողական դատողությունները չպետք է հիմնվեն գործի հետ կապ չունեցող նկատառումների վրա, այսինքն՝ ըստ ողջամիտ գնահատականի, պետք է հիմնված լինեն էապես ճիշտ կամ առնվազն գործին վերաբերող և ընդունելի գնահատված փաստերի վրա և չպետք է անցնեն առարկայականության սահմանները:

(2) **Ժողովրդավարության սկզբունքը** (ՀՀ Սահմ. 1-ին հոդվածի 2-րդ տարբերակ) սահմանափակում է պետական պաշտոնյաների՝

իրապարակային հայտարարություններ անելու լիազորությունը առարկայականության պահանջից ավելի:

Ազատորեն հասարակական կարծիք ձևավորելը ժողովրդավարական պետական կարգի արտահայտությունն է, որտեղ ժողովրդի կամքի ձևավորումն իրականացվում է ազատ, բաց, առանց կանոնակարգումների և սկզբունքորեն «ապապետական» եղանակով: Ժողովրդավարական հասարակարգում ժողովրդի **կամքի ձևավորման գործընթացը** պետք է իրականանա **ժողովրդից դեպի պետական մարմիններ**, այլ ոչ թե հակառակը՝ պետական մարմիններից դեպի ժողովուրդ ուղղությամբ: Այդ պատճառով պետական պաշտոն զբաղեցնող անձին արգելված է իր իշխանական գործառույթներն իրականացնելիս ուղղորդող ներգործություն ունենալ ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման պրոցեսի վրա:

(3) Առարկայականության պահանջը և ժողովրդի կամքի ապապետական ձևավորման պահանջը **միասին** են գործում քաղաքական հարցերի վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների դեպքում:

Ժողովրդավարությունն ապրում է՝ առարկայական փաստարկներ փոխանակելով: Նրա նպատակը հանրային բարօրության մասին ողջամտությամբ առաջնորդվող հզատարությունն է: Պաշտոնատար անձը, որը մասնակցում է քաղաքական դիսկուրսին, պարտավոր է իր հայտարարություններն անել **ողջամիտ ու առարկայական դիսկուրսի** չափանիշով: Դա չի բացառում սիմվոլիկ արարքների միջոցով կարծիք հայտնելը, բայց պահանջում է ռացիոնալ փաստարկների փոխանակում: Բացի այդ, պաշտոնատար անձինք իրավունք չունեն հանրային քննարկումներում մերժել այլ կարծիքի հետևորդներին կամ նպատակադրված անվանարկել նրանց, քանի դեռ այդ անձանց դիրքորոշումները չեն անցնում բոլորի համար գործող իրավական սահմանները, այն է՝ չեն խախտում քրեական օրենքը:

(ա) Վ-ի ցույցի երթուղու երկանքով լույսերը մարելու մասին Օ-ի կոչը և քաղաքի կարևոր շենքերի լուսավորությունն անջատելու վերաբերյալ նրա ցուցումը **չեն համապատասխանում** նշված պահանջներին: Սիմվոլիկ մթնեցումը առարկայորեն չի բացատրում, թե ինչու

են Վ-ի կազմակերպած հավաքի ժամանակ արտահայտվող դիրքորոշումներն արժանի քննադատության: Պետության կողմից նեգատիվ սիմվոլը սոսկ դատապարտում է հավաքի քաղաքական նպատակները: Այն հեռանում է ռացիոնալ ու առարկայական դիսկուրսի մակարդակից և մերժում է Վ-ին ու նրա հավաքի մասնակիցներին, թեև չկան հիմքեր ենթադրելու, թե հավաքի ժամանակ արվելու են արգելված արտահայտություններ, կամ հավաքն ամբողջությամբ ունի հակասահմանադրական ուղղվածություն:

(բ) Խաղաղ հակացույց անցկացնելու կոչը նույնպես խախտում է առարկայականության պահանջը:

Կոչը նպատակ է հետապնդում թուլացնել Վ-ի հավաքի ազդեցությունը և ուժեղացնել հակացույցը: Այն անթույլատրելիորեն միջամտում է քաղաքական կարծիքների մրցակցությանը և ուղղորդող ազդեցություն է գործում քաղաքացիների կողմից իրենց հիմնական իրավունքների իրականացման վրա: Հակադիր խաղաղ հավաքների մրցակցությունը պետք է, սակայն, տեղի ունենա բնակչության կարծիքի ձևավոր-

ման շրջանակում և չպետք է ենթարկվի պետական ներգործության:

Օ-ի կոչը և քաղաքային շենքերը մթնեցնելն անցնում են իրավական պետության սկզբունքին համապատասխանող վարքի սահմանները: Այդ պատճառով Օ-ն հակաիրավական եղանակով միջամտել է Վ-ի հավաքների ազատությանը:

II. Հակաիրավական միջամտությունը Վ-ի կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ (ՀՀ Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.)

Նույն հիմնավորումներով Օ-ն միջամտել է նաև Վ-ի **կարծիքի ազատությանը** (ՀՀ Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.), որովհետև Օ-ի կոչը և մթնեցնելը կապված են հենց այն կարծիքների հետ, որոնք պիտի արտահայտվեին հավաքի ժամանակ:

Միջանկյալ արդյունքը

Ճանաչման ենթակա իրավահարաբերությունն առկա է: Վ-ի հայցը հիմնավորված է:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Վարչական դատարանը կբավարարի Վ-ի հայցը:



ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՊՈՌՆԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂԿԵԼՈՒ ՅԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՈՐՈՇ ՅԱՐՑԵՐ**

Պորնկությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվության կիրառման և պատասխանատվությունից ազատելու խնդիրները Հայաստանի Հանրապետությունում գրեթե հետազոտված չեն, որի տրամաբանական հետևանքն է իրավակիրառ պրակտիկայում համապատասխան բարդությունների առաջացումը: Սույն հետազոտության արդյունքում բացահայտվել են վերը նշված իրավախախտման համար վարչական պատասխանատվության հատկանիշները, մեկնաբանվել են պատասխանատվությունը ծանրացնող, մեղմացնող հանգամանքները և պատասխանատվությունից ազատելու հիմքերը՝ պորնկությամբ զբաղվելու դեպքերի նկատմամբ կիրառելիության տեսանկյունից:

Պորնկությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվությունը բնորոշվում է ստորև թվարկվող առաձնահատկություններով.

1. Պատասխանատվության հիմքը

Քննարկվող վարչական իրավախախտման հիմքը սուբյեկտի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումն է՝ պորնկությամբ զբաղվելը: Արարքին իրավաբանական գնահատական պետք է տրվի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 179¹ հոդվածի դրույթներին համապատասխան: Հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան պարզ է. բովանդակում է միայն իրավախախտման անվանումը, ինչի արդյունքում մասնագիտական գրականության մեջ պորնկությամբ զբաղվելու հատկանիշների բացահայտման և իրավակիրառ պրակտիկայում այդ իրավախախտման որակ-

ման միասնական մոտեցում չի ցուցաբերվում: Մեր կողմից ձևակերպվել են մատնանշված խնդրի լուծմանն ուղղված առաջարկություններ¹, որոնց տեսանկյունից արարքը որպես պորնկությամբ զբաղվել որակելու համար անհրաժեշտ է հավաստել հետևյալ հատկանիշների առկայությունը՝ նույն կամ հակառակ սեռի ներկայացուցիչներին պարբերաբար, անկանոն, կամավոր սեռական բնույթի ծառայություններ մատուցելը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով) նախապես պայմանավորված նյութական բնույթի վարձատրություն ստանալու նպատակով:

2. Վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը սահմանված է Օրենսգրքի 17-րդ գլխում: Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլուծությունից բխում է, որ պորնկությամբ զբաղվելու համար չափահասներին վարչական պատասխանատվության ենթարկում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

3. Վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտները

Օրենսգրքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց տասնվեց տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը: Նշվածից ելնելով՝ պորնկությամբ զբաղվելու համար պատասխանատվության են կանչվում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորած տասնվեց տարին լրացած անձինք:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

¹ Մանրամասն տե՛ս **Իսրայելյան Գ.Վ.**, Պորնկության դեմ պայքարի արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան. – Եր., հեղ. հրատ, 2021, 27-32 էջեր:

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքում բացահայտվեց պոռնկությամբ զբաղվելու համար 16-18 տարեկան անչափահասներին պատասխանատվության ենթարկելու հարցում իրավական խոչընդոտի առկայություն: Օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ տասնվեցից մինչև տասնութ տարեկան հասակում վարչական իրավախախտումներ կատարած անձանց նկատմամբ կիրառվում են անչափահասների գործերի հանձնաժողովների կանոնադրությամբ նախատեսված միջոցները: Ինդիքն այն է, որ հիշատակված հանձնաժողովները վաղուց գոյություն չունեն, այդ պատճառով էլ 16-18 տարեկան անչափահասի կողմից պոռնկությամբ զբաղվելու դեպք հայտնաբերելիս ոստիկանության ծառայողները գործնականում կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ համապատասխան նյութերը, դրանք ուղարկում տեղական ինքնակառավարման մարմնի՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանում: Մինչդեռ համապատասխան իրավական հիմքերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ տեղական ինքնակառավարման մարմինների վերոհիշյալ ստորաբաժանումները վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն չունեն:

16-18 տարեկան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու իրավական խոչընդոտի վերացման խնդիրը լուծելու համար առաջարկում ենք.

1. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում և 221-րդ հոդվածում (այս դեպքում որպես բացառություն՝ 182-րդ հոդվածին զուգահեռ) վկայակոչել նաև 179¹ հոդվածը, ինչով ոստիկանությունը հնարավորություն կունենա խախտում կատարելու դեպքում պատասխանատվության ենթարկել նաև 16-18 տարեկան անձանց, կամ՝

2. տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների համար նախատեսել 16-18 տարեկան անչափահասներին վարչական պատասխանատվության

ենթարկելու լիազորություն: Այս տարբերակով խնդրի լուծման համար անհրաժեշտ են.

1) Օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տասնվեցից տասնութ տարեկան հասակում վարչական իրավախախտումներ (բացառությամբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումից) կատարած անձինք պատասխանատվության ենթարկվում են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների կողմից:»,

2) ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 221-րդ հոդվածը,

3) Օրենսգրքի 219-րդ¹ հոդվածը լրացնել 4-րդ մասով. «Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են տասնվեցից տասնութ տարեկան անձանց կողմից կատարված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, բացառությամբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումից:»²:

4. Պատասխանատվության դրսևորման ձևը

Պոռնկությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվությունը դրսևորվում է միայն տուգանքի ձևով տույժի նշանակմամբ, քանի որ հիշատակված հոդվածի սանկցիաներում վարչական տույժի այլ տեսակներ նախատեսված չեն:

Իրավախախտումների, այդ թվում՝ պոռնկությամբ զբաղվելու համար վարչական տույժը նշանակվում է օրենքով սահմանված խնդիրները լուծելու նպատակով՝ այսպես՝ Օրենսգրքի 22-րդ հոդվածի դրույթների վերլուծությունից բխում է, որ վարչական տույժ նշանակելը հետապնդում է երկու նպատակ՝ դաստիարակչական և կանխարգելիչ: Դաստիարակչական նպատակը դրսևորվում է վարչական իրավախախտում կատարած անձին՝ օրենքները պահպանելու, համակեցության կանոնները հարգելու ոգով դաստիարակելով, իսկ կանխարգելիչ

² Օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման (ոստիկանության գործերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը) վերաբերյալ գործը քննում է վարչական դատարանը, իսկ նյութերը, որպես կանոն, նախապատրաստում է ոստիկանությունը:

նպատակը՝ նոր իրավախախտումների կատարումը կանխելով ինչպես իրավախախտողի, այնպես էլ այլ անձանց կողմից:

Վարչական տույժ նշանակելու ընդհանուր կանոնները սահմանված են Օրենսգրքի 32-րդ հոդվածով: Վարչական տույժ նշանակվում է կատարված վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի շրջանակներում՝ հաշվի առնելով իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները: Պոռնկությամբ զբաղվելու համար վարչական տույժ նշանակելիս թվարկված հանգամանքները հնարավոր չէ հաշվի առնել, քանի որ հիշատակված իրավախախտման համար պատասխանատվություն սահմանող նորմերի սանկցիաները բացարձակ որոշակի են: Այս խնդրի լուծման նպատակով մեր կողմից ձևավորվել է պոռնկությամբ զբաղվելու համար պատասխանատվություն սահմանող հոդվածի բացարձակ որոշակի սանկցիաները հարաբերական որոշակի կամ այլընտրանքային սանկցիաներով փոփոխելու առաջարկություն³:

Օրենքը սահմանում է, որ մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ: Պոռնկությամբ զբաղվելու համար լրացուցիչ տույժ սահմանված չէ:

Մեկ անձի կողմից երկու կամ ավելի զանցանք կատարելու դեպքում տույժ նշանակվում է յուրաքանչյուր խախտման համար առանձին-առանձին:

Վարչական տույժ նշանակելու ժամկետները սահմանված են Օրենսգրքի 37-րդ հոդվածով, որի վերլուծության արդյունքում հանգում ենք եզրակացության՝ պոռնկությամբ զբաղվելու դեպքում վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Բացառություն են քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքերը, երբ խախտողի արարքում առկա են պոռնկությամբ զբաղվելու նշաններ: Այս դեպքում, տույժ

կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալ հատկանիշների բովանդակությունից՝ պոռնկությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից օրենքով սահմանված հիմքերով և կարգով գույքային բնույթի սահմանափակումներ առաջացնող վարչական տույժի կիրառում այդ իրավախախտումը կատարած անձանց նկատմամբ:

Հաջորդ կարևոր խնդիրը, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, **պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների մեկնաբանումն ու կիրառման շրջանակի կանխորոշումն է**: Իհարկե, Օրենսգրքի 33-րդ և 34-րդ հոդվածներում սահմանված մեղմացնող և ծանրացնող ոչ բոլոր հանգամանքներն են կիրառելի պոռնկությամբ զբաղվելու համար պատասխանատվությունն իրագործելիս: Մեր կարծիքով, որպես մեղմացնող հանգամանք կարող են դիտարկվել՝

1. մեղավորի անկեղծ զղջումը, որի պարագայում իրավախախտն իր վարքագծով ապացուցում է կատարվածի համար զղջալը. կամովին ներկայանում է վարույթ իրականացնող մարմին, ակտիվորեն աջակցում է գործի հանգամանքների բացահայտմանը և այլն:

2. Իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը, օրինակ՝ մարմնավաճառը պահանջում է հաճախորդին օգտագործել պահպանակ, ինչով կանխում է իր մոտ առկա սնկային հիվանդության փոխանցումը նրան, կամ մարմնավաճառը հատուցում է իր կողմից հաճախորդին փոխանցված այն սեռավարակի բուժման ծախսերը, որի առկայության մասին մինչ սեռական ծառայություն մատուցելը չի իմացել:

3. Իրավախախտում կատարելն անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ (իրավախախտի կամ նրա մերձավորների ծանր հիվանդությունը և այլն):

³ Մանրամասն տե՛ս **Իսրայելյան Գ.**, Պոռնկության դեմ պայքարի իրավական հիմքերի կատարելագործման որոշ հարցեր // Պետություն և իրավունք N 2(87), 2020թ., 57-62 էջեր:

4. Իրավախախտում կատարելն անչափահասի կողմից, այսինքն՝ մինչև պոռնկությամբ զբաղվելու պահը պետք է լրացած լինի անձի տասնվեց տարին, սակայն լրացած չլինի տասնութ տարին:

5. Իրավախախտում կատարելը հղի կնոջ կամ մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կնոջ կողմից:

Օրենսգրքով սահմանված մյուս մեղմացնող հանգամանքը՝ իրավախախտում կատարելը հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության տակ պոռնկությամբ զբաղվելու գնահատման վերաբերությամբ տրամաբանորեն կիրառելի չէ:

Օրենսգրքի հոդված 33-ի 2-րդ մասը սահմանում է, որ օրենսդրությամբ կարող են նախատեսվել նաև վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող այլ հանգամանքներ: Բացի այդ, պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործի վարույթ իրականացնող մարմինը որպես մեղմացուցիչ կարող է դիտել նաև օրենքով չնախատեսված հանգամանքներ:

Որպես ծանրացնող հանգամանք կարող են դիտարկվել՝

1. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից, այսինքն՝ պոռնկությամբ զբաղվում է անցյալում կատարված հանցանքի համար դատվածություն ունեցող անձը:

2. Անչափահասին իրավախախտման մեջ ներգրավելը, այսինքն՝ պոռնկությամբ զբաղվելուն ընդգրկվում է տասնութ տարեկան չդարձած անձ, ընդ որում՝ պետք է բացակայեն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 261-րդ և 262-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

3. Իրավախախտումը խմբի՝ տասնվեց տարին լրացած երկու կամ ավելի ֆիզիկական մեղսունակ անձանց կողմից կատարվելը, ընդ որում, կարծում ենք, որ խումբը առկա կլինի, եթե երկու կամ ավելի անձինք վճարի դիմաց մատուցեն սեռական բնույթի ծառայություններ:

Օրենսգրքով սահմանված մյուս ծանրաց-

նող հանգամանքները պոռնկությամբ զբաղվելու գնահատման վերաբերությամբ կիրառելի չեն հետևյալ հիմնավորումներով՝

1. հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին լիազորված անձի պահանջին, որպես ծանրացնող հանգամանք չի կարող գնահատվել, քանի որ այս հանգամանքն առկա է միայն այն դեպքերում, երբ իրավասու պաշտոնատար անձը պահանջում է խախտողից ավարտին չհասցնել սկսված վարչական իրավախախտումը, սակայն նա չի ենթարկվում նշված անձի օրինական պահանջին, իսկ պոռնկությամբ զբաղվելը պետք է ավարտված համարվի սեռական բնույթի ծառայությունը մատուցելու պահից:

2. Մեկ տարվա ընթացքում կրկին նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի, որպես ծանրացնող հանգամանք չի կարող գնահատվել, քանի որ այստեղ խոսքը միաբնույթ զանցանքների կրկնակիության մասին է, և պոռնկությամբ զբաղվելուն համապատասխան միաբնույթ զանցանք օրենքով նախատեսված չէ (այսպես՝ հասարակական կարգի դեմ ունեցող ցանկացած խախտման կատարման պարագայում դժվար թե պոռնկությամբ զբաղվելը դիտարկվի որպես ծանրացնող հանգամանք կամ հակառակը)⁴:

3. Իրավախախտումը տարերային աղետի պայմաններում կամ այլ արտակարգ հանգամանքներում կատարելը որպես ծանրացնող հանգամանք չի կարող գնահատվել, քանի որ անձն ընդհանրապես կատարում է վարչական իրավախախտում՝ օգտվելով ստեղծված բացասական իրադրությունից (երկրաշարժ, ջրհեղեղ և այլն):

4. Իրավախախտումը հարբած վիճակում՝ սովորական (ֆիզիոլոգիական) հարբածության (անձի օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակն ակոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի օգտագործման հետևանքով) վիճակում կատարելը ևս չի կարող գնահատվել որպես ծանրացնող հանգամանք, քանի որ բացակայում է պոռնկությամբ զբաղվելու և հարբածության միջև անմիջական կապը:

⁴ Մեկ տարվա ընթացքում կրկին նույն իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի՝ ըստ Օրենսգրքի 179՝ հոդվածի 2-րդ մասի, դիտվում է որպես տվյալ զանցանքի որակյալ տեսակ:

Ինչ վերաբերում է **վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին**, ապա պետք է նկատի ունենալ, որ վարչական պատասխանատվության ենթարկելու և դրանից ազատելու հարց չի կարող առաջանալ, եթե կատարված արարքում իրավախախտման հատկանիշները բացակայում են կամ արարքը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում (պոռնկությամբ զբաղվելու դեպքում այս հանգամանքները տրամաբանորեն բացառված են), ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը չի կարող կիրառվել, եթե չի ապացուցվել անձի կողմից իրավախախտում կատարելու փաստը: Հետևաբար, վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու մարմնի (պաշտոնատար անձ) որոշումն է վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք կատարած անձի նկատմամբ վարչական տույժ չկիրառելու վերաբերյալ:

Օրենսգիրքը նախատեսում է վարչական պատասխանատվությունից ազատելու ստորն թվարկված տեսակները:

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերն ընկերական դատարանի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելը:

Այս տեսակն ամրագրված է Օրենսգրքի 20-րդ հոդվածում, որը հնարավորություն է ընձեռում անձին ազատել պատասխանատվությունից և նյութերն ուղարկել վերոհիշյալ սուբյեկտներին, եթե հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և իրավախախտի անձը՝ նպատակահարմար է նրա նկատմամբ կիրառել հասարակական ներգործության միջոց: Ընդ որում, հիշատակված իրավակարգավորմանը համաձայն՝ 126-րդ, 159-րդ, 175-177-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարած և պատասխանատվությունից նշված հանգամանքերով ազատված անձանց վերաբերյալ նյութերը կարող են հանձնվել նաև ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի քննությանը: 53-րդ, 126-րդ, 165-րդ, 175-177-րդ հոդվածներով

նախատեսված խախտումներ կատարած անձանց նկատմամբ կիրառված հասարակական ներգործության միջոցների մասին վարչակազմը, հիշատակված հանձնաժողովը և մյուս սուբյեկտները պարտավոր են նյութերը ստանալու օրից սկսած տասնօրյա ժամկետում հայտնել դրանք ուղարկող մարմնին (պաշտոնատար անձ):

Իրավակիրառ պրակտիկայում այս հիմքով առհասարակ պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը չի իրագործվում, նորմը թեև ձևականորեն գործում է, սակայն այն, ըստ էության, հնացած է, վերը հիշատակված պատասխանատվություն կիրառող սուբյեկտները գոյություն չունեն:

2. Վարչական պատասխանատվությունից ազատելու հաջորդ տեսակը նախատեսված է Օրենսգրքի 21-րդ հոդվածով, ըստ որի՝ «Եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ»:

Հայրենական վարչական օրենսդրության մեջ «նվազ նշանակություն» հասկացությունը չի մեկնաբանվում: Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 19.12.2013 թվականի N 40 որոշման 21-րդ կետի համաձայն՝ նվազ նշանակություն ունեցող իրավախախտում է համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է վարչական իրավախախտման կազմ, սակայն հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և իրավախախտի դերը, վնասի չափը և առաջացած հետևանքների ծանրությունը՝ էական վնաս չի պատճառել պաշտպանվող հասարակական հարաբերություններին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ այս հիմքով պոռնկությամբ զբաղվող անձը չի կարող ազատվել պատասխանատվությունից:

3. Վարչական պատասխանատվությունից ազատվելու յուրահատուկ տեսակ է նախատեսում Օրենսգրքի հոդված 21.1-ը, որն ամրագրում է. «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձն ազատվում է այն իրավախախտման համար վարչական պատաս-

խանատվությունից, որը կատարել է հարկադրաբար՝ իր նկատմամբ իրականացված մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում»։ Այս հիմքով անձն ազատվում է քննարկվող զանցանքը կատարելու համար պատասխանատվությունից։

4. Վարչական պատասխանատվությունից ազատելու հաջորդ տեսակն ամրագրված է Օրենսգրքի 21.2-րդ հոդվածով։ Այն սահմանում է. «Վարչական իրավախախտում կատարած անձը Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման մասին օրենքով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել վարչական պատասխանատվությունից, իսկ վարչական տույժի ենթարկված անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ

լրացուցիչ վարչական տույժից»։ Այս հիմքով ևս անձը կարող է ազատվել քննարկվող զանցանքը կատարելու համար պատասխանատվությունից։

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ մեր կողմից առաջարկվող օրենսդրական փոփոխությունները, լրացումները և ներկայացված մեկնաբանությունները հնարավորություն կտան ճիշտ կազմակերպել պոռնկությամբ զբաղվելու դեպքերով պատասխանատվության իրագործումը, ճիշտ գնահատել վարչական պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, նշանակել արդարացի վարչական տույժ, համապատասխան հիմքերի առկայության դեպքում կիրառել պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը։



ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՅԱՆ

ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության
ամբիոնի դոցենտ, իրավաբանական
գիտությունների դոկտոր

**ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հարկային պարտավորությունը հարկային իրավունքի ինստիտուտներից մեկն է, որը մեծապես երևան է գալիս հարկային իրավահարաբերությունների ընթացքում:

Հարկային օրենսդրությամբ պարտավորությունները դիտարկում են այնպիսի իրավաչափ վարքագծի կանոններ, որ հարկային իրավահարաբերությունների ընթացքում ցուցաբերում են հարկ վճարողները:

Հարկային օրենսդրությամբ ամրագրված այն իրավաբանական փաստերը, որոնք հիմք են հարկային պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարեցման համար, միաժամանակ հստակորեն ընդգրկում են պետության և հարկային իրավահարաբերությունների մյուս սուբյեկտների կարգավիճակը հարկերի վճարման կապակցությամբ առաջացած գույքային ու դրամական հարաբերություններում:

Հարկային պարտավորությունների բովանդակությունը կարելի է լուսաբանել լայն և նեղ իմաստներով:

Լայն առումով հարկային պարտավորություն ասելով՝ օրենսդիրը նկատի ունի բոլոր տեսակի հարկ վճարողների համապատասխան վարքագիծը, իսկ նեղ իմաստով հարկային պարտավորությունը դիտվում է որպես հարկ վճարողի ընդհանուր պարտավորությունների մի մաս, որի կատարմամբ գործնականում իրացվում են սահմանադրությամբ ամրագրված հարկերը և գանձույթները վճարելու տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը (ՀՀ Սահմանադրություն, 60-րդ հոդ., կետ 8):

Գույքային պարտավորությունների համակարգում հարկային պարտավորությունները կատարման առումով առաջնային են և շարունակական, քանի որ տեղիք են տալիս այլ բնույթի հարկային իրավահարաբերությունների ծագման:

Դժվար չէ նկատել, որ հարկային և գանձույթների վճարման պարտավորությունը իր բնույթով դասվում է իրավաբանական բարդ փաստերի շարքին, քանի որ մինչև վճարման պարտավորության կատարումը տնտեսվարող սուբյեկտները հաղթահարում են համակարգված բնույթի մի շարք այլ պարտավորությունների կատարում, որոնք կապված են հարկային հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաև առանձին հարկատեսակների վճարումները համապատասխան բյուջեներ մուտքագրելու հետ:

Իրավական իմաստով հարկային պարտավորության կատարումը, ըստ էության, ունի կատեգորիկ պահանջի կատարման բնույթ:

Գործնականում, երբեմն նրա կենսագործման մեխանիզմը ունի այլ դրսևորումներ: Խոսքը վերաբերում է կողմերի դրսևորած դիսպոզիտիվ վարքագծին, որը թույլատրելի սահմաններում ընդունվում է հարկային մարմնի կողմից, կամ փոխադարձ համաձայնությամբ կողմերի միջև ձևավորվում են պայմանագրային հարաբերություններ:

Հարկային պարտավորության իրավական կարգավորման անհրաժեշտությունը առաջանում է այն պահից, որն սահմանափակված է որևէ հարկատեսակի գանձման մասին օրենքում: Այլ խոսքով, հարկային պարտավորության սկիզբն այն ժամկետն է, որի շրջանակներում պետք է վճարվի հարկը:

Հարկային պարտավորության կատարման պահը հստակեցված է օրենսդրությամբ յուրաքանչյուր հարկատեսակի համար: Հարկերի կամ պարտադիր վճարների վճարման ժամկետների փոփոխություն թույլատրվում է, եթե փոփոխություններ թույլատրվում են հարկային օրենսդրությամբ:

Բարդ հարկային պարտավորությունները կատարման ժամկետների փոփոխության դեպ-

քում, եթե հարկային վճարների հաշվարկները կատարվում են հարկային մարմինների կողմից, հարկային պարտավորության կատարման սկիզբը համարվում է տնտեսվարող սուբյեկտին հարկային մարմնի ուղարկած հիշեցումը: Նման դեպքերում հարկերի վճարման ժամկետների խախտումը առաջ է բերում տուժանքներ, որ հարկ վճարողները պարտավոր են վճարել յուրաքանչյուր ուշացած օրվա համար օրենքով սահմանված չափերով:

Հարկային գործող օրենսդրության ուսումնասիրություններից երևում է այն կարևորությունը, որ տրվում է հարկային պարտավորության կատարման մեթոդներին:

Որպես կանոն, հարկային պարտավորությունների կատարումը ապահովվում է համոզման մեթոդով, երբ տնտեսվարող սուբյեկտը ինքնուրույն, գիտակցելով սահմանադրական պարտականությունը, սահմանված ժամկետներում վճարում է համապատասխան հարկերը:

Հարկային օրենսդրությունը կատեգորիկ արգելում է երրորդ անձանց կողմից հարկային պարտավորության կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆիզիկական անձանց մահվան կամ իրավաբանական անձանց վերակազմավորման դեպքում տեղի է ունեցել իրավահաջորդություն:

Գործնականում միշտ չէ, որ հարկ վճարողները կամավոր, պարտքի գիտակցմամբ են կատարում հարկային պարտավորությունները:

Այս հանգամանքների հաշվառմամբ իրավաբանական գրականության մեջ քննարկվում է հարկային պարտավորությունների կատարման **հարկադրական մեթոդը**, որն իրականացվում է ինչպես հարկային, այնպես էլ պետական լիազոր այլ մարմինների կողմից, վարչական կամ քրեական պատասխանատվության կիրառմամբ:

Հարկային մարմինների միջամտությամբ օրենքով սահմանված կարգով հարկային պարտավորությունների հարկադիր կատարմանը կարող են ներգրավվել մաքսային, բանկային, դատական և դատախազական մարմինները:

Այսօր որոշ երկրներում, այդ թվում նաև մեր հանրապետության հարկային և մաքսային

օրենսդրությամբ լայնորեն կիրառվում է բանկային աջակցությունը իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշիվներում եղած դրամական միջոցներից հարկային պարտավորությունների կատարումը¹:

Գործնականում հարկային մարմինների պահանջով իրավաբանական անձանց բանկային հաշիվներից ինկաստ վճարման ձևի կիրառմամբ պետական բյուջե են փոխանցվում հարկային պարտավորություններ չկատարման դիմաց վճարները:

Հարկային պարտավորությունների հարկադիր կատարման մյուս եղանակը հարկ վճարող կամ հարկային գործակալի գույքի դամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա ու արգելանք դնելն է, որի հիման վրա հարկային մարմինները հայցով դիմում են դատարան տնտեսվարող սուբյեկտի գույքից հարկը բռնագանձելու պահանջով²:

Դատարանի համապատասխան որոշումից հետո հարկային պարտավորությունների կատարմանը ակտիվորեն մասնակից են դառնում դատական ակտերի հարկադիր կատարման մարմինները, որոնք օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում իրավունք ունեն կալանք դնելու հարկ վճարողի գույքի վրա, որը հարկային պարտավորության կատարման երաշխիք է:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանրացման հիման վրա կարելի է պարզաբանել օրենսդրությամբ ամրապնդված այնպիսի ելակետային դրույթներ, ինչպիսիք են հարկային պարտավորությունը, պարտավորության կատարումը, կազմակերպության լուծարումը, վերակազմակերպումը, համատեղ գործունեությունը, ինչպես նաև այլ դրույթներ:

Գործող օրենսդրությամբ հարկային պարտավորություն է համարվում որևէ հարկատեսակի կամ պարտադիր վճարի կամ դրանք օրենքի դրույթները խախտելու համար սահմանված տույժերի և տուգանքների գումարներ վճարելու հարկ վճարողի պարտավորությունը³:

Հարկային պարտավորությունը ներառում

¹ Տե՛ս ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենքը, հոդ. 104:

² Տե՛ս ՀՀ «Հարկային օրենսգիրք», հոդ. 429, 433-435 հոդվածներ, Եր., 2017թ.:

³ Տե՛ս ՀՀ «Հարկային օրենսգիրք», հոդ. 43:

է հարկային և պարտադիր վճարների, այդ թվում, թաքցրած կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված, ինչպես նաև հարկային օրենսդրության դրույթները խախտելու համար հաշվարկված տույժերի և տուգանքների գումարները:

Հարկ վճարողների գործնական հարաբերությունների ուսումնասիրությունները հուշում են, որ հարկային պարտավորությունների կատարման իրավական բովանդակության տակ պետք է հասկանալ հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, պարտադիր վճարի, ինչպես նաև տույժերի և տուգանքների գումարի վճարումը, օրենքով սահմանված կարգով իրականացվող հաշվանցումների եղանակը:

Հանրապետության գործող «Հարկային օրենսգիրքը» քաղաքացիական օրենսդրությունից կատարած բազմաթիվ փոխառություններով ոտնահարում է իրավունքի ճյուղերի սահմանազատման ժամանակակից հայեցակարգային դրույթները՝ ստվերում թողնելով իրավունքի ճյուղերի միմյանցից սահմանազատող այնպիսի էական չափորոշիչներ, ինչպիսիք են իրավական կարգավորման առարկան և մեթոդը, որոնց հստակեցումը իրավագիտության ոլորտում հարյուրավոր տարիներ է պահանջել: Իրավունքի ճյուղերի՝ միմյանցից սահմանազատման հիմնախնդիրները այսօր էլ իրավագիտության ոլորտում մնում է չլուծված խնդիր, որի վրա բացասաբար են անդրադառնում հատկապես ճյուղային օրենսդրության անարխիկ զարգացումները, որը մեծապես բխում է ՀՀ օրենսդիր մարմնի անբավարար և ցածր մակարդակի իրավաստեղծ գործունեությունից, որի արդյունքը ընդունված օրենքներում շատ դեպքերում անմշակ է, անորակ: Իրավական ակտերը զուրկ են ոճից, լեզվից և բովանդակությունից: Այս է պատճառը, որ հարկային օրենսգրքում «հարկային պարտավորությունը», վերջինիս կատարումն ապահովող միջոցները և գործընթացները առանց սկզբունքային տարբերությունների փոխառված են քաղաքացիական օրենսդրությունից այն դեպքում, երբ հարկային իրավունքը հանրային իրավունքի ճյուղ

է, որին խորթ է մասնավոր իրավունքի սկզբունքային դրույթները⁴:

Հարկային օրենսգիրքը, ամրագրելով հարկային պարտավորության սուբյեկտների կարգավիճակը, վերջիններիս քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված գույքային իրավունքների շրջանակներով փոխադրում է հարկային օրենսդրության կարգավորման դաշտ՝ «կալանքի տակ դնելով» քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կամքի ազատ դրսևորման երաշխավորված սկզբունքները, իշխանության անունից իր կամքը թելադրելով հարկային պարտավորություններից ծագող բոլոր հարաբերություններին՝ միակողմ հաղորդում է իշխանության բնույթ՝ չեզոքացնելով գույքային հարաբերություններում կողմերի իրավահավասարությունը:

Նկատենք, որ գործընթացը մեղմելու նպատակով հարկային օրենսգիրքը սահմանում է, որ հարկային պարտավորության կատարումն իրականացվում է անմիջականորեն հարկ վճարողի, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև հարկային գործակալի կամ այլ անձի կողմից:

Հարկ վճարողն ինքնուրույն է հաշվարկում հաշվետու ժամանակաշրջանի համար վճարման ենթակա հարկի կամ պարտադիր վճարի գումարը՝ ելնելով հարկման բազայից, հարկի կամ պարտադիր վճարի դրույքաչափից և սահմանված հարկային արտոնություններից:

Սահմանում է հարկային պարտավորությունների կատարման կարգը, ըստ որի՝ հարկ վճարողի կողմից որևէ հարկատեսակի գծով հարկային պարտավորությունները կատարման ժամանակ առաջնահերթության կարգով սկզբում մարվում են օրենքին համապատասխան հաշվարկված տույժերի գումարները, այնուհետև հարկի կամ պարտադիր վճարի գումարը և ապա համապատասխան հաշվարկված տուգանքների գումարները:

Հարկային պարտավորությունների պարտադիր կատարումն ապահովելու նպատակով հարկային գործող օրենսգիրքը քաղաքացիական օրենսգրքից կատարված փոխառություն-

⁴ Տե՛ս ՀՀ «Հարկային օրենսգիրք», 2016թ. հոկտեմբերի 4, գլուխ 79, հոդ. 436-439: Նույնաբովանդակ փոխառություններ կան ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում, որի հղումների հիմքը տե՛ս «Եվրասիական տնտեսական միության», «Մաքսային օրենսգիրք», հոդ. 86:

ների պատճառով անդրադառնում է իրավաբանական անձանց լուծարմանը, վերակազմակերպմանը և համատեղ գործունեությունից բխող պարտավորությունների կատարմանը՝ ավելորդ ու անիմաստ ծանրաբեռնելով օրենսգիրքը, կրկնում է, որ լուծարվող կազմակերպության հարկային պարտավորությունների կատարումը դրվում է այդ կազմակերպության լուծարային հանձնաժողովի վրա, որը պարտավորության կատարումը ապահովում է կազմակերպության դրամական միջոցների և գույքի վաճառքից ստացված միջոցների հաշվին: Նույն տրամաբանությամբ հենվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Մասնկույթի մասին», ինչպես նաև «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքների դրույթների վրա՝ ավելորդ անգամ թմբկահարում է այն միտքը, ըստ որի, եթե լուծարվող կազմակերպության դրամական միջոցները, այդ թվում այդ կազմակերպության գույքի իրացումից հետո չեն բավարարում հարկային պարտավորություններն ամբողջովին մարելու համար, ապա հարկային պարտավորությունների չկատարված մասը կրում են այդ կազմակերպության մասնակիցները (հիմնադիրները), եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով, կազմակերպության կանոնադրությամբ և այլ հիմնադիր փաստաթղթերով նրանք պատասխանատվություն են կրում կազմակերպության պարտավորությունների գծով⁵:

Եթե լուծարվող կազմակերպությունն ունի հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարներ, ապա նշված գումարները օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվանցման ընկերության այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման լուծարվող կազմակերպությանը:

Վերակազմակերպված կազմակերպության հարկային պարտավորությունները կատարվում են կազմակերպության իրավահաջորդի կողմից:

Մի քանի կազմակերպությունների միա-

ծուլման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այդ կազմակերպությունների միաձուլումից առաջացած կազմակերպությունը:

Կազմակերպությունների միացման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ է համարվում այն կազմակերպությունը, որին միացել է կազմակերպությունը:

Կազմակերպության բաժանման դեպքում հարկային պարտավորությունների կատարման առումով իրավահաջորդ են համարվում այդ բաժանումից առաջացած կազմակերպությունները՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, նրանց ակտիվներին համամասնորեն:

Կազմակերպության վերակազմավորման դեպքում հարկային պարտավորությունների կատարման գծով իրավահաջորդ է համարվում այդ կազմակերպության վերակազմավորման արդյունքում առաջացած կազմակերպությունը:

Կազմակերպության կազմից մեկ կամ մի քանի կազմակերպության առանձնացման դեպքում վերակազմակերպված իրավաբանական անձի հարկային պարտավորությունները նրանցից յուրաքանչյուրին են անցնում բաժանիչ հաշվեկշռի համապատասխան, նրանց ակտիվներին համամասնորեն:

Գործող հարկային օրենսդրությունը այսօր կարգավորում է համատեղ գործունեության իրականացումից առաջացած հարկային պարտավորությունները: Այդ գործունեության մասով հարկի կամ պարտադիր վճարի հաշվարկման, ինչպես նաև հարկային պարտավորությունների կատարման համար համատեղ գործունեության մասնակիցները կրում են համապարտ պարտավորություն:

Նկատենք, որ գործակալնում համատեղ գործունեության մասով հարկի կամ պարտադիր վճարի հաշվարկման և վճարման պարտավորությունը օրենքով սահմանված կարգով կրում է համատեղ գործունեության այն մասնակիցը, որը համատեղ գործունեության պայմանագրով վարում է գործերը:

Համատեղ գործունեությանը վերաբերող

⁵ Տե՛ս ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք», հոդ. 70, 71, «Մասնկույթի մասին» ՀՀ օրենքի 82-րդ ողվածքը, ՀՀ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքը, ընդ. 2001թ., նոյեմբերի 6, հոդ. 31:

հարկային կարգավորումները պարզեցնելու նպատակով ընդգծենք, որ եթե համատեղ գործունեության պայմանագրով գործերը վարվում են համատեղ գործունեության մեկից ավելի մասնակիցների կողմից, ապա սահմանված կարգով հարկի կամ պարտադիր վճարի հաշվարկման և վճարման պարտավորություն կրում է մասնակիցների կողմից լիազորված անձը:

Հարկային օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ հարկի կամ պարտադիր վճարի հաշվարկման կամ վճարման պարտավորություններ կրող անձը համատեղ գործունեության պայմանագրի կնքման օրվան մինչև 30-րդ օրը ներառյալ պարտավոր է իր հաշվառման վայրի հարկային մարմնին ներկայացնել հայտարարություն համատեղ գործունեության մասով հարկի կամ պարտադիր վճարի հաշվարկման կամ վճարման պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ, որի հիման վրա հարկային մարմինը նշված անձին հաշվառում է որպես առանձին հարկ վճարող:

Համապատասխան հարկի կամ պարտադիր վճարի հաշվարկման կամ վճարման պարտավորություններ կրող անձը կրում է հարկ վճարողների կամ հարկային գործակալների համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները, և նրա կողմից հարկային պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում համատեղ գործունեության մնացած բոլոր մասնակիցների կողմից այդ գործունեության մասով հարկային պարտավորությունները համարվում են կատարված:

Ուսումնասիրությունները վկայում են, որ գործնականում երբեմն համատեղ գործունեության մասնակիցներն ինքնուրույն չեն որոշում հարկային պարտավորությունները հաշվարկող և վճարող անձին: Նման դեպքում, կարծում ենք, հարկային պարտավորությունների գումարը ամբողջ ծավալով պետք է վճարվի այդ մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից:

Գործող հարկային օրենսդրությամբ լուծված է նաև մահացած ֆիզիկական անձի հարկային պարտավորությունների կատարման կարգը:

Մահացած ֆիզիկական անձի գույքի գծով հարկային պարտավորությունները կատարվում են մահացած անձի ժառանգորդի կողմից՝ ժառանգած արժեքին համամասնորեն:

ՀՀ գործող հարկային օրենսդրությամբ սպառիչ թվարկված են այն հիմքերը, որոնց առկայությամբ դադարում են հարկային պարտավորությունները:

Հարկային պարտավորությունը դադարում է այն դեպքերում, երբ այն կատարվել է, կամ լրացել է հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետը, կամ սահմանվել է հարկային պարտավորության գծով ազատման կամ նվազեցման արտոնություն՝ ազատված կամ նվազեցված պարտավորության չափով, կամ բացակայում է մահացած ֆիզիկական անձի ժառանգորդը, կամ ժառանգորդը հրաժարվում է ժառանգության ընդունումից, ինչպես նաև այն ժամանակ, երբ մահացած ֆիզիկական անձի հարկային պարտավորությունները գերազանցում են գույքի արժեքը գերազանցող մասով, ինչպես նաև այն հիմքերի առկայությամբ, որոնք սահմանված են ՀՀ «հարկային օրենսգրքի» 45-րդ հոդվածում:

Ժամանակակից աշխարհում, երբ գիտությունը վերածվել է արտադրական ուժի, սոցիալ-տնտեսական, արտադրական բոլոր հարաբերությունները ուղղված են շահույթի հետապնդմանը, տնտեսական գործունեության իրավական կարգավորմանն ուղղված իրավունքի ճյուղերի և հատկապես այդ ճյուղերի օրենսդրությամբ սահմանված իրավաբանական պատասխանատվության գործնական կիրառման հիմնահարցերը լուրջ դժվարություններ են առաջացնում իրավակիրառ մարմինների համար:

Տնտեսական գործունեության ոլորտը կյանքի հրամայականով վերածվել է իրավական պարտավորությունների դաշտի. գերիշխող են գույքային և դրամական պարտավորությունները, որոնց ավանդական իրավական կարգավորման մեթոդները չեն բավարարում հատկապես կյանքում ծագած բազմաբղետ հարաբերությունների իրավական պաշտպանության ապահովմանը, քանի որ խաթարվել է ոլորտի կարգավորմանն ուղղված հանրային և մասնավոր իրավունքի ճյուղերի կարգավորման առարկան: Իրավունքի ճյուղերի կարգավորման առարկայի տարրալուծումները բացասաբար են անդրադառնում իրավաբանական պատասխանատվության, դրա կիրառման լրիվության վրա՝ երբեմն գործնականում հակասելով օր-

յեկտիվության և բազմակողմանիության սկզբունքների կիրառման բովանդակության վրա, իրավունքի տարբեր ճյուղերում կիրառվող հարկադրանքի պատասխանատվության միջոցների առանձին տեսակներին հաղորդելով միարժեք բովանդակություն, որի պատճառով հարկային պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող ներգործության միջոցը պատասխանատվության առումով կորցնում է իր արժեքը: Խոսքը, օրինակ, վերաբերում է քրեական, վարչական, հարկային, մաքսային և մի շարք այլ իրավունքի ճյուղերում որպես պատասխանատվության միջոց կիրառվող տուգանք-տույժին (տուժանքի մոդել):

Պարզեցման իմաստով նկատենք, որ ֆինանսական իրավունքի, այդ թվում նրա ենթաճյուղերի (բյուջետային, հարկային, մաքսային, բանկային) օրենսդրությամբ պարտավորությունների կատարումն ապահովող սահմանված պատասխանատվության միակ միջոցը տուգանքն (տույժ) է, որը ըստ էության ոչնչով չհիմնավորված, իրավական հիմքից զուրկ քաղաքացիաիրավական տուժանքի մոդելի կիրառություն է հարկային իրավահարաբերությունների պաշտպանության ոլորտում:

Հիմնվելով իրավունքի համեմատական մեթոդի սկզբունքային դրույթների պահանջների վրա՝ փորձենք արժևորել իրավական պատասխանատվության և նրա հարկադրանքի միջոցների ներգործության արդյունավետությունը, որը ըստ էության հասցված նյութական (դրամական) վնասի վերականգնումից բացի, հարկային իրավունքում որևէ խնդիր չի լուծում, հետևաբար, իրավաբանական պատասխանատվության համակարգում տուգանքի (տույժ)

կիրառման արդյունավետության բարձրացման, տնտեսական օրենսդրության ոլորտում պատասխանատվություն սահմանող ավելորդ իրավական ակտերի քանակը սահմանափակելու, ԱԺ իրավաստեղծ գործունեությունը այս մասով թեթևացնելու նպատակով առաջարկվում է հիշատակված ոլորտներում տուգանքը անկախ կիրառման ոլորտից (դրանք բովանդակությամբ միարժեք են) միավորել և ցանկացած պարտավորության խախտման դեպքում կիրառել տուժանքի մոդելի սկզբունքներին համահունչ⁶:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ չնայած իրավաբանական պատասխանատվության նոր տեսակների արմատավորման տարբեր հայեցակարգեր են ձևավորվել, այնուամենայնիվ պատասխանատվության նոր տեսակների, հատկապես տնտեսական օրենսդրության առանձին ճյուղերում սահմանված հարկադրանքի ներգործության, ինչպես նաև պատասխանատվության և պատժի միջոցներն անհրաժեշտ է միավորել տուգանքի՝ որպես միասնական հարկադրանքի միջոցի մեջ՝ հրաժարվելով անարդյունք ներգործության մյուս միջոցներից:

Այս իմաստով անդրադառնալով ՀՀ իրավունքի ճյուղերի ապագայում ձևավորվող «Ֆինանսական...», «Բանկային...», «Բյուջետային...» օրենսգրքերի, ինչպես նաև գործող «Հարկային օրենսգրքի» վերանայման իրավաստեղծ գործունեության կանխատեսումներին՝ կարծում ենք՝ հիշատակված առաջարկությունները կնպաստեն տնտեսական օրենսդրության ոլորտում կիրառվող պատասխանատվության միջոցների միասնականացմանը:



⁶ Մանրամասն տե՛ս, Финансовое право (под общей редакции С.Б. Запольского), Юрайт, 2014, 178-179 էջեր:

ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Զինվորական հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունը, ինչպես գիտենք, կանխարգելումն է: Մարդկային հասարակությունն արդեն վաղուց համոզվել է, որ բացասական ցանկացած երևույթի կանխումը միշտ ավելի արդյունավետ և նպատակահարմար է, քան դրան հաջորդող վերականգնողական աշխատանքների իրականացումը (հիվանդության բուժում, հանցագործության համար պատժել և այլն): Հանցավորության կանխմանն ուղղված գործունեությունը ենթադրում է փոխկապակցված և նպատակային այնպիսի միջոցառումների մշակում և իրականացում, որոնք անհրաժեշտ և բավարար են հանցավոր արարքների կատարման պատճառների և նպաստող պայմանների վրա դրականորեն ներգործելու կամ դրանց առաջացմանը խոչընդոտելու համար¹:

Հանցավորության կանխման սոցիալական արժևորումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այն համարվում է հանցագործությունների դեմ պայքարի առավել արդյունավետ ուղղություններից նախ և առաջ այն պատճառով, որ կոչված է ապահովելու հանցավորության արմատների և աղբյուրների, պատճառների և պայմանների բացահայտումն ու վերացումը (չեզոքացում, ուղեփակում)²: Այլ կերպ ասած, կանխումը, որպես կանոն, ենթադրում է հանցավոր արարքների կատարման հնարավորության բացառում: Դրա հետ մեկտեղ, կանխարգելիչ միջոցների արդյունավետ կիրառումը հնարավորություն է ընձեռում խափանել նախապատրաստվող կամ արդեն իսկ սկսված հանցավոր գործունեությունը, բացառել օրենքով պահպանվող հասարակական

հարաբերություններին վնաս պատճառելու հնարավորությունը: Հայ հասարակությունում ներկայումս մտահոգություն է առաջացնում ՀՀ Զինված ուժերի և ռազմական այլ զինվորական ձևավորումներում զինծառայողների շարքում հանցավորության խնդիրը:

Ժամանակակից քրեագիտությունը մշակել է հանցավորության կանխարգելում՝ ըստ դրանց պատճառների և պայմանների մակարդակների.

1. պատճառների և պայմանների ընդհանուր սոցիալական մակարդակին համապատասխանում է հանցավորության սոցիալական կանխարգելումը:

2. Հանցավորության պատճառների և պայմանների հատուկ մակարդակներին համապատասխանում է հանցավորությունների հատուկ քրեագիտական կանխարգելումը:

3. Հանցավորության պատճառների և պայմանների անհատական մակարդակին համապատասխանում է հանցավորության անհատական կանխարգելումը³:

Հանցավորության կանխարգելման հարցերում անհրաժեշտ է դասել՝

- հանցագործությունների կանխարգելման հարցերում պետական քաղաքականության հիմքերի հաստատումը,
- հանցավորության կանխարգելման վերաբերյալ օրենքների փոփոխումը, դրանց իրականացման հսկողությունը, ինչպես նաև հանցագործությունների կանխարգելմանն ուղղված պետական ծրագրերի իրականացումն ու ֆինանսավորումը,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021

¹ Տե՛ս **А. И. Алексеев, С. И. Герасимов, А. Я. Сухарев**, Криминологическая профилактика. Теория, опыт, проблемы. М., 2014, 6-7 էջեր:
² Մանրամասն տե՛ս **Грибанов Е.В.**, Технологии предупреждения преступлений: проблемы формирования и развития // Государство и право, 2019, №10, 96-97 էջեր:
³ Մանրամասն տե՛ս **Раска Э. Э.**, Криминологическая профилактика: Теоретические и методологические основы: Автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1988.

- ըստ հանցավորության կանխարգելման գործադիր իշխանության մարմինների գործողությունների համադասումը և համագործակցությունը,
- հանցավորության կանխարգելման ոլորտում պետական ստանդարտների մշակումն ու հաստատումը,
- հանցավորության կանխարգելման ոլորտում վիճակագրական հաշվառման և հաշվետվության պետական միասնական համակարգի հաստատումը,
- հանցավորության կանխարգելման իրականացման ժամանակ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Այս հարցերը ավանդաբար իրականացվում են ըստ հետևյալ սկզբունքների՝ օրինականություն, մարդասիրություն և սոցիալական արդարություն:

XXI դարում «բնակչության սոցիալական պաշտպանվածությունը վերածվել է հայ հասարակության զարգացման կարևոր քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, բարոյահոգեբանական գործոնի⁴: Սոցիալական պաշտպանության ինստիտուտը, իրականացնելով կենսաապահովման, սոցիալ-կայունացնող և զարգացնող իր հիմնական հասարակական գործառույթները, սերտորեն համագործակցում է սոցիալական այլ ինստիտուտների հետ և խաղում համակարգային ինտեգրված ինստիտուտի կարևոր դեր:

Զինծառայողների սոցիալական պաշտպանության առումով անհրաժեշտ է հասկանալ զինվորական հանրույթի, զինծառայողների, նրանց ընտանիքների, զինծառայությունից հեռացված անձանց, բանակի հաշմանդամների և վետերանների նորմալ գործունեության և զարգացման աջակցմանը, օրինական իրավունքների ու ազատությունների, արտոնությունների շահերի պահպանությանը կողմնորոշված պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և հաստատությունների աշխատանքը:

Այսպես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 29 նոյեմբերի 2017 թվականի ՀՕ-195Ն ՀՀ օրենքի⁵ 6-րդ բաժինը ամբողջությամբ նվիրված է զինծառայողների դրամական ապահովության և սոցիալական ապահովության հարցերին, մասնավորապես, զինծառայողների դրամական, պարենային և իրային ապահովությունը, դրամական օգնությունները, բժշկական օգնությունը և սպասարկումը, բնակարանային ապահովությունը, տրանսպորտային ապահովումը, կրթություն ստանալու երաշխիքները, դրամական աջակցությունը և այլն: Զինված ուժերի պայմաններում սոցիալական պաշտպանվածությունը ներառում է օրենսդրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական բնույթի միջոցների համակարգ: Այն արտացոլում է զինծառայողների տարբեր կատեգորիաների և նրանց ընտանիքի անդամների կարևոր սոցիալական իրավունքների և երաշխիքների իրականացման աստիճանը և լիարժեքությունը, ինչն էլ վերջիններիս հնարավորություն տալիս բավարարել ծառայության սահմանափակումները և զրկանքները փոխհատուցող անհրաժեշտ նյութական և հազևոր պահանջները:

Բանակը վակուում չէ, հասարակությունից զատ չի ապրում: Այն վերջինիս բաղադրիչ հատվածն է և անմիջականորեն կախված է հասարակությունում և դրա ինստիտուտներում ընթացող խորքային գործընթացներից ու փոփոխություններից: Բանակի սոցիալական կերպարը սահմանվում է պետական և հասարակական կառուցվածքով, երկրի տնտեսական զարգացման մակարդակով, իրականացվող սոցիալական քաղաքականությամբ և տվյալ պետության քաղաքացիների բարեկեցությամբ, նրանց ազատությունների և իրավունքների իրականացմամբ, հասարակության քրեականացվածության աստիճանով, սոցիալական ոլորտի վիճակով և ժողովրդագրական գործընթացներով, «քաղաքացիական» և «զինվորական» հանրույթների համագործակցության բնույթով և մակարդակով:

⁴ Մանրամասն տես Հարությունյան Մ.Ա. Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փոխհատուցությունը: Երևան, «Նաիրի» հրատ., 2014:

⁵ Տես ՀՀՊՏ, № 73 (1348) 6 դեկտեմբերի 2017:

«Սահմանադրությանը, օրենսդրական այլ ակտերին համապատասխանությամբ զինծառայողները նույն կերպ, ինչպես երկրի բոլոր քաղաքացիները օժտված են այն բոլոր իրավունքներով, ազատություններով, արտոնություններով, որոնք ապահովում են վերջիններիս սոցիալական պաշտպանությունը: Դրանց թվին պատկանում են ազատության, արժանապատվության պաշտպանությունը, տեղաշարժի և բնակության վայրի ընտրության ազատ իրավունքը, խոսքի ազատությունը, ժողովներում, ցույցերում, քայլարշավներում, պիկետներում մասնակցության իրավունքը, խղճի և դավանանքի ազատությունը, պետական գործերի և հասարակական կազմակերպությունների կառավարման իրավունքը, աշխատանքի իրավունքը, ծառայողական ժամանակի և հանգստի իրավունքը, բնակարանի, առողջության պահպանության և բժշկական օգնության, սեփականության իրավունքը:

Զինվորական աշխատանքի բարդության և լարվածության առումով, զինծառայողներին և նրանց ընտանիքներին տրամադրվում են որոշակի արտոնություններ՝ ըստ հարկերի, ապահովագրական երաշխիքների, վնասի հատուցման, ոչ իրավաչափ գործողությունների բողոքարկման, բնակարանի, կոմունալ-կենցաղ ծառայությունների վճարման, արձակուրդի, գործուղման ժամանակ երկաթուղային, օդային, ջրային և ավտոմոբիլային (բացառությամբ տաքսի) անվճար երթևեկության, սակայն որոշ, բայց կարևոր արտոնություններ ներկայումս չեղյալացված են կամ չեն գործում:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը նախատեսում են զինծառայողների իրավունքների սահմանափակման հնարավորություն միայն առանձին, խիստ որոշակի պայմաններում⁶:

Հիմնականում երկրի նոր քաղաքական ղեկավարությունը, ըստ զինվորական հանրային սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծման, որոշակի ջանքեր է ձեռնարկել և շարունակում է ձեռնարկումները: Արմատական բարեփոխությունների իրականացման շրջանում ընդունվել է, ինչպես վերը

նշել ենք, զինծառայողների իրավական կարգավիճակի տարբեր սապեկտները կարգավորող օրենքը, վերախմաստավորման են ենթարկվել Հայաստանի պաշտպանական պոտենցիալի գրեթե բոլոր բաղադրիչները: Աստիճանաբար սկսում են ձևավորվել նաև կոնկրետ զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեխանիզմներ, այդ թվում նաև դատական մարմինների միջոցով: Դրա շնորհիվ պաշտպանության միջոցների և երկրում ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում հաջողվել է բավականին բարեհաջող, առանց զինծառայողների կողմից զանգվածային բողոքների ձևափոխել ռազմաքաղաքական խնդիրների վերախմաստավորումը և արժևորումը:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ զինվորական հանրայնում սոցիալական պաշտպանության ապահովման առավել հեռանկարային ուղղության թվին դասվում են՝

1. ըստ զինծառայողների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության բազայի համապատասխանեցում առկա սոցիալ-տնտեսական պահանջներին:

Այս առումով, առաջարկում ենք՝

1. մշակել և ընդունել «Զինծառայողների, զինվորական ծառայությունից հեռացված քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների և սոցիալական արտոնությունների վերաբերյալ» կողիֆիցիրացված նորմատիվ-իրավական ակտ: Այդ նորմատիվ-իրավական ակտում հատուկ տեղ պետք է գրավեն պատերազմական և այլ գործողությունների իրականացման ժամանակ ռազմական օպերացիաների գործընթացին մասնակցություն ունեցող զինծառայողների համակողմանի ապահովման վերաբերյալ դրույթները:

2. Ըստ զինծառայողների սոցիալ-տնտեսական շահերի ապահովման անհրաժեշտ երաշխիքների համակարգի ստեղծումը: Այս նպատակով անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ ըստ դրամական ապահովման բարձրացման մինչև այն չափերի, որոնք կապահովեն զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների նորմալ կենսագործունեությունը, տնտեսապես հիմնավորված կադ-

⁶ Մանրամասն տե՛ս **Зайка Л. М.**, Правовое положение в армии //Социалистическая законность. 1989, № 12, 14-15 էջեր:

րային պատվերի հիման վրա մշակել նրանց սոցիալական պաշտպանության համալիր ծրագիր:

3. Անհրաժեշտ է ձեռնարկել բնակարանային խնդիրների, զինվորականների և զինվորական կայազորների սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործման առավել արմատական լուծումներ, կորորինացնել զինծառայողների համար սոցիալական կարևոր նշանակություն ունեցող սոցիալական պաշտպանությունը ապահովող հատուկ ծառայությունների գործունեությունը (բժշկական, թիկունքի, ռազմաիրավական, հոգեբանական): Անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի անցկացնել զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների, ՀՀ Ձինված ուժերի քաղաքացիական անձնակազմի սոցիալ-տնտեսական և իրավական կարգավիճակի մոնիթորինգ: Դրանց ընդհանրացված արդյունքները ներկայացնել խորհրդարանական նիստերին՝ ըստ արդիական խնդիրների օպերատիվ լուծումների ընդունման նպատակներով:

4. Բարելավել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության առկա ինստիտուտները և մեխանիզմները ու ստեղծել նորերը: Նպատակահարմար է բարձրացնել Ձինված ուժերի դաստիարակչական կառույցների առկա կարգավիճակը, զորամասերում, միավորումներում և հաստատություններում ստեղծել ըստ զինծառայողներին, պատերազմի վետերաններին և զինծառայության վետերաններին, Հայկական բանակի ծառայողներին, հաշմանդամներին և մարդկանց այլ կատեգորիաներին հասցեական օգնության ցուցաբերման և աջակցության ռազմասոցիալական աշխատանքի ծառայություններ:

5. Ապահովել աճող սերնդի ըստ հոգևոր-բարոյական դաստիարակության համալիր ծրագրերի անցկացումը, Ձինված ուժերում պետական հայրենասիրական գաղափարների և սեփական Հայրենիքի նկատմամբ սիրո ներծումը: Անհրաժեշտ է պետական համազգային գաղափարախոսության մշակում, Հայաստանի Հանրապետության պատմական ավանդույթների հիման վրա երիտասարդության հայրենասիրական դաստիարակության համակարգի վերականգնում, զանգվածային լրատվա-

կան միջոցներում ռազմական աշխատանքի հեղինակության բարձրացում:

6. Ձինծառայողների սոցիալական պաշտպանությունը սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչ է և անմիջականորեն կախված է իրականացվող բարեփոխությունների սոցիալական ուղղվածությունից, պետության, հասարակության և անհատի սոցիալական անվտանգության նպատակաուղղված ձևավորումից, ազգի առողջության վերականգնումից և ամրապնդումից, քաղաքացիների կենսագործունեության սոցիալական ցուցանիշների բարելավումից, մշակույթի, բարոյականության, իրավակարգի զարգացվածությունից, մարդկանց սոցիալական ակտիվության բարձրացումից:

7. Ձինծառայողի սոցիալական պատշաճ պաշտպանությունը զինվորական հանցավորության կանխարգելման արդյունավետ միջոցառումներից մեկն է:

Հանցավորության, այդ թվում զինվորական հանցավորության ընդհանուր կանխարգելման հիմնական ուղղություններից է նաև քրեական օրենսդրության կատարելագործումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքը ընդունվել է 2003 թվականին, որից հետո դրա իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը և քրեաիրավական նորմերի մեկնությունները վկայում են բազմաթիվ թերությունների ու բացթողումների մասին:

Մինչև այժմ գործող ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ: Սակայն այդ փոփոխությունների և լրացումների չհամաձայնեցված մոտեցումները, միասնական հայեցակարգային լուծումների բացակայությունը և կրիմինալոգիական հիմնավորվածության անտեսումը որոշ դեպքերում հանգեցրել են օրենսգրքում առկա հակասությունների, թերացումների և իրավական որոշակիության ավելի խորացմանը, ինչը բացասական ազդեցություն է թողել քրեական և պատժողական քաղաքականություն, հանցավորության դեմ արդյունավետ պայքարի իրականացման վրա:

Ելնելով վերոնշյալից, առաջարկում ենք նոր քրեական օրենսգրքի նախագծի և դրա հայեցակարգի մշակման գործընթացում ուշադ-

րություն դարձնել հետևյալ ելակետային դրույթներն, որոնք, մեր կարծիքով, պետք է տեղ գտնեն նշված փաստաթղթերում:

Քրեական օրենսգիրքը այն եզակի օրենքների ժողովածուն է, որն առավելագույնս պետք է լինի կայուն, կանխատեսելի, հստակ: Քրեական օրենսգրքի նորմերը պետք է պայմանա-

վորված և հիմնավորված լինեն սոցիալ-իրավական և կրիմինալոգիական տեսանկյունից: Քրեական օրենքը պետք է կոչված լինի ապահովելու մարդու, հասարակության և պետության անվտանգության արդյունավետ պաշտպանությունը⁷:



⁷ Ушінрашын илһи Противодействие современной преступности: криминологические, уголовноправовые и уголовно-процессуальные аспекты. Под общей ред. А.Н. Савенкова. - М, 2019:

ՄՈՒՇԵՂ ԱՐԱՄՅԱՆ

Ավան և Նոր Նորք վարչական
շրջանների դատախազի տեղակալ

ԱՆԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Ավան և Նոր Նորք վարչական
շրջանների դատախազության դատախազ

**ԿԱՇԱՌՔԻ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ, ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ
ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Կաշառքը արդարացիորեն համարվում է ամենալատենտային հանցագործություններից մեկը, այդ իսկ պատճառով պահանջում է իրավապահ մարմինների կողմից մասնագիտական պատրաստվածության և քննության մեթոդիկայի վերաբերյալ կրիմինալիստիկական հրահանգների տիրապետման բարձր մակարդակ:

Աշխատանքի նպատակը կաշառքի՝ որպես կոռուպցիայի դրսևորման ձևի քննության որոշ խնդիրների համալիր ուսումնասիրումն է, գնահատումը և վերլուծությունը՝ դրա հիման վրա նշված տեսակի հանցագործության քննության մեթոդիկայի վերաբերյալ տեսական գրականության և իրավակիրառ պրակտիկայում առկա դիրքորոշումների առավել ընդհանուր գծերը վեր հանելու և համակարգելու համար:

Բանալի բառեր. կրիմինալիստիկա, քննության մեթոդիկան, կաշառք, կոռուպցիա

МУШЕГ АРАМЯН

Заместитель прокурора административных
округов Аван и Нор Норк

АНИ МЕЖЛУМЯН

Прокурор прокуратуры административных
округов Аван и Нор Норк

**УГОЛОВНО-КРИМИНАЛИСТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ВЗЯТОЧНИЧЕСТВА КАК
ПРОЯВЛЕНИЯ КОРРУПЦИИ**

Взятничество по праву считается одним из самых скрытых (латентных) преступлений и поэтому требует от правоохранительных органов высокого уровня профессиональной подготовки и владения криминалистическим инструкциями.

Целью работы является комплексное изучение, оценка и анализ некоторых проблем расследования взяточничества как средства выявления взяточничества с целью согласования теоретической литературы по методике расследования вида преступления на его основе, выявления наиболее общие черты юридических позиций.

Ключевые слов: криминалистика, взяточничество, коррупция, методика расследованию

MUSHEGH ARAMYAN

Deputy prosecutor of Prosecutor’s Office of
Avan and Nor Nork Administrative Districts

ANI MEZHLUMYAN

Prosecutor in Prosecutor’s Office of
Avan and Nor Nork Administrative Districts

CRIMINAL-FORENSIC CHARACTERISTIC OF BRIBERY AS A MANIFESTATION OF CORRUPTION

Bribery is rightly considered one of the most latent crimes, and therefore requires a high level of professionalism and knowledge of forensic medical instructions from law enforcement agencies.

The aim of the work is to comprehensively study, evaluate and analyze some of the problems of the investigation of bribery as a means of detecting corruption in order to coordinate the theoretical literature on the methodology of the investigation of this type of crime, to identify the most general features of legal positions.

Keyword: forensic, bribery, corruption, methods of investigation

ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՅԵՐ

Հոդվածում քննարկվում են հանցագործության դրոյի հետ կապված վիճահարույց հարցեր: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ այն դեպքերում, երբ դրոյի արարքը մեկ այլ հանցանք է ներկայացնում, ապա դրոյի արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես դրոյություն և կոնկրետ հանցանքի կատարում, բացառությամբ այն դեպքերի, երբ խախտվում է կրկնակի դատապարտման արգելքի սկզբունքը: Բացի այդ, հեղինակը հիմնավորում է դրոյության դեպքում միակողմանի սուբյեկտիվ կապի և անգործությամբ դրոյություն իրականացնելու հնարավորությունը: Կատարված ուսումնասիրության հիման վրա հեղինակը ներկայացնում է դրոյի հասկացության սեփական բնորոշումը:

Բանալի բառեր. դրոյի, օժանդակող, հանցագործությունների համակցություն, միակողմանի սուբյեկտիվ կապ, անգործություն

СЕВАК ПОГОСЯН

заместитель прокурора административных округов Эребуни и Нубарашен,
соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ОПРЕДЕЛЕНИЯ ПОДСТРЕКАТЕЛЯ ПРЕСТУПЛЕНИЯ

В статье обсуждаются спорные вопросы, связанные с подстрекателем преступления. Во-первых, автор приходит к выводу, что в тех случаях, когда действие подстрекателя является другим преступлением, действие подстрекателя следует квалифицировать как множественность преступлений: как подстрекательство и совершение конкретного преступления, за исключением тех случаев, когда нарушено принцип запрета двойной ответственности. Кроме того, автор обосновывает возможность односторонней субъективной связи и подстрекательства в результате бездействия. На основе исследования автор дает собственное определение подстрекателя.

Ключевые слова: подстрекатель, пособник, множественность преступлений, односторонняя субъективная связь, бездействие

SEVAK POGHOSYAN

Deputy Prosecutor of Erebuni and Nubarashen Administrative Districts,
PHD Applicant of the Chair of Criminal Law at the Faculty of Law, YSU

ISSUES OF IMPROVING THE LEGISLATIVE DEFINITION OF THE INSTIGATOR OF A CRIME

The article touches upon controversial issues related to the instigator of a crime. First, the author concludes that in those cases when the instigator's act is another crime, the instigator's act should be qualified as a multiple offence- as an instigation and commission of a specific crime, except those cases when the principle of prohibition of double jeopardy is violated. In addition, the author substantiates the possibility of a one-sided subjective connection and instigation through inaction. Based on the research, the author gives his own definition of an instigator.

Keywords: instigator, facilitator, multiple offences, one-sided subjective connection, inaction

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է սեփականության և սեփականության իրավունքի էությունն ու առանձնահատկությունները՝ իրավունքի փիլիսոփայության տեսանկյունից: Հեղինակը հատկապես կանգ է առել: հիշյալ ինստիտուտի վերաբերյալ Հեգելի իրավափիլիսոփայական հայացքների վրա:

Բանալի բառեր. փիլիսոփայություն, իրավունք, իրավունքի փիլիսոփայություն, սեփականության բովանդակության իրավագործություններ, մասնավոր սեփականություն:

АРТУР ДАВТЯН

Соискатель института философии, социологии и права НАН РА

ИНСТИТУТ СОБСТВЕННОСТИ-С ТОЧКИ ЗРЕНИЯ ФИЛОСОФИИ ПРАВА

В данной статье автор обстоятельно рассматривает сущность и особенности собственности и права собственности с точки зрения философии права. Автор особо сосредотачивается на философско-правовых взглядах Гегеля по вопросам собственности.

Ключевые слова: философия, право, философия права, правомочии содержания собственности, частная собственность.

ARTUR DAVTYAN

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS of RA

THE INSTITUTION OF PROPERTY FROM THE POINT OF VIEW OF THE PHILOSOPHY OF LAW

In this article, the author discusses in detail the essence and features of property right from the point of view of the philosophy of law. The author focuses on Hegel's legal-philosophical views on the institute.

Keywords: philosophy, law, philosophy of law, property content jurisdiction, private property.

* * *

ԴԱՎԻԹ ՕՃԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԱՌԱՅԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Սույն հոդվածը նվիրված է պայմանագրի տառացի մեկնաբանման էության բացահայտմանը: Մասնավորապես, հոդվածում վերլուծվում են պայմանագրի տառացի մեկնաբանման ներպետական օրենսդրությունը և դատական պրակտիկան, օտարերկրյա փորձը և դոկտրինալ մոտեցումները: Այդ վերլուծության արդյունքում քննարկվում են տառացի մեկնաբանման թերությունները և դրանց լավագույն լուծումները:

Բանալի բառեր. պայմանագրի տեքստ, տառացի մեկնաբանում, լիտերալիզմ, պայմանագրի խեղաթյուրում, տառացի մեկնաբանման կանխավարկած, մեկնաբանման հիերարխիա:

ДАВИТ ОГАНЯН

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

БУКВАЛЬНОЕ ТОЛКОВАНИЕ ДОГОВОРА

Данная статья посвящена выявлению сущности буквального толкования договора. В частности, в статье анализируются внутригосударственное законодательство и судебная практика, зарубежный опыт и доктринальные подходы буквального толкования договора. В результате данного анализа обсуждаются недостатки буквального толкования и их лучшие решения.

Ключевые слова: текст договора, буквальное толкование, либерализм, искажение договора, презумпция буквального толкования, иерархия толкования.

DAVIT OHANYAN

Postgraduate student of Educational Complex of Police of RA

THE LITERAL INTERPRETATION OF CONTRACT

This article is devoted to the study of the essence of literal interpretation of contract. In the research, particularly, the domestic legislation and judicial practice, foreign experience and doctrinal approaches of literal interpretation have been analyzed. As a result, the author discusses the disadvantages of literal interpretation and their best solutions.

Keywords: text of contract, literal interpretation, literalism, distortion of contract, presumption of literal interpretation, hierarchy of interpretation.

* * *

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման նպատակով պայմանավորված՝ սույն հոդվածը նվիրվել է կանխավարկածների հետազոտության իրականացման հիմքում դրվող մեթոդաբանության ընտրության հարցին: Աշխատանքում քննարկված առարկա է դարձել ոչ թե կոնկրետ մեթոդաբանությունը, այլ իրավաբանական դոկտրինում նշված հիմնահարցի վերաբերյալ գոյություն ունեցող պատկերը: Մասնավորապես, կատարված հետազոտությունը հեղինակին թույլ է տվել գալ եզրահանգման, ըստ որի՝ իրավական կանխավարկածների շուրջ առկա իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև իրավագետները խոսում են միասնական տեսության հայեցակարգի մշակման մասին, սակայն նրանցից և ոչ մեկը չի անդրադառնում այդ նպատակի իրագործման և խնդիրների լուծման մեթոդաբանությանը: Հեղինակը, հոդվածի շրջանակներում լուծելով է իր առջև դրված մասնավոր խնդիրը, հիպոթեզի տեսքով առաջ է քաշել այն գաղափարը, համաձայն որի՝ իրավական կանխավարկածների փիլիսոփայական, սոցիոլոգիական և իրավական ասպեկտների միավորման հնարավորություն ընձեռող մեթոդաբանությունը, որը վերջին հաշվով ուղղված կլինի ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակմանը, կարող է լինել իրավունքի գործիքակազմային տեսությունը:

Բանալի բառեր. իրավունք, իրավահասկացողություն, մեթոդաբանություն, իրավական կանխավարկած, բարեխղճության և ողջամտության կանխավարկածներ, քաղաքացիական կանխավարկած, հերքվող ենթադրություն, իրավանորմ, իրավական սկզբունք, ձևական տրամաբանություն, ձևական-իրավաբանական մեթոդ, իրավունքի գործիքակազմային տեսություն:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 123 2021

ГЕВОРГ ВИРАБЯН

Соискатель кафедры теории и истории государства и права ЕГУ

К ВОПРОСУ О ВЫБОРЕ МЕТОДОЛОГИИ ПРОВЕДЕНИЯ ИССЛЕДОВАНИЯ ПРАВОВЫХ ПРЕЗУМПЦИЙ

С целью разработки концепции общей теории интегрирования отраслевых подходов к правовым презумпциям данная статья посвящена вопросу выбора методологии, лежащей в основе проведения исследования презумпций. В работе предметом обсуждения была не конкретная методология, а существующая картина в юридической доктрине по указанной проблеме. В частности, проведенное исследование позволило автору сделать вывод о том, что нынешняя ситуация с правовыми презумпциями связана с тем, что правоведаы, по сути, говорят о выработке концепции единой теории, но ни один из них не обращается к методологии достижения этой цели и решения проблем. Автор, решая свою частную проблему в рамках статьи, выдвинул идею в виде гипотезы, что методология, позволяющая объединить философские, социологические и правовые аспекты правовых презумпций, которая в конечном итоге будет направлена на разработку концепции общей теории интегрирования отраслевых подходов, может быть инструментальной теорией права.

Ключевые слова: право, правопонимание, методология, правовая презумпция, презумпция добросовестности и разумности, гражданско-правовая презумпция, опровержимое предположение, правовая норма, правовой принцип, формальная логика, формально-юридический метод, инструментальной теории права.

GEVORG VIRABYAN

PhD student of YSU Chair of Theory and History of State and Law

ON THE ISSUE OF CHOOSING THE METHODOLOGY FOR CONDUCTING RESEARCH OF LEGAL PRESUMPTIONS

In order to develop the concept of a general theory for the integration of sectoral approaches to legal presumptions, this article is dedicated to the choice of the methodology underlying the research of presumptions. The subject of the paper has become not the specific methodology, but the existing picture of the issue mentioned in the legal doctrine. In particular, the research allowed the author to conclude that the current situation with legal presumptions is due to the fact that jurists are talking about the development of a general theory, however none of them refers to the methodology of achieving that goal and solving the issues. The author, solving his particular problem within the framework of the article, hypothesized the idea that the methodology which enabled the philosophical, sociological and legal aspects of legal presumptions, which will ultimately be aimed at developing a general theory of the integration of sectoral approaches, can be the instrumental theory of law.

Keywords: Law, legal understanding, methodology, legal presumptions, presumptions of good faith and common sense, civil legal presumption, rebuttable assumption, legal norm, legal principle, formal logic, formal legal method, instrumental theory of law.

ՀԱՅԿ ՇԱՀՐԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՕՐՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննում է իրավունքի ընկալումը օբյեկտիվ և սուբյեկտիվ առումով, ինչպես նաև լուսաբանում է դրանց փոխհարաբերակցության հետ կապված հարցերը:

Բանալի բառեր. իրավունք, օբյեկտիվ իրավունք, սուբյեկտիվ իրավունք, իրավաընկալում, իրավահասկացություն, իրավական համակարգ:

АЙК ШАХБАЗЯН

Соискатель института философии, социологии и права НАН РА

К ВОПРОСУ О ПОНИМАНИЕ ОБЪЕКТИВНОГО И СУБЪЕКТИВНОГО ПРАВА И ИХ ВЗАИМООТНОШЕНИЯ

В данной статье автор обстоятельно рассматривает вопросы восприятия объективного и субъективного права, а также освещает проблемы их взаимоотношения.

Ключевые слова: право, объективное право, субъективное право, правовосприятие, правовопонимание, правовой порядок.

HAYK SHAHBAZYAN

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS of RA

ON THE PERCEPTION OF OBJECTIVE LAW AND SUBJECTIVE LAW AND THEIR INTERRELATIONS

In this article, the author discusses in detail the perception of law in objective and subjective aspects, as well as covers the issues related to their interrelation.

Keywords: law, objective law, subjective law, legal perception, legal understanding, legal system.

* * *

ԱՆԱՀԻՏ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննում է իրավասուբյեկտության բովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև իրավասուբյեկտությունը դիտարկում է որպես իրավունքի սուբյեկտի որակական հատկանիշ:

Բանալի բառեր. իրավունք, իրավունքի սուբյեկտ, իրավասուբյեկտություն, իրավունակություն, գործունակություն:

АНАИТ АЙВАЗЯН

Соискатель Института Философии, Социологии и Права НАН РА

ПРАВОСУБЪЕТНОСТЬ КАК НЕОТЪЕМЛЕМАЯ ЧАСТЬ КАЧЕСТВЕННОГО ПРИЗНАКА СУБЪЕКТА ПРАВА

В данной статье автором обстоятельно рассматриваются содержательные особенности правосубъектности, а также считает, что правосубъектность является существенный признак субъекта права.

Ключевые слова: право, субъект права, правосубъектность, правоспособность, дееспособность.

ANAHIT AYVAZYAN

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS of RA

LEGAL PERSONALITY AS AN INTEGRAL PART OF THE QUALITATIVE FEATURE OF THE SUBJECT'S RIGHT

In this article, the author discusses the substantive features of the legal subjectivity in detail, as well as considers legal subjectivity as a qualitative feature of the legal subject.

Keywords: law, legal subject, legal subjectivity, legal capacity, competence.

* * *

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է ազգային (ներպետական) իրավունքի աղբյուրների (ձևերի) տեսական-մեթոդաբանական հիմնախնդիրները, մասնավորապես՝ իրավունքի աղբյուրների աստիճանակարգությունը և դրանց համակարգը:

Բանալի բառեր. իրավունք, իրավունքի աղբյուրներ, իրավունքի աղբյուրների աստիճանակարգություն, իրավունքի աղբյուրների համակարգ, իրավունքի համակարգ:

ЛЕВОН АРУТЮНЯН

Соискатель института философии, социологии и права НАН РА

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОГО НАЦИОНАЛЬНОГО ИСТОЧНИКОВ ПРАВА.

В данной статье автор обстоятельно рассматривает проблемы национальных источников права, в частности-иерархия источников права и их система.

Ключевые слова: право, источников права, иерархия источников права, система источников права, система права.

LEVON HARUTYUNYAN

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS of RA

PROBLEMS OF THE RELEVANCE OF SOURCES OF LAW

In this article, the author examined in detail the problems associated with the peculiarity of sources of law, in particular, the nature, content and systems of hierarchy.

Keywords: law, sources of law, hierarchy of sources of law, system of law.

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին),
կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր),
Հագենի համալսարանի Գերմանական և եվրոպական
սահմանադրական և վարչական իրավունքի,
ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ,
Բեռլինի տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Ոստիկանության և
անվտանգության կառավարման բաժնի դոցենտ

ԽՆԴԻՐ. «ՄԱՐԵՔ ԼՈՒՅՍԵՐԸ»

Սույն խնդրի միջոցով բացատրվում է, թե վարչական դատարանն ինչպես պետք է ստուգի ՀՀ ՎարչԴՕ 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ճանաչման հայցի հաջողության հեռանկարները, այն է՝ դրա թույլատրելիությունն ու հիմնավորվածությունը: Մասնավորապես, հանգամանալից ներկայացվում են այդ հայցատեսակի թույլատրելիության բոլոր նախապայմանները, բացատրվում է դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը, ինչպես նաև կոնկրետ դեպքի հիման վրա ստուգվում է ճանաչման հայցի հիմնավորվածությունը: Խնդրի հիմնական թեման համայնքային պաշտոնատար անձի կողմից քաղաքական հայտարարություններ անելու թույլատրելիության և դրանցից պաշտպանվելու հնարավորության հարցն է:

ГОР ОГАНЕСЯН

Доктор юридических наук (Берлин),
магистр административных наук (Шпайер),
доцент кафедры немецкого и европейского конституционного и
административного права, а также международного права в Университете Хагена,
доцент кафедры полиции и управления безопасностью
в Берлинском институте экономики и права

ЗАДАЧА: «ВЫКЛЮЧИТЕ СВЕТ!»

На основании решения этой задачи разъясняется, как административный суд должен рассматривать перспективы успеха иска о признании по смыслу ст. 69 (1) Кодекса об административном судопроизводстве, т.е. его допустимость и обоснованность. В частности, подробно представляются все требования приемлемости, разъясняется их значение, а также рассматривается обоснованность иска о признании на основании конкретного дела. Основной темой дела является допустимость политических заявлений муниципальных чиновников и возможность правовой защиты от этих заявлений.

GOR HOYHANNISYAN

Doctor of Laws (Berlin),
Master of Administrative Sciences (Speyer),
Associate Professor at the Chair of German and European Constitutional and
Administrative Law, as well as International Law at the University of Hagen,
Associate Professor at the Department of Police and Security Management
at the Berlin School of Economics and Law

CASE: “LIGHTS OUT!”

This case aims to explain how the Administrative Court must examine the success prospects of a declaratory action in the sense of Art. 69 (1) of the Administrative Procedure Code, that is, its admissibility and merits. In particular, all admissibility requirements are presented in detail, the meaning of each of these is explained, and the merits of the declaratory action are examined on the basis of a concrete case. The main topic of the case is the admissibility of political statements made by municipal officials and the possibilities of legal defense against these statements.

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության ամբիոնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՊՈՌՆԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

Պորնկոության զբաղվելու համար վարչական պատասխանատվության կիրառման և պատասխանատվությունից ազատելու խնդիրները Հայաստանի Հանրապետությունում գրեթե հետազոտված չեն, ինչի տրամաբանական հետևանքն է իրավակիրառ պրակտիկայում համապատասխան բարդությունների առաջացումը: Սույն հետազոտությամբ բացահայտվել են վերը նշված իրավախախտման համար վարչական պատասխանատվության հատկանիշները, մեկնաբանվել են պատասխանատվությունը ծանրացնող, մեղմացնող հանգամանքները և պատասխանատվությունից ազատելու հիմքերը՝ պորնկոությամբ զբաղվելու դեպքերի նկատմամբ կիրառելիության տեսանկյունից:

Բանալի բառեր. պորնկոություն, վարչական պատասխանատվություն, պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ, վարչական պատասխանատվությունից ազատելը:

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

начальник кафедры Гражданского права и
гражданского процесса Академии
образовательного комплекса полиции РА,
кандидат юридических наук, доцент

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ И ОСВОБОЖДЕНИЯ ОТ
ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ЗАНЯТИЕ ПРОСТИТУЦИЕЙ**

Проблемы применения административной ответственности за занятие проституцией и освобождения от нее практически не изучены в Республике Армения, логическим следствием чего является возникновение осложнений в правоприменительной практике. Посредством данного исследования выявлены признаки административной ответственности за совершение вышеуказанного правонарушения, прокомментированы обстоятельства отягчающие и смягчающие ответственность и основания освобождения от ответственности с точки зрения применения по делам о занятии проституцией.

Ключевые слова: проституция, административная ответственность, обстоятельства, отягчающие и смягчающие ответственность, освобождение от административной ответственности.

GEVORG ISRAYELIAN

Head of chair of Civil law and Civil process at
Academy of the Educational Complex of Police of RA,
Candidate of Legal Sciences, Associate professor

**SOME ISSUES OF ADMINISTRATIVE RESPONSIBILITY FOR PROSTITUTION AND
RELEASING FROM RESPONSIBILITY**

The issues of administrative liability for exemption from prostitution is almost not studied in the Republic of Armenia, the logical consequence of which is the creation of corresponding complications in legal practice. This research revealed the features of administrative responsibility for the above-mentioned offense, commented on the aggravating and mitigating circumstances of responsibility, grounds for exemption from the perspective of prostitution.

Keywords: prostitution, responsibility, aggravating and mitigating circumstances, exemption from administrative liability.

ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության
ամբիոնի դոցենտ, իրավաբանական
գիտությունների դոկտոր

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկատուի կողմից հարկային սանկցիաների պահանջների կատարումը նրան չի ազատում հարկային պարտավորությունների կատարումից, քանի որ հարկային սանկցիան և պարտավորության կատարման գործընթացը բնութագրում են հարկատուի կամ նրա գործակալի իրավական կարգավիճակի տարբեր կողմերը:

Հարկային պարտավորության խախտման դեպքում իրավական գործառույթները դրսևորվում են իրավավերականգնողական և տուգանքային բնույթի ներգործության միջոցներով, որոնց նպատակը պետությանը հասցված գույքային (ինչպես և դրամական) վնասի լրիվ վերականգնումն է:

Բանալի բառեր. հարկային պարտավորություն, հարկային սանկցիա, իրավական գործառույթ, սոցիալական գործառույթ, տուգանքային գործառույթ, վերականգնողական գործընթաց

НАЗЕЛИ СУКИАСЯН

Доцент кафедры правоведения и политологии АГЭУ,
доктор юридических наук

ПРАВОВЫЕ ОСОБЕННОСТИ НАЛОГОВОГО ОБЯЗАТЕЛЬСТВА

Выполнение налогоплательщиком требований, связанных с налоговыми санкциями, не освобождает его от налоговых обязательств, поскольку налоговая санкция и процесс выполнения обязательства характеризуют различные стороны правового статуса налогоплательщика или его агента.

В случае нарушения налогового обязательства правовые функции проявляются посредством правосоставительной и штрафной ответственности, целью которой является полное возмещение имущественного (материального) вреда, причиненного государству.

Ключевые слова: налоговое обязательство, налоговая санкция, правовая функция, социальная функция, штрафная функция, процесс восстановления.

NAZELI SUKIASYAN

Associate Professor of the Department of Law and Political Science of ASUE,
Doctor of Law Sciences

LEGAL SPECIFICATIONS OF TAX OBLIGATIONS

Fulfillment of the requirements related to tax sanctions by a taxpayer does not excuse him/her from complying with tax obligations, since the tax sanction and the process of performing the obligation characterize different aspects of the legal status of the taxpayer or his/her agent.

In the case of a violation of the tax obligation, legal functions are manifested through legal restorative and punitive liability, the purpose of which is the full compensation of property (tangible) damage caused to the state.

Keywords: tax liability, tax sanction, legal function, social function, penalty function, recovery process

ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հոդվածի հեղինակը հանգամանորեն քննարկում է զինվորական հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրները, ինչպես նաև վերլուծվում են կանխարգելման հիմնական ուղղությունները:

Բանալի բառեր. զինվորական հանցագործություն, հանցագործությունների կանխարգելում, հանցավորություն, հատուկ սուբյեկտ:

ЛЕОНИД НАГАПЕТАН

Соискатель Института Философии, Социологии и Права НАН РА

ПРОБЛЕМЫ ОБЩЕЙ ПРОФИЛАКТИКИ ВОЙЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ.

В данной статье автором обстоятельно рассматриваются проблемы общей профилактики войсковых преступлений, а также анализируются основные направления противодействие преступлением.

Ключевые слова: профилактика преступление, войсковые преступление, противодействие преступлением, преступность специальный субъект.

LEONID NAHAPETYAN

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS of RA

THE ISSUES OF GENERAL PREVENTION OF MILITARY-CONNECTED CRIMES

In thus article, the author discusses the issues of prevention of military-connected crimes in detail, as well as the main directions of prevention are analyzed.

Keywords: Military-connected crime, crime prevention, criminality, special subject.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև՝ այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Եթե հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, ապա այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները, և հնարավոր է՝ չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պարտավորված չէ կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 123 2021